

2002-2008 թթ.  
ՀԱՅԱՍՏԱՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՂ  
ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Երևան

«Ասողիկ» հրատարակչություն

2008

ՀՏԳ 325

ԳՄԴ 60.7

Ե 899

2002-2008 թթ. Հայաստան վերադարձող միգրանտների հետազոտություն:  
Ե 899 Ա. Մինասյան, Ա. Պողոսյան, Լ. Գևորգյան, Հ. Չոբանյան: – Երևան,  
Ասողիկ, 2008 թ. – 80 էջ

Հետազոտությունը և գրքի տպագրությունն իրականացվել են ԵԱՀԿ Երևանի  
գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

Սույն հրապարակման մեջ ամփոփված են հեղինակների տեսակետները,  
մեկնաբանություններն ու եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել  
ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի տեսակետներին:

ԳՄԴ 60.7

ISBN: 978-9939-50-062-1

© ԵԱՀԿ, 2008

© Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ ՀԿ, 2008

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն հրապարակման  
բովանդակությունը կարող է օգտագործվել և արտատպվել կրթական և այլ ոչ  
կոմերցիոն նպատակներով, եթե նյութի ցանկացած մասն վերարտադրության  
դեպքում ԵԱՀԿ-ն և «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ն նշվում են  
որպես աղբյուր:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

---

<b>ՆԱԽԱԲԱՆ .....</b>	<b>5</b>
<b>ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ...</b>	<b>6</b>
Հետազոտության նախապատմությունը.....	6
Հետազոտության մեթոդաբանությունը.....	7
Օգտագործված հիմնական հասկացությունների սահմանումները.....	9
<b>ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ. ՄԻԳՐԱՑԻԱՆ ԵՎ ՀԵՏԴԱՐՁԸ՝ ԹՎԵՐՈՎ.....</b>	<b>10</b>
2002-2007 թթ. Հայաստանի արտաքին միգրացիոն հոսքերի ընդհանուր վերլուծություն .....	10
Միգրացիայի ցուցանիշները և ուղղությունները.....	11
Միգրանտների սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը.....	14
Զբաղվածությունը և եկամուտը մեկնման երկրներում .....	19
Մշտական և ժամանակավոր հետդարձի ցուցանիշները .....	22
Վերադարձողների սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը.....	26
Վերադարձողների զբաղվածությունը և եկամուտները Հայաստանում .....	28
<b>ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ. ՄԻԳՐԱՑԻԱՆ ԵՎ ՀԵՏԴԱՐՁԸ ԹՎԵՐԻՑ ԱՆԴԻՆ.....</b>	<b>32</b>
Մշտական միգրանտներ.....	32
Աշխատանքային միգրանտներ .....	45
Ուսանող միգրանտներ .....	55
<b>ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ.....</b>	<b>65</b>



# ՆԱԽԱԲԱՆ

---

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանում միգրացիոն իրավիճակի վերաբերյալ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ իրականացված ուսումնասիրությունների շարքի երրորդ աշխատությունը:

Տեղաշարժի ազատության և միգրացիոն կառավարման ծրագրերի շրջանակներում մեր գրասենյակի ֆինանսավորմամբ 2005 և 2007 թթ. կատարված աշխատանքային միգրացիայի հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև պետական և ոչ-կառավարական շահագրգիռ կառույցների հետ այդ հետազոտություններից հետո ունեցած քննարկումները հուշեցին, որ վերադարձողների հոսքերի ու վերաինտեգրման հարցերով համակողմանի հետազոտությունը սիրաժեշտ և հրատապ է:

ԵԱՀԿ Երևանի գրասենյակի պատվերով «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ն իրականացրել է 2002-2008 թ.թ. վերադարձող միգրանտների վերաբերյալ հարցում և վերլուծել ստացված տվյալները: ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալությունը ակտիվ մասնակցություն է ունեցել ծրագրի մշակման և իրականացման ընթացքում, ապահովելով վերադարձին առնչվող առավել կարևոր խնդիրների ներառումը: Արդեն իսկ փորձառություն ունենալով միգրանտների շրջանում հարցումներ անցկացնելու ոլորտում, հետազոտության հեղինակները ջանացել են, որպեսզի այս ուսումնասիրությունը հնարավորինս ստույգ ներկայացնի վերադարձի գործընթացի դինամիկան՝ տրամադրելով արժեքավոր տվյալներ այս ոլորտում քաղաքականություն մշակողներին և լայն հասարակությանը:

Հետազոտությունը նպատակ ունի անհրաժեշտ տեղեկություններ հաղորդել՝ աջակցելու Հայաստանում միգրացիոն քաղաքականության և օրենսդրության բարեփոխմանը, որը կնպաստի միգրացիայի կառավարման առավել արդյունավետ մեխանիզմների ստեղծմանը: Հետազոտությունը տրամադրում է Հայաստանում վերադարձի և վերաինտեգրման արժանահավատ պատկեր: Սա կօգնի նաև հասկանալ հետագա քայլերի առաջնահերթությունը, ինչպես նաև որոշել, թե որոնք են այն ոլորտները, որոնցում մեր գրասենյակի մասնակցությունն առավել օգտակար կլինի:

Սվեն Հոլդար  
*Ժողովրդավարացման ծրագրերի պատասխանատու*  
*Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության*  
*Երևանի գրասենյակ*  
*Դեկտեմբեր, 2008*

# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

---

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» (ԱՍՏ) կազմակերպությունը, որը կիրառական սոցիալական հետազոտություններով զբաղվող անկախ կենտրոն է, 2005 և 2007 թվականներին պատվերներ էր ստացել ԵԱՀԿ Երևանի գրասենյակից՝ անցկացնելու «Աշխատանքային միգրացիան Հայաստանից 2002-2005 թթ.» և «Աշխատանքային միգրացիան Հայաստանից 2005-2007 թթ.» ազգային հետազոտությունները: Նշված հետազոտությունների արդյունքները հրատարակվել են, ներկայացվել և քննարկվել պետական և ոչ պետական տարբեր շահագրգիռ կողմերի հետ:

Անցկացված հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև պետական և ոչ պետական շահագրգիռ կառույցների հետ քննարկումները ցույց տվեցին, որ անհրաժեշտ է իրականացնել հետդարձի հոսքերի և վերահսկողության խնդիրներին նվիրված ամբողջական ուսումնասիրություն: Այդ կապակցությամբ ԵԱՀԿ Երևանի գրասենյակը ֆինանսավորեց 2002-2008 թթ. Հայաստան վերադարձող միգրանտների ուսումնասիրությունը, որն իրականացվեց 2008 թ. մարտ-օգոստոս ամիսներին:

Հետազոտության ընդհանուր նպատակն էր օժանդակել միգրացիայի և հետդարձի ոլորտում քաղաքականության մշակման գործընթացին: Վերադարձողների վերահսկողումը հեշտացնելու, ինչպես նաև նրանց միգրացիոն փորձը հայրենի երկրի զարգացմանը ծառայեցնելու քաղաքականության մշակմանը սատարելու նպատակով անհրաժեշտ էր հստակորեն պատասխանել մի շարք հարցադրումների, այդ թվում.

- ա) Ինչպիսի՞ն է Հայաստան հետդարձի ցուցանիշը վերջին վեց տարիներին. արդյո՞ք խոսքը եզակի դեպքերի, թե՞ զգալի չափերի հասնող հոսքերի մասին է, ինչպիսի՞ն են հետդարձի ցուցանիշները նույն ժամանակահատվածում արտագաղթի ցուցանիշների համեմատ,
- բ) Ինչպիսի՞ն է վերադարձողների սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը, մասնավորապես՝ արտագաղթողների սոցիալ-ժողովրդագրական նկարագրի համեմատությամբ,
- գ) Որո՞նք են հետդարձի վանող և ձգող գործոնները,

- դ) Որքան հեշտությամբ են վերադարձողները վերահստագրվում Հայաստանում. որո՞նք են նրանց հիմնական խնդիրներն այդ առնչությամբ,
- ե) Ինչպե՞ս են վերադարձողները գնահատում իրենց միգրացիոն փորձը, և ինչպե՞ս են այն կիրառելու Հայաստանում,
- զ) Հետդարձը մշտական է, թե՞ ժամանակավոր. վերադարձողները ծրագրո՞ւմ են արդյոք հեռանալ Հայաստանից մոտ ապագայում, ինչու՞ այո կամ ինչու՞ ոչ:

Որակական և քանակական հետազոտության մեթոդների համադրության ճանապարհով, վերադարձողների վերաբերյալ 2008 թ. հետազոտության արդյունքում հնարավոր եղավ պատասխանել այդ և մի շարք այլ հարցերի՝ պատկերացում կազմելով 2002-2007 թթ. Հայաստան հետդարձի հոսքերի մասին: Ուստի, լիահույս ենք, որ քաղաքականություն մշակողները և հանրությունն ընդհանրապես սույն հետազոտությունից կստանան արժեքավոր տեղեկություններ:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության շրջանակներում համադրվել են տվյալների հավաքման և վերլուծության քանակական և որակական մեթոդները: **Հետազոտության քանակական քաղաքրիչը՝** տնային տնտեսությունների ազգային քանակական հարցումը, թույլ է տվել ներկայացուցչական տվյալներ հավաքել միգրացիայի, ինչպես նաև ժամանակավոր և մշտական հետդարձի ցուցանիշների մասին՝ բաշխված ըստ ծագման մարզերի, մեկնման երկրների, միգրանտների և վերադարձողների սոցիալ-ժողովրդագրական նկարագրի, հայ միգրանտների՝ արտերկրում և Հայաստանում ունեցած զբաղվածության և եկամուտների, ինչպես նաև վերադարձողների՝ կրկին արտագաղթելու ծրագրերի:

Հետազոտությունն անցկացվել է 2008 թ. մարտին և ներառել է 2,500 տնային տնտեսություններ: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում տնային տնտեսությունների ընդհանուր թիվը (778,666 տնային տնտեսություն 2001 թ. մարդահամարի տվյալների համաձայն), ընտրանքի այս ծավալը երաշխավորում է 2.0% սահմանային սխալ՝ 95% վստահության մակարդակով: Տնային տնտեսությունների ընտրության համար կիրառվել է աշխարհագրական շերտավորմամբ պատահական ընտրանքի մեթոդաբանությունը: Հետազոտությունը ներառել է Երևանը, 21 մարզային քաղաքներ և 43 գյուղական

բնակավայրեր, որոնք ընտրվել են պատահականորեն՝ չափին համամասն հավանականությամբ:

Հետազոտության գործիքը (ստանդարտացված հարցաթերթը) նախագծվել է ԵԱՀԿ Երևանի գրասենյակի, Աշխատանքի միջազգային կազմակերպության և համապատասխան պետական գերատեսչությունների հետ քննարկումների արդյունքում: Հարցազրույցներն անցկացվել են տնային տնտեսության գլխավորի հետ, ով տեղեկություններ է տրամադրել տնային տնտեսության բոլոր չափահաս (16 տարեկան և բարձր) անդամների մասին: Տվյալների վերջնական շտեմարանը տեղեկություններ է պարունակել 8,561 անձի մասին: Այսպիսով, ընտրանքի ստացված ծավալը թույլ է տվել հետազոտության տվյալները տարածել Հայաստանի 16 տարեկան և բարձր մշտական բնակչության վրա (2,367,105 բնակիչ 2001 թ. մարդահամարի տվյալներով)՝ 1.1% սահմանային սխալով:

**Հետազոտության որակական բաղադրիչը**, որը ներառել է խորին հարցազրույցներ ժամանակավոր և մշտապես վերադարձողների հետ, թույլ է տվել պարզել վերադարձողների կարծիքները և մոտեցումները գործընթացի տարբեր առանձնահատկությունների վերաբերյալ, բացահայտել նրանց հետդարձի դրդապատճառները, մտահոգությունները և հետդարձի և/կամ վերաինտեգրման ընթացքում առաջացող խնդիրները, ինչպես նաև՝ գնահատել նրանց միգրացիոն փորձը: Առանձնակի ուշադրություն է դարձվել հայրենի երկրին վերադարձողների բերած օգուտին՝ ներդրումների, ստեղծված աշխատատեղերի, փոխանցվող հմտությունների և տեխնոլոգիաների իմաստով:

Խորին հարցազրույցներ են անցկացվել ընդհանուր թվով 106 վերադարձողների հետ, որոնք ներկայացրել են երեք տարբեր խմբեր. ա) մարդիկ, ովքեր Հայաստանից մեկնել են՝ նպատակ ունենալով մշտական բնակություն հաստատել արտերկրում, սակայն ինչ-ինչ պատճառներով վերադարձել են Հայաստան 2002-2007 թթ. ժամանակահատվածում, բ) աշխատանքային միգրանտներ, ովքեր 3 կամ ավելի տարի անընդմեջ մեկնել են Հայաստանից արտերկրում աշխատելու նպատակով, սակայն 2002-2007 թթ. ընթացքում որոշել են այլևս չմեկնել արտերկիր աշխատելու, և գ) ուսանող միգրանտներ, ովքեր վերադարձել են Հայաստան 2002-2007 թթ. ժամանակահատվածում: Փորձել ենք ընտրանքում ապահովել տարբեր տարիքային, սեռային և մասնագիտական խմբերի ներկայացվածությունը, միաժամանակ վերադարձողների թվում ներառելով Հայաստանի տարբեր մարզերի բնակիչների և տարբեր պետություններից վերադարձողների:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Մույն հետազոտության համատեքստում «աշխատանքային միգրանտներն» այն անձինք են, ովքեր մեկնել են Հայաստանից՝ արտերկրում աշխատանք գտնելու նպատակով՝ անկախ այնտեղ աշխատանք գտնելու կամ չգտնելու հանգամանքից: «Մշտական միգրանտ» է համարվել այն անձը, ով մեկնել է Հայաստանից՝ արտերկրում մշտական բնակություն հաստատելու նպատակով՝ անկախ այդ հարցում նրա հաջողության հասնելու կամ չհասնելու հանգամանքից: «Ուսանող միգրանտ» է նա, ով մեկնել է արտերկիր՝ սովորելու (այս խմբի մեջ չեն մտնում նրանք, ովքեր մեկնել են արտերկիր կարճաժամկետ վերապատրաստումների):

«Վերադարձողներ» են այն ժամանակավոր կամ մշտական միգրանտները, ովքեր մեկնել են Հայաստանից՝ արտերկրում բնակվելու, աշխատելու կամ սովորելու նպատակով և 2002-2007 թթ. ժամանակահատվածում առնվազն մեկ անգամ վերադարձել են Հայաստան: «Մշտապես վերադարձողները» այն միգրանտներն են, ովքեր վերադարձել են Հայաստան և մտադիր չեն 2008 թ. մեկնել Հայաստանից, իսկ «Ժամանակավորապես վերադարձողները» նրանք են, ովքեր կրկին մեկնելու մտադրություն ունենին:

# ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ. ՄԻԳՐԱՑԻԱՆ ԵՎ ՀԵՏԴԱՐՁԸ՝ ԹՎԵՐՈՎ

---

## 2002-2007 թթ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության շնորհիվ հնարավոր եղավ հաշվարկել, որ 2002-2007 թթ. ժամանակահատվածում արտաքին միգրացիոն գործընթացներին մասնակցած անձանց ընդհանուր թիվը կազմել է 230,000 ± 15,000, կամ Հայաստանի մշտական բնակչության (16 տարեկան և բարձր) 9.7% ± 0.6%-ը:<sup>1</sup> Այդ միգրանտների մոտ 38%-ը (մոտ 85,000 հոգի) 2002 թ. հունվարի 1-ի դրությամբ արդեն Հայաստանում չէր:<sup>2</sup>

Տվյալ ժամանակահատվածում (2002-2007 թթ.) յուրաքանչյուր միգրանտ միջինը 2 անգամ ճանապարհորդել է արտերկիր, որը նշանակում է, որ վերջին վեց տարիներին տեղի է ունեցել Հայաստանից էմիգրացիայի մոտ 460,000 դեպք:<sup>3</sup>

Բացահայտվել են միգրացիոն հոսքերի հետևյալ տեսակները. աշխատանքային միգրացիա, մշտական միգրացիա, ուսանողների միգրացիա և միգրացիա այլ նպատակներով (վերջին խմբի միգրանտները առավել հաճախ ժամանակավոր բնակություն են հաստատում ազգականների մոտ): Վերադարձողների 2008 թ. հետազոտության արդյունքում ստացված տվյալներով հաստատվել է, որ 2002-2007 թթ. ժամանակահատվածում Հայաստանի արտաքին միգրացիոն հոսքերի գերակշիռ մասը բաժին է ընկել աշխատանքային միգրանտներին: Նշված ժամանակահատվածում միգրանտների ընդհանուր թվի 94%-ը կազմել են աշխատանքային միգրանտները. ընդամենը 3%-ն է մեկնել Հայաստանից՝

---

<sup>1</sup> Այսուհետ, զեկույցի տեքստում օգտագործված բոլոր գնահատականները հիմնված են Հայաստանի մշտական բնակչության վերաբերյալ 2001 թ. մարդահամարի տվյալների վրա: Ըստ այդ տվյալների, Հայաստանի մշտական բնակչությունը (16 տարեկան և բարձր) կազմել է 2,367,105:

<sup>2</sup> Բնականաբար, հետազոտությունը չէր կարող ընդգրկել այն բազմաթիվ ընտանիքները, որոնք մեկնել են Հայաստանից 1990-ականների սկզբներին: Հաշվարկված 85,000 միգրանտներն այն տնային տնտեսություններից են, որոնց առնվազն մեկ անդամը դեռ Հայաստանում է գտնվում:

<sup>3</sup> Դ-ա ներառում է հաշվարկված այն 85,000 մեկնումները, որոնք տեղի են ունեցել 2002 թ. հունվարի 1-ից առաջ:

արտերկրում մշտական բնակություն հաստատելու, 2%-ը՝ արտերկրում սովորելու նպատակով, իսկ 2%-ը՝ այլ նպատակներով:<sup>4</sup> Ի հակադրություն, 2002 թվականից առաջ Հայաստանից մեկնածների թվում 32% է կազմել այն միգրանտների մասնաբաժինը, ովքեր մտադրություն են ունեցել մշտական բնակություն հաստատել ժամանման երկրում:

Գա նշանակում է, որ իրավիճակն էականորեն փոխվել է 1990-ականների սկզբի համեմատ, երբ տնտեսական և սոցիալական իրավիճակի վատթարացման հետևանքով 800,000-ից մինչև 1,000,000 մարդ մշտապես արտագաղթեց Հայաստանից՝ միանալով Ռուսաստանում, Ուկրաինայում, ԱՄՆ-ում և Արևմտյան ու Արևելյան Եվրոպայի երկրներում առկա խոշոր սփյուռքահայ համայնքներին:

## ՄԻԳՐԱՑԻԱՑԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2002 թ. հունվար – 2007 թ. դեկտեմբեր ժամանակահատվածում Հայաստանի տնային տնտեսությունների մոտ 20%-ը մասնակցել է **աշխատանքային միգրացիայի** գործընթացին: Այդ ընտանիքների ճնշող մեծամասնության (ավելի քան երկու երրորդի) պարագայում արտերկիր աշխատանքի էր մեկնել ընտանիքի մեկ անդամ, մյուս ընտանիքներից հիմնականում մեկնել էին երկուական աշխատանքային միգրանտներ, մինչդեռ երեք միգրանտով ընտանիքների թիվը վիճակագրական առումով նշանակալից չէր: Աշխատանքային միգրացիայի փաստացի ցուցանիշը, այսինքն՝ 2002-2007 թթ. աշխատանքային միգրացիայի գործընթացին մասնակից բնակչության տոկոսային բաժինը, կազմել է 7.4% ± 0.6%: Աշխատանքային միգրանտների բացարձակ թիվը եղել է 162,000-189,000 միջակայքում: Միգրանտների մեծամասնությունն աշխատանքային միգրացիայի գործընթացին մասնակցել է ավելի քան մեկ անգամ: 2002 թ. հունվարից սկսած, յուրաքանչյուր աշխատանքային միգրանտ ունեցել է միջին հաշվով 2.5 ուղևորություն արտերկիր:

2002 – 2007 թթ. Հայաստանի տնային տնտեսությունների մոտ 3%-ում անդամներից առնվազն մեկը մեկնել էր Հայաստանից՝ **արտերկրում մշտական բնակություն** հաստատելու նպատակով: Ի տարբերություն աշխատանքային միգրացիայի, մշտական միգրացիային սովորաբար մասնակցում է ընտանիքի մեկից ավելի անդամ: Այդ ընտանիքների 60%-ն ունեցել է երկու կամ ավելի մշտական միգրանտ: Հաշվարկվել է, որ մշտական միգրացիայի ցուցանիշը,

<sup>4</sup> Տոկոսները հաշվարկված են ճանապարհորդությունների ընդհանուր թվի նկատմամբ:

այսինքն՝ արտերկրում մշտական բնակություն հաստատելու նպատակով Հայաստանից մեկնած բնակչության տոկոսային բաժինը կազմում է Հայաստանի մշտական բնակչության 1.3% ± 0.2%: Բացարձակ թվերով դա նշանակում է, որ մշտական միգրացիայի դիմել (կամ նման մտադրություն ունեցել) է 25,000 - 37,000 հոգի:


**Ուսանողների միգրացիայի** գործընթացին մասնակցել է Հայաստանի տնային տնտեսությունների 1%-ից պակասը: Թեև դեպքերի մեծ մասում (60%) ընտանիքի անդամներից միայն մեկն էր մեկնել արտերկիր սովորելու, նրանց միգրացիոն փորձը հաճախ բազմապատկիչի ազդեցություն էր ունեցել՝ այն իմաստով, որ ընտանիքի անդամներից մեկը կամ մի քանիսը հետագայում նույնպես ներգրավվել էին ուսանողական միգրացիայի գործընթացին: Ուսանող միգրանտների բացարձակ թիվը կազմել է 7000 ± 3000 հոգի կամ Հայաստանի բնակչության 0.3% ± 0.1%-ը:

**Աղյուսակ 1. Միգրացիայի վիճակագրությունը**

Միգրացիոն հոսք	Ներգրավված տնային տնտեսությունների տոկոսը	Ներգրավված տնային տնտեսությունների բացարձակ թիվը	Միգրացիայի տեմպը	Միգրանտների բացարձակ թիվը
Աշխատանքային միգրացիա	20.2% ± 1.6%	157,000 ± 12,000	7.4%±0.6%	175,000±13,000
Մշտական միգրացիա	2.8% ± 0.7%	22,000 ± 5,000	1.3±0.2%	31,000 ± 6,000
Ուսանողական միգրացիա	0.8% ± 0.4%	6,000 ± 3,000	0.3 ± 0.1%	7,000 ± 3,000

Միգրացիոն երեք հիմնական հոսքերի կառուցվածքն էապես տարբերվում է **միգրանտների ծագման վայրի** առումով: Աշխատանքային միգրացիայի հոսքի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցրել Հայաստանի գյուղական բնակչությունը (44%): Աշխատանքային միգրանտների 23%-ը եղել են Երևանի, իսկ մեկ երրորդը՝ այլ քաղաքային բնակավայրերի բնակիչներ: Մշտական միգրանտների 45%-ը եղել են մարզային քաղաքներից, 28%-ը՝ Երևանից, իսկ 27%-ը՝ գյուղական բնակավայրերից: Ուսանող միգրանտների մեծ մասը (58%) եղել են Երևանի բնակիչներ, և միայն 8%-ն են եղել գյուղական բնակավայրերից: Հաջորդ էջում՝ գծապատկեր 1-ում համեմատված են աշխատանքային միգրանտների, մշտական միգրանտների և ուսանող միգրանտների մասնաբաժինները Երևանի, այլ քաղաքների և գյուղերի չափահաս բնակիչների թվում:

**Գծապատկեր 1. Միգրացիայի տեմպն ըստ բնակավայրի տիպի**



Թեև հարցվողների թիվը Հայաստանի մարզերից յուրաքանչյուրում բավարար չէր ճշգրտության բարձր մակարդակ ապահովելու համար, այնուհանդերձ, կարելի է կատարել որոշ եզրահանգումներ: Այսպես, պարզվել է, որ աշխատանքային միգրացիայի տեմպն ամենաբարձրն է Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնում, Վայոց Ձորում և Տավուշում: Մշտական միգրացիայի մեջ առավել ակտիվ են եղել Գեղարքունիքը և Տավուշը, մինչդեռ Երևանից և Կոտայքից են ուսանող միգրանտների մեծ մասը: Ընդհանուր առմամբ, միգրացիոն ակտիվության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Գեղարքունիքում. 2002-2007 թթ. ընթացքում արտաքին միգրացիոն գործընթացներին մասնակցել է այս մարզի բնակչության 15%-ը:


**Աղյուսակ 2. Միգրացիայի փճակագրությունը՝ ըստ մարզերի (ըստ հետազոտության արդյունքների)**

Մարզ	Մշտական միգրացիա		Աշխատանքային միգրացիա		Ուսանողական միգրացիա		Ընդամենը	
	Միգրացիայի տեմպ	Միգրանտների թիվ	Միգրացիայի տեմպ	Միգրանտների թիվ	Միգրացիայի տեմպ	Միգրանտների թիվ	Միգրացիայի տեմպ	Միգրանտների թիվ
Երևան	1.1	8,800	4.9	40,200	0.5	4,000	6.5	53,000
Արագածոտն	0.9	900	11.1	11,300	0.0	0	12.0	12,200
Արարատ	1.8	3,700	7.5	15,100	0.1	300	9.5	19,100
Արմավիր	1.8	3,700	6.1	12,400	0.2	500	8.2	16,600
Գեղարքունիք	2.7	4,800	11.9	20,900	0.3	500	15.0	26,200
Կոտայք	0.4	1,400	6.2	12,400	0.7	1,400	7.6	15,200
Լոռի	0.7	900	8.1	17,100	0.0	0	8.5	18,000

Մարզ	Մշտական միգրացիա		Աշխատանքային միգրացիա		Ուսանողական միգրացիա		Ընդամենը	
	Միգրացիայի տեմպ	Միգրանտների թիվ	Միգրացիայի տեմպ	Միգրանտների թիվ	Միգրացիայի տեմպ	Միգրանտների թիվ	Միգրացիայի տեմպ	Միգրանտների թիվ
Շիրակ	0.8	1,700	13.6	28,300	0.0	0	14.4	30,000
Սյունիք	1.8	2,000	2.4	2,700	0.3	300	4.4	5,000
Տավուշ	2.8	2,800	10.0	9,900	0.0	0	12.8	12,700
Վայոց Ձոր	0.7	300	11.4	4,700	0.0	0	12.1	5,000
<b>Ընդամենը</b>	<b>1.3</b>	<b>31,000</b>	<b>7.4</b>	<b>175,000</b>	<b>0.3</b>	<b>7,000</b>	<b>9.7</b>	<b>230,000</b>

Հետազոտության շրջանակներում հնարավոր եղավ համեմատել մշտական միգրանտների, աշխատանքային միգրանտների և ուսանող միգրանտների մեկնման երկրները: Բոլոր այդ խմբերում ամենաշատ միգրանտներ ուղևորվել են Ռուսաստանի Դաշնություն: Աշխատանքային միգրանտների 96%-ն ուղևորվել է Ռուսաստան: Այնպես է, որ մշտական միգրանտների հիմնական մասը նույնպես ուղևորվել է Ռուսաստան. նրանց 71%-ը բնակություն է հաստատել Ռուսաստանում: Իրավիճակը նույնչափ միանշանակ չէ ուսանողների միգրացիայի պարագայում. ուսանող միգրանտների կեսից ավելին (56%) մեկնել են Ռուսաստան՝ սովորելու, սակայն 26%-ը մեկնել է Եվրոպական միության երկրներ:

**Գծապատկեր 2. Ուղևորության երկրները**



**ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**


Միգրանտների հիմնական սոցիալ-ժողովրդագրական հատկանիշները (սեռ, տարիք, կրթության մակարդակ և մասնագիտություն) քննարկելիս շատ կարևոր է

դրանք համեմատել ընդհանուր բնակչության հատկանիշների հետ: Այդ կերպ հնարավոր կլինի ոչ միայն հասկանալ, թե ովքեր են միգրանտները, այլ նաև՝ գնահատել միգրացիայի ընթացիկ և ապագայում հնարավոր ազդեցությունը Հայաստանի ժողովրդագրական վիճակի և աշխատաշուկայի վրա:

Հայտնի փաստ է, որ Հայաստանից մեկնող միգրանտների ճնշող մեծամասնությունը տղամարդիկ են: Հետազոտության արդյունքում պարզվեց, որ բոլոր միգրանտների 79%-ը, աշխատանքային միգրանտների 90%-ը և մշտական միգրանտների 51%-ը տղամարդիկ են: Կանայք գերակշռում են ուսանող միգրանտների թվում. այդ հոսքը, սակայն, չափազանց փոքր է և չի կարող ազդել ընդհանուր համամասնությունների վրա: 2001 թվականի մարդահամարի տվյալներով, տղամարդիկ կազմել են Հայաստանի մշտական բնակչության (16 տարեկան և բարձր) 47%-ը: Մեր հետազոտությամբ հաստատվեց, որ այդ համամասնությունը պահպանվել է 2008 թվականի սկզբի դրությամբ, միաժամանակ նաև բացահայտվեց, որ գենդերային առումով ոչ հավասարակշիռ արտագաղթի պատճառով Հայաստանի առկա բնակչության թվում տղամարդկանց մասնաբաժինը նվազել է մինչև 42-44%:

Մյուս կողմից, միջին տարիքի բնակչության (25-54 տարեկաններ) բարձր միգրացիոն ակտիվությունն անդրադառնում է Հայաստանի բնակչության տարիքային կառուցվածքի վրա: Միգրանտների թվում այս տարիքային խմբի մասնաբաժինը կազմել է 79%, մինչդեռ մնացած բնակչության կազմում նույն ցուցանիշն ընդամենը 51% է: Միգրանտների միջին տարիքը 38 տարեկան է, իսկ 2002-2007 թթ. արտաքին միգրացիոն գործընթացներին չմասնակցած անձանց միջին տարիքը՝ 44:

**Գծապատկեր 3. Միգրանտների և միգրացիային չմասնակցածների տարիքային կազմը**




	16-24	25-34	35-44	45-54	55-64	65+
■ Միգրանտներ	12,1	35,0	20,7	22,9	6,4	2,9
■ Միգրացիային չմասնակցածներ	20,2	18,4	14,2	18,4	12,4	16,4

Ինչ վերաբերում է կրթության մակարդակին, ապա արտաքին միգրացիոն գործընթացներին ներգրավվել է միջնակարգ կրթություն ունեցողների 11%-ը, մասնագիտական կրթություն ունեցողների 10%-ը և բարձրագույն կրթություն ունեցողների 9%-ը:

Հաշվարկվել է, որ Հայաստանի մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող չափահաս բնակիչների ընդհանուր թիվը կազմում է մոտ 900,000 ± 25,000: Գծապատկեր 4-ում ներկայացված է հնուտ աշխատուժի բաշխվածքն ըստ ընդհանուր մասնագիտական խմբերի:

**Գծապատկեր 4. 16 և բարձր տարիքի բնակչության բաշխումն ըստ մասնագիտական խմբերի**



Հետազոտության արդյունքում պարզվեց, որ 2002-2007 թթ. ժամանակահատվածում հնուտ աշխատուժի մոտ 10%-ը, կամ 90,000 հոգի, Հայաստանից մեկնել են՝ արտերկրում ավելի լավ հնարավորություններ գտնելու նպատակով: Աղյուսակ 3-ում (տե՛ս հաջորդ էջը), ամփոփ ներկայացված են տվյալներ հիմնական մասնագիտական խմբերի միգրացիոն ակտիվության վերաբերյալ:



**Աղյուսակ 3. Հիմնական մասնագիտական խմբերի միգրացիոն ակտիվությունը (ըստ հետազոտության արդյունքների)**

Մասնագիտական խումբ	Հաշվարկված բացարձակ քիվը	Գործազրկության մակարդակը Հայաստանում	Միգրացիայի տեմպը	Միգրանտների հաշվարկված բացարձակ քիվը
Տնտեսագիտություն	146,000	30%	7.5	11,000
Բժշկություն	115,000	32%	5.5	6,000
Մանկավարժություն	104,000	25%	6.5	7,000
Հումանիտար և հասարակական գիտություններ	101,000	28%	9.1	9,000
Բնական գիտություններ	67,000	21%	7.8	5,000
Ճարտարապետություն և շինարարություն	59,000	24%	18.5	11,000
Մեխանիկական ինժեներիա	51,000	24%	13.7	7,000
Արվեստ և մշակույթ	50,000	31%	10.9	5,000
Ազրոնոմիա	40,000	25%	10.5	4,000
Էլեկտրական ինժեներիա	28,000	21%	12.3	3,000
Էլեկտրոնային և ռադիո ինժեներիա	26,000	33%	12.0	3,000
Տեքստիլ և թեթև արդյունաբերություն	26,000	40%	6.0	2,000
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	21,000	20%	6.2	1,000
Տրանսպորտ	17,000	19%	14.9	3,000
Սննդի տեխնոլոգիա	15,000	42%	5.1	1,000-ից պակաս

Վերոհիշյալ տվյալներից կարելի է հանգել մի կարևոր եզրակացության. միգրացիոն ակտիվությունը կախված չէ միայն աշխատուժի ներկատական շուկայում որոշակի մասնագիտական խմբերի մրցունակությունից:

Այսպես. ճարտարապետության և շինարարության, ինժեներիայի և տրանսպորտի մասնագետների պարագայում միգրացիոն բարձր ակտիվությունը պայմանավորված է մեկնման երկրներում, հատկապես Ռուսաստանում, հմուտ աշխատուժի նկատմամբ պահանջարկի առանձնահատկություններով: Թեև այդ մասնագետների մեծ մասի նկատմամբ պահանջարկը Հայաստանի աշխատաշուկայում վերջերս մեծացել է, նրանց՝ արտերկիր մեկնելու որոշումը հիմնականում պայմանավորվել է արտերկրում աշխատանքի ավելի բարվոք պայմաններով (հատկապես աշխատավարձերի ավելի բարձր մակարդակով):

Արտերկրի աշխատուժի շուկաներից ստացվող ազդակները, կարծես, ավելի թույլ են ազդում Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) մասնագետների վրա: SS մասնագետների ցածր միգրացիոն ակտիվության պատճառներից մեկն այն է, որ SS ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետների համար առկա է մրցունակ տեղական պահանջարկ: SS մասնագետները նախընտրում են մնալ Հայաստանում նաև այն պատճառով, որ, ի տարբերություն այլ ոլորտների, ինչպիսիք են շինարարությունը և խնամքի ծառայությունները, SS ծառայությունները տեղայնացված չեն, այսինքն՝ կարող են կատարվել դրսից ստացվող պատվերներով, և հայաստանյան SS ընկերություններից շատերն աշխատում են արտերկրի հաճախորդների համար:

Տնտեսագետների, բժիշկների, ուսուցիչների և հումանիտար ու հասարակական գիտությունների մասնագետների (հիմնականում՝ իրավաբանների) միգրացիոն չափավոր ակտիվության պատճառներն այլ են: Այդ չորս խմբերին բաժին է ընկնում Հայաստանի հմուտ աշխատուժի 52%-ը, և Հայաստանի աշխատաշուկան ակնհայտորեն չի կարող կլանել առկա ողջ աշխատուժը, որի արտացոլումը Հայաստանում այդ մասնագետների շրջանում գործազրկության բարձր մակարդակն է: Այնուհանդերձ, մեկնման հիմնական երկրների աշխատաշուկաները նույնպես պատրաստ չեն ընդունել նրանցից շատերին: Հետևաբար, այդ մասնագետներից ոմանք որոշում են կատարել պակաս հմտություններ պահանջող աշխատատեղեր արտերկրի շուկաներում:

Մյուս կողմից, սննդի տեխնոլոգիաների, տեքստիլի և թեթև արդյունաբերության մասնագետների ցածր միգրացիոն ակտիվության հիմնական պատճառն այդ մասնագիտական խմբերի սեռային կազմն է. այդ մասնագետների ճնշող մեծամասնությունը կանայք են: Թեև նրանց ավելի քան 40%-ը Հայաստանում գործազուրկ են, արտերկրում աշխատանք գտնելու հնարավորությունները նրանց համար խիստ սահմանափակ են:<sup>5</sup>

Աշխատանքի միջազգային կազմակերպության պատվերով 2008 թ. ապրիլին Հայաստանում իրականացված «Հայաստան. միգրացիան և զարգացումը» ուսումնասիրության շրջանակներում Հայաստանի հիմնական գործատուների հարցազրույցներից պարզվել է, որ, բացառությամբ շինարարության ոլորտի, հմուտ աշխատողների բացակայությունը Հայաստանում մինչ օրս, ըստ

---

<sup>5</sup> Հմուտ աշխատուժի արտագաղթի մասին լրացուցիչ վերլուծությունների համար տես Աշխատանքի միջազգային կազմակերպության պատվերով իրականացված «Հայաստան. միգրացիան և զարգացումը» ուսումնասիրությունը, էջեր 19-46:

երևույթին, չի հանգեցնում արտադրանքի որակի վատթարացմանը և/կամ քանակի նվազեցմանը: Այնուհանդերձ, իրավիճակը կարող է ժամանակի ընթացքում փոխվել, և հետազոտության արդյունքները պետք է քաղաքականություն մշակողներին ահազանգեն հմուտ աշխատուժի արտագաղթի հնարավոր բացասական հետևանքների մասին:

## ՋԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԿԱՄՈՒՏԸ ՄԵԿՆՄԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ինչպես արդեն նշվել է սույն զեկույցի տեքստում, հետազոտության արդյունքները վկայում են, որ 2002-2007 թթ. ժամանակահատվածում արձանագրվել է Հայաստանից արտագաղթի մոտ 460,000 դեպք: Դեպքերի 90%-ի պարագայում միգրանտներն արտերկրում գտել են աշխատանք: Ջրադվածության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է աշխատանքային միգրանտների շրջանում. նրանց միայն 4%-ը չի կարողացել աշխատանք գտնել ժամանման երկրում: Թեև մշտական միգրանտների միգրացիայի հիմնական պատճառն աշխատանք գտնելը չի եղել, նրանց մեծ մասը (60%) կարողացել է նաև աշխատանք գտնել: Ջրադվածության ցուցանիշը բավական ցածր է ուսանող միգրանտների շրջանում (28%): Սա քիչ թե շատ հասկանալի է, հաշվի առնելով ուսումը և աշխատանքը համադրելու կամ ավարտելուց հետո ընդունող երկրում կացությունը երկարաձգելու հետ կապված դժվարությունները:<sup>6</sup>


Միգրանտների ճնշող մեծամասնությունը (80%) ստանձնել է որակավորված կամ չորակավորված կապույտ օձիքավորի աշխատանք (համապատասխանաբար 57% և 24%): Ավելին, միգրանտների 70%-ն աշխատել է շինարարության ոլորտում: Շատ ավելի սակավաթիվ են եղել այն միգրանտները, ովքեր աշխատանքի են անցել առևտրի (10%), տրանսպորտի (6%) կամ արտադրության (5%) ոլորտներում, կամ մատուցել են մասնավոր ծառայություններ, օրինակ՝ խնամել են երեխաների կամ տարեցների (4%): Այլ կերպ ասած, հմուտ միգրանտների մեծամասնությունը, բացառությամբ ինժեներների, շինարարության և տրանսպորտի մասնագետների, չի կարողացել իրենց մասնագիտական որակավորմանը համապատասխան աշխատանք գտնել: Դրա պատճառով սահմանափակվում է այն գիտելիքների, հմտությունների և տեխնոլոգիաների շրջանակը, որոնք կարող էին փոխադրվել Հայաստան. հետևաբար, սահմանափակվում է նաև միգրացիայի՝ զարգացման գործընթացին նպաստելու ներուժը:

<sup>6</sup> Ուսանողների միգրացիայի մասին լրացուցիչ վերլուծությունների համար տես սույն զեկույցի երկրորդ գլուխը՝ «Միգրացիան և հետդարձը. քվերից անդին»:

Այսուհանդերձ, հասկանալի է, որ միգրանտների մեծ մասը պատրաստ են եղել կատարել առկա ցանկացած աշխատանք, որպեսզի օժանդակեն իրենց ընտանիքներին, և այդ առումով չի կարելի թերագնահատել նրանց լուծման Հայաստանում աղքատության կրճատման գործում:

Ինչ վերաբերում է Հայաստանից մեկնած միգրանտ աշխատողների վարձատրությանը, ապա 2002-2007 թթ. աշխատանքով ապահովված միգրանտները վաստակել են ամսական միջինը 660 ԱՄՆ դոլար: Համեմատության համար նշենք, որ հետազոտության արդյունքներով, 2008 թ. սկզբի դրությամբ Հայաստանի զբաղված բնակիչը վաստակել է ամսական միջինը 66,000 դրամ (մոտ 220 ԱՄՆ դոլար): Թեև երկու դեպքերում էլ եկամուտների մակարդակը, ամենայն հավանականությամբ, թերհայտարարագրվել է, այդ տվյալները կարելի է օգտագործել համեմատություններ անելու համար:

**Գծապատկեր 5. Արտերկրում միգրանտների միջին ամսական եկամուտը՝ ի համեմատ Հայաստանում զբաղված բնակչության միջին ամսական եկամտի**




	200 ԱՄՆ դոլարից պակաս	200-499 ԱՄՆ դոլար	500-999 ԱՄՆ դոլար	1000 ԱՄՆ դոլար և ավելի
■ Միգրանտներն արտերկրում	1,1	32,3	50,6	16,1
■ Ընդհանուր բնակչությունը Հայաստանում	52,0	41,7	5,2	1,1

Բացի այդ, հետազոտության միջոցով պարզվել է, որ հայաստանյան հմուտ աշխատուժի ամսական միջին եկամուտը արտերկրում կազմում է 737 ԱՄՆ դոլար, որը մոտ 20%-ով բարձր է ոչ հմուտ աշխատուժի եկամուտից (620 ԱՄՆ դոլար): Հետազոտության տվյալները վկայում են այն մասին, որ հմուտ և ոչ հմուտ աշխատուժի աշխատավարձերի տարբերությունը Հայաստանում ավելի մեծ է: Մասնագիտական կամ բարձրագույն կրթությամբ անձինք վաստակում են

մոտ 25%-ով ավելի շատ (71,000 դրամ կամ մոտ 237 ԱՄՆ դոլար), քան մասնագիտական կրթություն չունեցողները (57,000 դրամ կամ մոտ 190 ԱՄՆ դոլար):

**Գծապատկեր 6. Որակավորված աշխատուժի միջին ամսական եկամուտն արտերկրում և Հայաստանում**



	200 ԱՄՆ դոլարից պակաս	200-499 ԱՄՆ դոլար	500-999 ԱՄՆ դոլար	1000 ԱՄՆ դոլար և ավելի
■ Արտերկրում	1,1	32,3	50,6	16,1
■ Հայաստանում	52,0	41,7	5,2	1,1

Ինչպես արդեն նշվել է սույն զեկույցի տեքստում, միգրանտների մեծ մասը 2002-2007 թթ. ժամանակահատվածում ավելի քան մեկ անգամ է ուղևորվել արտերկիր: Հետազոտությանը պարզվել է, որ յուրաքանչյուր հաջորդ այցի ժամանակ միգրանտների աշխատավարձի մակարդակը բարձրացել է: Այսպես, առաջին և երկրորդ այցերի ժամանակ միգրանտները վաստակել են ամսական միջինը 613 ԱՄՆ դոլար: Երրորդ և չորրորդ այցերի ժամանակ նրանք վաստակել են ամսական միջինը 723 ԱՄՆ դոլար: Հինգ կամ ավել այց կատարածները վերջին այցի ընթացքում վաստակել են միջինը 828 ԱՄՆ դոլար: Վերջինս կարող է մասամբ պայմանավորված լինել վերջին տարիներին ԱՄՆ դոլարի արժեզրկմամբ, սակայն կարող են լինել նաև այլ պատճառներ, ինչպիսիք են, օրինակ, հմտությունների կատարելագործումը, միգրանտների կողմից պահանջվող ավելի բարձր աշխատավարձերը և/կամ արտերկրում աշխատանքային ծանրաբեռնվածության աճը՝ նպատակ ունենալով ավելի մեծ գումարներ ուղարկել ընտանիքներին:

## ՄՇՏԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԵՏԴԱՐՁԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հետազոտությամբ հաստատվեց, որ 2002-2007 թթ. ժամանակահատվածում միգրանտների ճնշող մեծամասնությունը (81%) վերադարձել է Հայաստան առնվազն մեկ անգամ: Այդ արդյունքն անսպասելի չէր՝ հաշվի առնելով Հայաստանի արտաքին միգրացիոն հոսքերի վերջին վեց տարիների առանձնահատկությունները: Ինչպես նշվեց, տվյալ ժամանակահատվածում Հայաստանից մեկնած միգրանտների փոքր մասն էր միայն մտադրություն ունեցել մշտական բնակություն հաստատել արտերկրում: Հետազոտությունը ցույց տվեց, որ հետդարձի ցուցանիշը մի փոքր ավելի ցածր է եղել նրանց շրջանում, ովքեր Հայաստանից մեկնել են նախքան 2002 թվականը. նրանց 64%-ն է վերադարձել Հայաստան 2002-2007 թթ.: Հետդարձը Հայաստան հիմնականում ունեցել է ոչ թե մշտական, այլ ժամանակավոր բնույթ: Ժամանակավոր և մշտական հետդարձի ցուցանիշները և վերադարձողների բացարձակ թիվը ներկայացված են 4-րդ աղյուսակում՝ ստորև:

### Աղյուսակ 4. Ժամանակավոր և մշտական հետդարձի դեպքերը (ըստ հետազոտության արդյունքների)

Խումբ	Չեն վերադարձել Հայաստան		2002-2007 թթ. վերադարձել են առնվազն մեկ անգամ		Մտադիր չեն 2008 թ. մեկնել	
	Տոկոս	Բացարձակ թիվ	Տոկոս	Բացարձակ թիվ	Տոկոս	Բացարձակ թիվ
Միգրանտներ, ովքեր մեկնել են Հայաստանից 2002 թվականից առաջ	36%	32,000	64%	58,000	26%	23,000
Միգրանտներ, ովքեր մեկնել են 2002-2007 թթ.	19%	26,000	81%	114,000	23%	32,000
<b>Ընդամենը</b>	<b>25%</b>	<b>58,000</b>	<b>75%</b>	<b>172,000</b>	<b>24%</b>	<b>55,000</b>

Այլ կերպ ասած, Հայաստանից մեկնած յուրաքանչյուր չորրորդ միգրանտը կարող է տեղավորվել «մշտապես վերադարձողների» խմբի մեջ, եթե ենթադրենք, որ մշտական հետդարձի ցուցանիշը հաշվարկվել է այն միգրանտների թվի հիման վրա, ովքեր չեն պլանավորում մեկնել Հայաստանից առնվազն 2008 թվականին: Ավելի երկարաժամկետ կանխատեսումներ, կարծես, անհրաժեշտ չեն, քանի որ հարցվողները դժվար թե հստակ իմանան ավելի հեռավոր ապագայում Հայաստանից մեկնելու իրենց մտադրությունները:

Հետազոտությամբ հաստատվեց, որ 2002-2007 թթ. ժամանակահատվածում արտաքին միգրացիայի բացասական տարեկան հաշվեկշիռը մեծ չի եղել: Ստորև՝ 5-րդ աղյուսակում ներկայացված են մեկնողների և վերադարձողների հաշվարկային բացարձակ թվերը, ըստ տարիների: Թեև 2008 թ. տարեկազրի դրությամբ արտերկրում էին գտնվում մոտ 91,000 միգրանտներ Հայաստանից, տվյալները թույլ են տալիս ենթադրել, որ նրանցից քչերն են այնտեղ մշտական բնակություն հաստատելու:<sup>7</sup>

**Աղյուսակ 5. Միգրանտների տարեկան շրջանառությունը և միգրացիայի սալրոն (ըստ հետազոտության արդյունքների)<sup>8</sup>**

Տարի	Մեկնում	Վերադարձ	Միգրացիայի սալրոն
Նախքան 2002 թ.	85,000	Տվյալներ չկան	Տվյալներ չկան
2002 թ.	40,000	37,000	(3,000)
2003 թ.	49,000	50,000	1,000
2004 թ.	59,000	62,000	3,000
2005 թ.	66,000	66,000	0
2006 թ.	77,000	70,000	(7,000)
2007 թ.	85,000	85,000	0
<b>Ընդամենը</b>	<b>461,000</b>	<b>370,000</b>	<b>(91,000)</b>

Ինչպես նշվեց, 2002-2007 թթ. մոտ 172,000 հայ միգրանտներ վերադարձել են Հայաստան առնվազն մեկ անգամ: Հետազոտությամբ հնարավոր եղավ հաշվարկել Հայաստանի տարբեր մարզեր հետդարձի ցուցանիշները (տե՛ս Աղյուսակ 6 հաջորդ էջում): Ըստ հետազոտության տվյալների, հետդարձի ցուցանիշն ամենաբարձրն է Կոտայքի մարզում (հետազոտված բոլոր միգրանտները 2002-2007 թթ. առնվազն մեկ անգամ վերադարձել են Հայաստան) և ամենացածրը՝ Լոռու մարզում (միգրանտների մոտ մեկ երրորդը չի վերադարձել Հայաստան):

<sup>7</sup> Այս ենթադրությունը հիմնված է միգրացիայի և հետդարձի ոլորտներում վերջին հինգ կամ վեց տարիներին արձանագրված ընդհանուր միտումների վրա: Մնում է պարզել, թե միգրացիոն գործընթացների վրա ինչպես կազդեն 2008 թվականի զարգացումները՝ թե Հայաստանի ներքաղաքական իրավիճակի, թե աշխարհի ֆինանսական շուկաների առումներով:

<sup>8</sup> Այս տվյալները համահունչ են տարեկան ուղևորաշրջանառության վիճակագրական տվյալներին, որոնք տրամադրում է Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալությունը (աղբյուրը. [www.backtoarmenia.com](http://www.backtoarmenia.com)):

**Աղյուսակ 6. Հետդարձի ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի (ըստ հետազոտության արդյունքների)**

Մարզ	Միգրանտների քացարձակ թիվ	Վերադարձողների քացարձակ թիվ	Միգրացիայի սալոն	Հետդարձի ցուցանիշ
Երևան	53,000	41,400	(11,600)	78,1%
Արագածոտն	12,200	9,100	(3,100)	74,6%
Արարատ	19,100	14,900	(4,200)	78,0%
Արմավիր	16,600	12,700	(3,900)	76,5%
Գեղարքունիք	26,200	21,000	(5,200)	80,2%
Կոտայք	15,200	15,200	0	100,0%
Լոռի	18,000	11,900	(6,100)	66,1%
Շիրակ	30,000	27,900	(2,100)	93,0%
Սյունիք	5,000	4,100	(900)	82,0%
Տավուշ	12,700	9,700	(3,000)	76,4%
Վայոց Ձոր	5,000	4,100	(900)	82,0%

Բացի այդ, հետազոտության միջոցով հաշվարկվել է մեկնման տարբեր երկրներից վերադարձի ցուցանիշը: Ինչպես և կարելի էր սպասել, Ռուսաստանից վերադարձի ցուցանիշն ամենաբարձրն է (տե՛ս Աղյուսակ 7): Մի կողմից, դա պայմանավորված է դեպի Ռուսաստան ժամանակավոր միգրացիայի շատ բարձր ցուցանիշով: Մյուս կողմից, տրանսպորտի համեմատաբար ցածր գների և երկիր առանց վիզայի կրկին մուտք գործելու հնարավորության շնորհիվ Ռուսաստանում գտնվող միգրանտների համար ավելի հեշտ է վերադառնալ և այցելել Հայաստանում գտնվող ազգականներին:

**Աղյուսակ 7. Հետդարձի ցուցանիշներ, ըստ մեկնման տարբեր երկրների (ըստ հետազոտության արդյունքների)**

Պետություն	Մեկնում	Վերադարձ	Միգրացիայի սալոն	Հետդարձի ցուցանիշ
Ռուսաստան	417,000	342,100	(74,900)	82,0%
Ուկրաինա	10,600	8,100	(2,500)	76,4%
ԱՊՀ այլ երկրներ	5,500	4,000	(1,500)	72,7%
ԱՄՆ	6,800	3,200	(3,600)	47,1%
Եվրոպա	14,100	7,700	(6,400)	54,6%
Այլ երկրներ	7,000	4,900	(2,100)	70,0%
<b>Ընդամենը</b>	<b>461,000</b>	<b>370,000</b>	<b>(91,000)</b>	<b>80,4%</b>



Այս համամասնությունները զգալիորեն փոխվում են, երբ դիտարկվում է միայն մշտական հետդարձը (տե՛ս Աղյուսակ 8): Թեև Ռ-ուսաստանը շարունակում է զբաղեցնել առաջին հորիզոնականը՝ վերադարձողների բացարձակ թվի իմաստով, Հայաստանում մշտական բնակություն հաստատելու նպատակով Ռ-ուսաստանից վերադարձի տոկոսաբաժինն ակնհայտորեն ավելի ցածր է, քան մեկնման մյուս երկրների պարագայում:

**Աղյուսակ 8. Մեկնման հիմնական երկրներից մշտական հետդարձի ցուցանիշը**

Պետություն	Մեկնում	Հետդարձ՝ Հայաստանում մշտական բնակություն հաստատելու նպատակով	Մշտական հետդարձի ցուցանիշ
Ռ-ուսաստան	417,000	46,800	11,2%
Ռուկրահնա	10,600	1,900	18,2%
ԱՊՀ այլ երկրներ	5,500	1,400	26,0%
ԱՄՆ	6,800	1,400	20,2%
Եվրոպա	14,100	1,900	13,7%
Այլ երկրներ	7,000	1,500	22,0%
<b>Ընդամենը</b>	<b>461,000</b>	<b>55,000</b>	<b>12,0%</b>

Հետազոտությանը պարզվեց, որ այն միգրանտները, ովքեր մեկնել են Հայաստանից 2002-2007 թթ. ժամանակահատվածում, և վերադարձել Հայաստան առնվազն մեկ անգամ նախքան 2007 թ. տարեվերջ, արտերկրում անցկացրել են միջինը 10 ամիս: Ընդ որում, արտերկրում նրանց մնալու տևողությունը յուրաքանչյուր հաջորդ այցի ժամանակ կրճատվել է: Առաջին այցի միջին տևողությունը կազմել է մոտ 13 ամիս, երկրորդ այցինը՝ 9 ամիս, իսկ երրորդ և դրան հաջորդած բոլոր այլ այցերի միջին տևողությունը՝ 8 ամիս: Հետաքրքիր բացահայտում էր այն, որ նախքան 2002 թվականը Հայաստանից մեկնած այն միգրանտները, ովքեր առաջին անգամ Հայաստան վերադարձել են 2002-2007 թթ. ընթացքում, վերադարձել են՝ արտերկրում անցկացրած լինելով միջինը 59 ամիս: Մյուս կարևոր բացահայտումն այն է, որ մշտապես վերադարձողները (նրանք, ովքեր վերադարձել են Հայաստան 2002-2007 թթ. և մտադիր չեն մեկնել Հայաստանից առնվազն 2008 թվականին) հարցման պահին (2008 թ. մարտ) Հայաստանում արդեն անցկացրել էին միջինը 31 ամիս: Դա նշանակում է, որ նրանց մեծ մասն իսկապես դադարեցրել է միգրացիոն գործունեությունը, և որ 2008 թվականին կրկին մեկնելու ծրագրեր չունենալու մասին նրանց հայտարարությունը, ամենայն հավանականությամբ, արվել է լուրջ խորհումների և վերլուծությունների արդյունքում:

**ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ  
ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Բացի Հայաստան հետդարձի օրինաչափություններից, փորձել ենք պատկերացում կազմել նաև այն մասին, թե ովքեր են ժամանակավոր և մշտապես վերադարձողները, և ինչպիսին է նրանց կազմը՝ մշտական միգրանտների կազմի համեմատ: 9-րդ և 10-րդ աղյուսակներում համեմատվում են մշտական միգրանտների, ժամանակավոր և մշտապես վերադարձողների սոցիալ-ժողովրդագրական նկարագրերը:

**Աղյուսակ 9. Միգրանտների և վերադարձողների սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը**

Խումբ	Մեռ		Միջին տարիք	Հայաստանում բնակության վայրը		
	Ար.	Իգ.		Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Մշտական միգրանտներ	72%	28%	35	31%	30%	39%
Ժամանակավոր վերադարձողներ	85%	15%	38	19%	37%	44%
Մշտապես վերադարձողներ	72%	28%	41	34%	36%	30%
<b>Բոլոր միգրանտները</b>	<b>79%</b>	<b>21%</b>	<b>38</b>	<b>26%</b>	<b>35%</b>	<b>39%</b>

Տվյալները հանգեցնում են մի շարք կարևոր եզրակացությունների: Նախ, կարելի է նկատել, որ թեև մշտական արտագաղթողների և մշտապես վերադարձողների սեռային կազմը նույնն է, այն միգրանտները, ովքեր որոշել են մշտական բնակություն հաստատել արտերկրում, ավելի երիտասարդ են, քան նրանք, ովքեր որոշել են վերադառնալ Հայաստան: Դա հուշում է, որ միգրանտների մեծ մասը մշտապես արտագաղթելու մասին որոշումը կայացնում է ավելի վաղ տարիքում, մինչդեռ Հայաստան վերադառնալու որոշումը սովորաբար կայացվում է ավելի ուշ, թերևս՝ ժամանակավոր աշխատանքային միգրացիայի մի քանի տարիներից հետո:

Այն փաստը, որ ժամանակավոր վերադարձողների թիվը Երևանում կրկնակի պակաս է Հայաստանի այլ մարզերից, կարող է բացատրվել աշխատանքային միգրացիոն ակտիվության մակարդակով, որը շատ ավելի ցածր է Երևանում, քան փոքր քաղաքներում և գյուղերում՝ ինչպես արդեն վերլուծվել է սույն զեկույցի նախորդ բաժիններում:

Բացի այդ, հետազոտության արդյունքում բացահայտվեց մեկ այլ հետաքրքիր հանգամանք ևս. մասնագիտական կրթություն ունեցող անձանց տոկոսաբաժինը գրեթե նույնն է մշտական միգրանտների, ժամանակավոր և մշտապես վերադարձողների խմբերում (տես Աղյուսակ 10): Դա նշանակում է, որ կրթության մակարդակը, ըստ երևույթին, չի ազդում միգրանտների՝ վերադառնալու որոշումների վրա, ինչպես նաև, որ կրթության ավելի բարձր մակարդակ ունեցողների շրջանում արտահայտված միտում չկա՝ Հայաստանից արտագաղթելու մշտապես: Սույն գեկույցի մեջ փաստացի արդեն հիմնավորվել է, որ հնուտ աշխատուժի (մասնավորապես՝ բարձրագույն կրթությամբ անձանց) շրջանում միգրացիոն ակտիվության մակարդակն ավելի ցածր է, որը հիմնականում պայմանավորված է աշխատուժի ներպետական շուկայում նրանց ունեցած ավելի մեծ հնարավորություններով:

**Աղյուսակ 10. Միգրանտների և վերադարձողների սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը (շարունակություն)**

Խումբ	Մասնագիտական կրթություն ունեցողներ	Մասնագիտությունների հիմնական խումբը (խմբերը)
Մշտական միգրանտներ	40%	Տնտեսագիտություն (13%) Ճարտարապետություն և շինարարություն (12%) Կրթություն (12%) Բժշկություն (12%) Արվեստ և մշակույթ (9%) Բնական գիտություններ (7%)
Ժամանակավոր վերադարձողներ	39%	Տնտեսագիտություն (17%) Ճարտարապետություն և շինարարություն (15%) Հումանիտար և հասարակական գիտություններ (10%) Բնական գիտություններ (7%)
Մշտապես վերադարձողներ	40%	Հումանիտար և հասարակական գիտություններ (18%) Ճարտարապետություն և շինարարություն (11%) Կրթություն (11%) Մեխանիկական ինժեներիա (11%) Բժշկություն (9%)

Խումբ	Մասնագիտական կրթություն ունեցողներ	Մասնագիտությունների հիմնական խումբը (խմբերը)
<b>Բոլոր միգրանտները</b>	39%	Տնտեսագիտություն (13%) Ճարտարապետություն և շինարարություն (13%) Հումանիտար և հասարակական գիտություններ (11%) Մեխանիկական ինժեներիա (9%) Կրթություն (8%) Բժշկություն (8%)

Թեև պարզվել է, որ կրթության մակարդակն էական ազդեցություն չունի միգրացիայի և հետդարձի միտումների վրա, կարևոր բացահայտում էր այն հանգամանքը, որ մշտական միգրանտների, ժամանակավոր և մշտապես վերադարձողների միջև մասնագիտական կազմի առումով գոյություն ունեն լուրջ տարբերություններ: Մշտական միգրանտների և ժամանակավոր վերադարձողների խմբերում ամենամեծ տոկոսային կշիռն ունեին տարբեր ուղղվածության տնտեսագետները, սակայն նրանցից շատ քչերն էին դիտարկել մշտապես Հայաստան վերադառնալու հնարավորությունը: Ի հակադրություն, առողջապահության և կրթության ոլորտի մասնագետները բավական ակտիվ էին մշտական միգրացիայի և մշտական հետդարձի հոսքերում, սակայն շատ ցածր էր նրանց ժամանակավոր հետդարձի ցուցանիշը: Վերոհիշյալ բացահայտումները կարող են պայմանավորված լինել Հայաստանում և արտերկրում աշխատուժի առաջարկի և պահանջարկի առանձնահատկություններով, ինչպես նաև տարբեր մասնագիտական խմբերի միգրացիայի օրինաչափություններով:

## ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Զեկույցի այս բաժինը հիմնված է հետազոտության անցկացման ժամանակ Հայաստանում գտնվող 201 մշտապես վերադարձողների և 212 ժամանակավոր վերադարձողների պատասխանների վրա: Վերադարձողների` Հայաստանում ունեցած զբաղվածության մասին տվյալները վկայում են, որ մշտապես վերադարձողների մոտ 60%-ը և ժամանակավոր վերադարձողների 32%-ը 2008 թ. տարեսկզբի դրությամբ Հայաստանում ունեին աշխատանք: Բնակչության մնացած մասի շրջանում (այսինքն` նրանց, ովքեր չեն մասնակցել արտաքին

միգրացիոն գործընթացին) զբաղվածության ցուցանիշը կազմել է 43%: 11-րդ աղյուսակում համեմատվում են մշտապես վերադարձողների, ժամանակավոր վերադարձողների և միգրացիային չմասնակցողների տնտեսական ակտիվությունը և զբաղվածությունը:

**Ծանոթագրություն.** «Աշխատանքային ռեսուրսներ» ասելով հասկանում ենք աշխատանքային տարիքի աշխատունակ բնակչություն: ՀՀ աշխատանքային օրենսգրքով «աշխատանքային տարիք» հասկացությունը վերաբերում է 16-62 տարեկաններին: Աշխատանքային ռեսուրսների կազմի մեջ մտնում է տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչությունը: Տնտեսապես ակտիվ բնակչությունը ներառում է զբաղվածներին և գործազուրկներին, մինչդեռ տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը կազմում են նրանք, ովքեր չեն աշխատում և չեն փնտրում աշխատանք: Ջրաղվածության ցուցանիշը հաշվարկվում է ընդհանուր աշխատանքային ռեսուրսների նկատմամբ, մինչդեռ գործազուրկության ցուցանիշը գործազուրկների թվի հարաբերակցությունն է տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ:

**Աղյուսակ 11. Տնտեսական ակտիվությունը և զբաղվածությունը (16-62 տարիքային խումբ)**

Տնտեսական ակտիվություն	Մշտապես վերադարձածներ	Ժամանակավոր վերադարձածներ	Ոչ միգրանտներ
<b>Տնտեսապես ակտիվ բնակչություն</b> (աշխատանքային ռեսուրսների նկատմամբ %-ային արտահայտությամբ)	80.4	69.0	62.9
<b>Ջրաղվածության ցուցանիշ</b> (աշխատանքային ռեսուրսների նկատմամբ %-ային արտահայտությամբ)	59.8	31.5	42.9
<b>Գործազրկության ցուցանիշ</b> (տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ %-ային արտահայտությամբ)	25.7	54.3	31.8
<b>Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն</b> (աշխատանքային ռեսուրսների նկատմամբ %-ային արտահայտությամբ)	19.6	31.0	37.1

Վերոհիշյալ տվյալների հիման վրա կարելի է հանգել մի քանի կարևոր եզրակացությունների: Նախ, այն փաստը, որ տնտեսական ակտիվության և զբաղվածության մակարդակն ամենաբարձրն է մշտապես վերադարձողների շրջանում, վկայում է, որ նրանց մեծ մասը փորձում և փաստացի կարողանում է զբաղվածություն գտնել Հայաստանում: Դա կարող է նրանց էլ ավելի շահագրգռել, որպեսզի նրանք ոչ թե կրկին արտագաղթեն, այլ՝ մնան Հայաստանում:


Երկրորդ, ժամանակավոր վերադարձողների համեմատաբար բարձր տնտեսական ակտիվությունը վկայում է, որ նրանցից շատերն, ըստ էության,

փնտրում են աշխատանքի հնարավորություններ Հայաստանում: Մինչ օրս նրանց մեծ մասն այդ հարցում հաջողության չի հասել: Այդուհանդերձ, կարծում ենք, որ կարելի է առանց լուրջ վերապահումների եզրակացնել, որ Հայաստանում աշխատանք գտնելը կարող է էական խթան դառնալ ժամանակավոր վերադարձածների համար, որպեսզի նրանք այլևս չարտագաղթեն և մնան Հայաստանում:

Երրորդ. մշտապես վերադարձողների և ոչ միգրանտների զբաղվածության մակարդակների տարբերությունը կարող է հանգեցնել այն եզրակացության, որ միգրացիայի փորձը մեծացնում է աշխատանք որոնողների՝ Հայաստանի աշխատաշուկայում աշխատանք գտնելու հավանականությունը: Այդ ենթադրությունը համահունչ է հետազոտության այլ արդյունքներին, մասնավորապես՝ մշտապես վերադարձածների մեծ մասի հայտնած այն կարծիքին, թե միգրացիայի փորձն իրենց օգնել է բարելավել աշխատանքային հմտությունները, կատարելագործել կարողությունները և, արդյունքում, բարձրացնել իրենց մրցունակությունը հայաստանյան աշխատաշուկայում:

Բացի այդ, հետազոտությամբ պարզվեց, որ վերադարձողների աշխատավարձի մակարդակը որոշ չափով բարձր է ընդհանուր բնակչության աշխատավարձերի մակարդակից: Ժամանակավոր և մշտապես վերադարձածների ամսական միջին եկամուտը հաշվարկվել է մոտ 72,500 դրամ (մոտ 242 ԱՄՆ դոլար), որը մոտ 10%-ով ավելի բարձր է, քան ոչ միգրանտների եկամուտը (66,000 դրամ կամ 220 ԱՄՆ դոլար): Վերադարձողների աշխատավարձերի ավելի բարձր մակարդակը կարող է պայմանավորված լինել նրանց հմտությունների ավելի բարձր մակարդակով: Հնարավոր է նաև այն բացատրությունը, որ վերադարձողների մեծ մասն աշխատում է մասնավոր հատվածում, որտեղ աշխատավարձերը հիմնականում ավելի բարձր են, քան պետական հատվածում:


**Գծապատկեր 7. Զբաղվածության հատվածը**




Հետազոտության արդյունքում զգալի տարբերություններ արձանագրվեցին վերադարձողների և ընդհանուր բնակչության զբաղվածության ոլորտների միջև: Դա հիմնականում վերաբերում է վերադարձողների և ոչ միգրանտների՝ շինարարության ոլորտում զբաղվածության մակարդակին: 8-10-րդ գծապատկերներում համեմատվում են ոչ միգրանտների, ժամանակավոր վերադարձածների և մշտապես վերադարձածների զբաղվածության առաջին երեք ոլորտները:

Ինչպես պատկերված է, բազմաթիվ վերադարձողներ աշխատանք են գտել շինարարության ոլորտում: Ի հակադրություն, շինարարության ոլորտում աշխատող ոչ միգրանտների տոկոսաբաժինն ընդամենը 6.6% է: Այդ արդյունքը հասկանալի է՝ հաշվի առնելով հայաստանյան աշխատաշուկայում հմուտ շինարարների նկատմամբ պահանջարկի աճը և վերադարձողների մեծ մասի՝ արտերկրում քաղած փորձը:


**Գծապատկեր 8. Միգրացիային չմասնակցածներ**



**Գծապատկեր 9. Մշտական վերադարձողներ**



**Գծապատկեր 10. Ժամանակավոր վերադարձողներ**



# ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ. ՄԻԳՐԱՑԻԱՆ ԵՎ ՀԵՏԴԱՐՁԸ ԹՎԵՐԻՑ ԱՆԴԻՆ

---

Այս գլուխը հիմնված է վերադարձողների հետ խորին հարցազրույցների որակական վերլուծության վրա: Հարցվողների թվում ներկայացված են եղել երեք տարբեր խմբեր.

- ա) մարդիկ, ովքեր Հայաստանից մեկնել են՝ նպատակ ունենալով մշտական բնակություն հաստատել արտերկրում, սակայն ինչ-ինչ պատճառներով վերադարձել են Հայաստան 2002-2007 թթ. ժամանակահատվածում,
- բ) աշխատանքային միգրանտներ, ովքեր 3 կամ ավել տարի անընդմեջ մեկնել են Հայաստանից՝ արտերկրում աշխատելու նպատակով, սակայն 2002-2007 թթ. ընթացքում դրոշել են այլևս չմեկնել արտերկիր աշխատելու,
- գ) ուսանող միգրանտներ, ովքեր վերադարձել են Հայաստան 2002-2007 թթ. ժամանակահատվածում:

Խորացված հարցազրույցներ են անցկացվել ընդհանուր թվով 106 վերադարձողների հետ, այդ թվում՝ 44 միգրանտների, ովքեր մեկնել են Հայաստանից՝ արտերկրում մշտական բնակություն հաստատելու նպատակով, 42 նախկին աշխատանքային միգրանտների և 20 ուսանող միգրանտների: Նրանց վերադարձի որոշման պատճառները և վերախնտեզրման խնդիրներն ավելի լավ հասկանալու համար խմբերից յուրաքանչյուրը ստորև վերլուծվում է առանձին:

## ՄՇՏԱԿԱՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐ

### ԿԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

Հայտնի է, որ Հայաստանից միգրանտների մեծամասնությունը մեկնում է Ռուսաստանի Դաշնություն: Այդ իսկ պատճառով, մեր հարցվողների մեծամասնությունը ևս ՌԴ-ից վերադարձած այն ընտանիքների անդամներն են կամ այն անհատները, ովքեր մեկնել էին արտերկիր մշտական բնակություն հաստատելու և 2002-2007 թթ վերադարձել են Հայաստան՝ այստեղ վերահաստատվելու մտադրությամբ:



Նախ հպանցիկ անդրադառնանք այն մի քանի սցենարներին, որոնցով սովորաբար ընթանում է մշտական բնակություն հաստատելու նպատակով արտերկիր մեկնումը:

Հաճախ ընտանիքը մեկնում է **ընտանիքի մյուս անդամ(ներ)ին միանալու նպատակով**: Որպես կանոն, ընտանիքը մեկնում է միանալու ընտանիքի հորը, ով մինչ այդ մեկնել է արտերկիր՝ արտագնա աշխատանքների, և որոշել է ընտանիքը ևս տեղափոխել ընդունող երկիր և հաստատվել այնտեղ:

Մեկնելու մեկ այլ տարածված եղանակ է **արտերկրում բնակվող ազգականի մոտ մեկնելը**: Այս դեպքում ևս, որպես կանոն, նախ մեկնում է ընտանիքի անդամներից մեկը (հիմնականում ընտանիքի հայրը): Նա, արտերկրում արդեն բնակվող ազգականների օգնությամբ, փորձում է հաստատվել՝ գտնել աշխատանք և վարձել բնակարան: Եվ այս ամենը հաջողելուց հետո կանչում է նաև ընտանիքի մյուս անդամներին:

Առանձին անհատների մեկնելու դեպքերում կարելի է առանձնացնել այն տարբերակը, երբ **տեղաբնակը (հիմնականում կին) ամուսնանում է արտերկրում մշտական բնակություն հաստատած անձի հետ**:

Պատահում են նաև դեպքեր, երբ անհատը մեկնում է ընտանիքի անդամին կամ ազգականին այցելության, և նրանց հորդորներով կամ հարմար աշխատանք գտնելով, որոշում է կայացնում **մնալ և հաստատվել ընդունող երկրում՝ նախապես նման մտադրություն չունենալով**:

Հարցվողները հաճախ են նշում, որ մեկնելիս իրենք ունեցել են մի օր հայրենիք վերադառնալու հեռանկարը: Հատկապես կանայք, ովքեր մեկնել են իրենց ամուսիններին (ի սկզբանե որպես աշխատանքային միգրանտ մեկնած) միավորվելու, նշում են, որ իրենք ակնկալում էին որոշ ժամանակ անց վերադառնալ Հայաստան:

*«Մտածում էի փախչենք Հայաստանից: Այստեղ նորմալ ապրելն անհնարին էր: Գնանք մի տեղ աշխատանք գտնենք, տուն-տեղ դնենք, լավ կապրենք, միգրացե մի օր էլ վերադառնանք»:* Կին, 41 տ., Երևան

Նույնը կարելի է ասել այն տարեցների մասին, ովքեր մեկնել են զավակներին (և նրանց ընտանիքներին) միանալու: Մեկնողների այս խումբը (նախկին աշխատանքային միգրանտների կանայք և տարեցները) համեմատաբար դժվար է հարմարվում նոր կյանքին արտերկրում: Նրանք հաճախ ստիպված են լինում ժամանակն անցկացնել տանը, քանի որ չեն ունենում աշխատանք և ընկերներ:

*«Ակնկալիքներս չարդարացան: Կարծում էի, թե կաշխատեմ, բայց ամուսինս այդպես էլ թույլ չտվեց: Նույնիսկ խանութ գնալու համար պետք*

*է թույլտվություն հարցների՝ այնտեղ ապրող մյուս հայ ընտանիքների կանանց պես»:* Կին, 24 տ., Երևան

Մեր հարցումներում հենց այս խմբի ներկայացուցիչներն են, որ կազմում են Հայաստան վերադարձածների մեծամասնությունը: Նրանք, չկարողանալով արտերկրում հարմարվել, կրկին վերադառնում են Հայաստան, կամ հորդորում են ամուսնուն/զավակին ողջ ընտանիքով վերադառնալ:

Քանի որ միգրացիայի հիմնական հոսքը Ռ-Գ է, ուստի մեկնման գործընթացի կազմակերպումը բավականին հեշտ է լինում: Մեր հարցումների մեջ քիչ են այն դեպքերը, երբ մեկնելուց առաջ մարդիկ վաճառել են իրենց տունն ու ունեցվածքը: Սրանից, ինչ խոսք, չի կարելի հետևություն անել, թե մարդիկ արտերկիր մեկնելուց Հայաստանում թողնում են իրենց տունն ու ունեցվածքը: Վաճառողները, հավանաբար, ավելի հազվադեպ են վերադառնում: Հիմնականում մեկնողներն արտերկիր մեկնելիս ունեցել են միայն տոմս գնելու հոգս, որը հոգացել են ընտանիքի՝ արտերկրում արդեն բնակվող (և/կամ աշխատող) անդամի աշխատած գումարով կամ պարտք են վերցրել՝ արտերկրում գումար վաստակելու և պարտքը վերադարձնելու խոստումով:

Հարցումները ցույց են տալիս, որ քիչ են մարդիկ, ովքեր արտերկրում մշտական բնակություն հաստատելիս մեծ ակնկալիքներ են ունեցել: Այդպիսիք համեմատաբար հաճախ հանդիպում են ԱՄՆ մեկնածուների և երիտասարդների մեջ: Հարցվողների ակնկալիքները հիմնականում սահմանափակվել են հարմար աշխատանք գտնելով: Շատերը պարզապես մեկնել են իրենց ընտանիքների անդամներին միանալու նպատակով: Նրանց միակ ակնկալիքը եղել է ամուսինների և զավակների հետ միասին լինելը:

*«Ամուսինս արդեն այնտեղ աշխատում էր: Ես էլ մտածում էի՝ զնանք, ընտանիքս միասին կլինի»:* Կին, 34 տ., Ալավերդի

Այնուամենայնիվ այնքան էլ մեծ չէ նրանց թիվը, ովքեր բարձր են գնահատում իրենց միգրացիոն փորձը և գոհ են իրենց այնտեղի կյանքից: Այդպիսիք ավելի հաճախ հանդիպում են այն միգրանտների մեջ, ովքեր մեկնել են 1990-ական թվականներին: Սակայն չշտապենք հետևություն անել, թե այդ տարիներին ավելի հեշտ է եղել արտերկրում հաստատվելը: Միգրացիոն փորձի ավելի դրական գնահատականը թերևս կարելի է բացատրել նրանով, որ այդ տարիներին մեկնում էին ոչ այնքան արտերկրում լավ կյանք գտնելու ակնկալիքով, որքան 1990-ականների Հայաստանի ծանր իրավիճակից ազատվելու նպատակով: Մյուս կողմից 1990-ականներին մեկնած այն միգրանտները, ովքեր դժգոհ են եղել արտերկրի իրենց կյանքից, հավանաբար վերադարձել են մինչ 2002 թ., ուստի մեր հարցվողների շրջանակում ներառված չեն:

*«Հայաստանում անտանելի իրավիճակում էինք: Բայց դե գիտեի, որ մեկնելուց էլ շատ դժվար է լինելու` հատկապես, որ ընտանիքով էինք գնում. ոչ լեզու գիտեինք, ոչ նիստուկացին էինք ծանոթ: Բայց մտածում էի, որ ուր էլ գնանք, Հայաստանից լավ կլինի: Այդպես էլ կար»:* Տղամարդ, 47 տ., Երևան

Հարցվողները, խոսելով արտերկրում ունեցած իրենց դժվարությունների մասին, հաճախ նշում են այն **հիմնախնդիրները, որոնք պայմանավորված են եղել իրենց կեցության անօրինական կարգավիճակով** (ստիպված են եղել սահմանափակել իրենց տեղաշարժը քաղաքում` ոստիկաններին չհանդիպելու համար, կամ կաշառք տալ օրինախախտման ֆորմալ սանկցիավորումից խուսափելու համար):

*«Ապրում էինք հենց կառուցվող շենքում, ու հաճախակի ենթարկվում ոստիկանության զիջերային հարձակումներին. իրավունք չունեինք այդ շենքում ապրել, քանի որ բնակելի չէր, դեռ չէր ավարտվել շինարարությունը: Այնտեղ օրենք կար, որ որտեղ ապրում ես, պետք է այնտեղ էլ գրանցվես, բայց անավարտ շենքում ո՞նց կգրանցվես: Ոստիկանները գալիս էին, անձնագրերը հավաքում-տանում, հաջորդ օրը բոլորս գումար էինք հավաքում, գնում էինք ետ էինք բերում»:* Տղամարդ, 56 տ., Եղեգնաձոր

Երկրորդ ամենատարածված հիմնախնդիրը, որը, որպես կանոն, ունեցել են Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում բնակվողները, **տեղացիների ոչ բարյացկամ վերաբերմունքն էր և ծայրահեղ ազգայնական խմբերից վախը:**

*«Որոշ ժամանակ «կոմունալկայում» էլ ենք մնացել: Եթե այնտեղի հարևանները ռուս էին լինում, ապա շատ դժվար էր լինում համակերպվել: Նրանք մեզ չեն սիրում»:* Տղամարդ, 56 տ., Եղեգնաձոր

Շատերը ունեցել են **բարդություն աշխատանք գտնելու հարցում:** Այս բարդությունը Ռ-Ղ-ում ապրողների դեպքում հաճախ պայմանավորված էր նրանով, որ նրանք հիմնականում աշխատում էին շինարարության ոլորտում: Եվ, քանի որ այդ ոլորտում աշխատանքը, որպես կանոն, մշտական չէ, ուստի անընդհատ անհրաժեշտ էր նոր շինարարական գործ գտնել:

*«Սկզբում աշխատանք գտնելու խնդիր կար: Զբաղվում էի առևտրով: Փորձել եմ աշխատանք գտնել մասնագիտությամբ, բայց սոցիոլոգների պակաս Ռ-ուսաստանում չկար»:* Կին, 37 տ., Երևան

*«Քանի որ հարմար աշխատանք չէինք գտնում, մի քանի ամսից վերադարձանք Հայաստան: Հաջորդ տարի էլի մեկնեցինք: Անուսնուս*

*ծնողները մեզ օգնում էին, որ այնտեղ հաստատվենք, սակայն էլի հարմար աշխատանք չգտանք և վերադարձանք»։ Կին, 30 տ., Երևան*

Այն միգրանտները, ովքեր մեկնել են ոչ ռուսալեզու երկրներ, հաճախ **հանդիպել են խոչընդոտների և դժվարությունների օտար լեզվին լավ չտիրապետելու պատճառով**։

Քանի որ շատերը (հատկապես նոր գնացածները) բնակվել են վարձակալած բնակարանում, հաճախ **ստիպված են եղել փոխել բնակության վայրը** (վարձի քանակացման կամ այլ պատճառներով), ինչը երբեմն երեխաներին մի դպրոցից մյուսը տեղափոխելու պատճառ է դարձել։ Հաճախ միգրանտ ընտանիքներն ստիպված են եղել վարձակալել ոչ բարվոք կենցաղային պայմաններ ունեցող բնակարաններ, որոնք ավելի էժան են։ Հանդիպում են նաև մարդիկ, ովքեր բավականին երկար բնակվել են բարեկամի կամ ընկերոջ տանը։

*«Որոշ ժամանակ տուն էի վարձում. տաք ջուր, ջեռուցում կար, բայց այդպես էլ աշխատավարձիս մեծ մասը դրա վրա էր ծախսվում։ Հետո մեկ այլ տեղ աշխատելու ժամանակ ապրում էինք հենց կառուցվող շենքում։ Որոշ ժամանակ կոմունալկայում ենք մնացել»։ Տղամարդ, 56 տ., Եղեգնաձոր*

Արտերկրում բնակության դժվարությունների շարքում հարցվողները նշում են նաև **ընկճվածությունն ու միայնակությունը**, որ ունեցել են իրենց համար օտար միջավայրում բնակվելիս, **հարազատների կարիքը, կարոտը հայրենիքի նկատմամբ**։ Ոմանց համար դժվար է եղել նաև **ընդունող երկրի բարքերին հարմարվելը**, որոնք հարցվողների համար ոչ միայն օտար, այլ նաև անընդունելի են եղել, այնքան, որ նրանցից ոմանք մտահոգվել են իրենց երեխաների դաստիարակության համար։ Հարցվողների մեջ հանդիպել են նաև մարդիկ, ովքեր **դժվարացել են հարմարվել նոր կլիմայական պայմաններին և առողջական խնդիրներ են ունեցել**։

ՎԵՐԱԴԱՐՉ ԵՎ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

Հարցվողների մեջ, կարելի է ասել, չկան մարդիկ, ովքեր վերադարձել են միայն այն պատճառով, որ Հայաստանում աշխատանքի կամ կյանքի համար ավելի լավ հեռանկար են տեսել։ Որպես հարցվողներին Հայաստան բերող գործոն կարելի է նշել հայրենիքի կարոտը։ Սակայն, որպես կանոն, հարցվողների վերադարձի որոշումը պայմանավորված է եղել վանող գործոններով՝ դժվարություններով, որ ծագել են արտերկրում, կամ անձնական պատահական հանգամանքներով (մահ, ամուսնալուծություն, առողջական վիճակի վատացում և

այլն): Անդրադառնանք հարցվողների վերադարձը պայմանավորող գործոններից ամենատարածվածներին:

**Այլազգիների նկատմամբ Ռուսաստանում ստեղծված անհանդուրժողականության աճ:** Հարցվողների մի մասը նշել է, որ իրենք վերադարձել են Հայաստան, որովհետև Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում արդեն այնքան էլ հանգիստ չէր: Սա հատկապես ազդել է այն ընտանիքների որոշման վրա, որտեղ երեխաները պետք է ընդունվեին դպրոց կամ բուհ, պետք է տանից հաճախ բացակայեին, նույնիսկ բավականին հեռու գնային, ինչը, հարցվողների գնահատմամբ, անվտանգ չէր:

**Հասարակության բարքերի անընդունելիությունը:** Սա ևս մեծապես վերաբերում է ՌԳ-ում բնակվողներին: Այս միգրանտներից շատերի համար անընդունելի են եղել ռուս ժողովրդի մշակույթի այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են անկաշկանդությունը, առանձին անհատների անկախությունն ընտանիքի և համայնքի կարծիքից, ինչպես նաև վաղ սեռական հարաբերությունները: ՌԳ-ում բնակվող հայերի մի մասի վերադարձի պատճառ են դարձել ոչ միայն նշված հանգամանքները, որոնք անհամատեղելի են հայ ավանդական մշակույթային աշխարհայացքին, այլ նաև ռուս հասարակությանը բնորոշ այնպիսի սոցիալական արատներ, ինչպիսիք են հարբեցողությունը և թմրամոլությունը, որոնք մեծ տոկոս են կազմում նաև երիտասարդների շրջանում: Անհանգստանալով, որ իրենց երեխաները ևս կարող են յուրացնել այս արատները և դառնալ դրանց գոհր, որոշ ընտանիքներ գերադասել են վերադառնալ Հայաստան:

*«Կային որոշ խնդիրներ՝ կապված երեխաների դաստիարակության հետ. թմրամոլությունը, ոչ հայեցի ապրելակերպը ՌԳ-ում: Ես չէի ուզում, որ իմ երեխաները այդ միջավայրում մեծանան և ձուլվեն»:* Տղամարդ, 37 տ., Երևան

**Անշարժ գույքի քանկացում:** Որոշ հարցվողներ որոշել են վերադառնալ այն ժամանակ, երբ հասկացել են, որ գների քանկացման հետ մեկտեղ նվազում են ոչ միայն իրենց խնայողությունները, այլ նաև բնակարան գները հնարավորությունները:

**Արտերկրում ընտանիքի միավորման անհնարինություն:** Երբեմն, երբ ընտանիքի անդամներից որևէ մեկը չի կարողանում կամ հրաժարվում է միանալ արտերկրում բնակվող հարազատներին, ընտանիքը վերադառնալու որոշում է կայացնում: Սա ավելի հաճախ լինում է ամուսինների ծեր կամ վատառողջ ծնողների պարագայում, երբ նրանք դժվարանում են մեկնել արտերկիր, կամ հրաժարվում են՝ ցանկանալով մնալ իրենց տանը:

*«Հորս արդեն 13 տարի չէի տեսել: Նա թեև կարող էր ինձ այցելել, բայց միևնույն է, հնարավոր չէր Հայաստանի 80%-ին տեղափոխել ԱՄՆ միայն*

*այն քանի համար, որ ես ինձ երջանիկ զգայի: Ավելի հեշտ և նպատակահարմար էր, որ ես վերադառնայի: Ի վերջո կրթություն էլ չունեի, անկապ ապրում էի»:* Տղամարդ, 29 տ., Երևան

**Աշխատանք գտնելու դժվարությունը:** Սա հիմնականում լինում է նոր մեկնած ընտանիքների պարագայում, որոնք որոշակի ժամանակահատվածում մշտական բնակության համար հիմքեր չստեղծելով՝ գերադասում են վերադառնալ՝ այստեղի իրենց աշխատանքը չկորցնելու համար:

**Ընտանիքի անդամներից որևէ մեկի չհարմարվելը ընդունող երկրի կյանքին:** Սա ավելի հաճախ լինում է ծերերի, կանանց կամ երեխաների հետ, ովքեր սոցիալապես ավելի պասիվ գտնվելով և ավելի քիչ հաղորդակցվելով նոր հասարակության անդամների հետ, դժվարությամբ են յուրացնում նոր բարքերը, ինչի պատճառով հաճախ մեկուսանում են, օտարվում: Այս միգրանտները, չկարողանալով իրենց տեղը գտնել նոր հասարակությունում, հորդորում են ընտանիքին՝ վերադառնալ հայրենիք:

*«Իմ երեխան այնտեղ իրեն կաշկանդված էր զգում, բակում մենակ էր խաղում, լեզուն լավ չգիտեր, երբ երեխաները ռուսերեն էին խոսում, նեղվում էր ու սկսում էր լացել»:* Կին, 30 տ., Այգեստան

Հաճախ սա հանգեցնում է նրան, որ ընտանիքը կրկին բաժանվում է. մի մասը վերադառնում է հայրենիք, իսկ մյուս մասն էլ շարունակում է մնալ արտերկրում, աշխատել և գումար ուղարկել Հայաստան վերադարձած հարազատներին:

Վերադարձի այլ գործոնների մեջ կարելի է նշել ընտանիքի **անդամներից մեկի մահը**, որից հետո ընտանիքը, առաջնորդվելով հոգեբանական գործոններով, որոշում է վերադառնալ հայրենիք բարեկամներին և ազգականներին մոտ լինելու համար: Պատահում են դեպքեր, երբ ընտանիքը կամ անդամներից որևէ մեկը վերադառնում է ընդունող երկրի կլիմայական պայմաններին չհարմարվելու կամ այլ **առողջական խնդիրներ** ունենալու պատճառով (երբեմն նախընտրելով օգտվել ՀՀ-ի առողջապահական ծառայություններից):

*«Ինձ մոտ ալերգիա սկսվեց. այնտեղի ջուրն ու օդը չէի վերցնում: Ստրեսից էր նաև, քանի որ ամբողջ օրը տանը մենակ էի նստում, չէի կարողանում ոչ մեկի հետ շփվել: Շատ բժիշկների մոտ գնացի՛նք, մեկն էլ ասեց՝ տարեք հայրենիք, կանցնի, կարոտից է: Չէի կարողանում կլիմային հարմարվել»:* Կին, 28 տ., Երևան

Հարցվողներից մեկը վերադարձել է այն ժամանակ, երբ ՀՀ-ում **նոր օրենք է ընդունվել «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին»**, որն անհամեմատ մեղմել է մինչ այդ զինծառայությունից խուսափելու համար պատասխանատվությունը:

Հարցվողների շրջանում եղել են նաև փոքրաթիվ դեպքեր, երբ վերադարձի պատճառը եղել է **արտաքսումը**:

**Վերադարձի կազմակերպումը**, որպես կանոն, բարդ չի լինում: Վերադարձողների մեջ քիչ են այնպիսիք, ովքեր արտերկրում իրենց կյանքի ընթացքում մեծ սեփականություն են ձեռք բերել: Այդպիսիներից որոշակի ժամանակ է պահանջվում գույքը վաճառելու համար: Իսկ մեծ մասը, ում գույքը սահմանափակվում է կենցաղային իրերով, ավելի հաճախ այն թողնում են, և միայն հազվադեպ են իրականացնում դրա տեղափոխությունը Հայաստան:

Պետք է ասել, որ փոքր է այն մարդկանց թիվը, ովքեր վերադառնալիս լավ **ակնկալիքներ** են ունեցել: Եվ ավելի փոքրաթիվ են նրանք, ում պարագայում այդ ակնկալիքներն իրականացել են: Սա թերևս պայմանավորված է նրանով, որ, ինչպես նշվել է վերը, շատերը վերադարձել են, քանի որ արդեն դժվար էր արտերկրում ապրելը:

*«Ես շատ լավ գիտեի, որ գալիս էի ծանր պայմաններում ապրելու: Գիտեի, որ գալու եմ գյուղում սկեսորիս ու սկեսրայրիս հետ ապրելու, բայց նաև որոշել էի, որ երեխաներս գյուղում դպրոց չեն գնալու: Ամուսինս այնքան պիտի գնա արտագնա աշխատանքի, մինչև կարողանանք տուն գնել: Հիմա արդեն Վանաձորում երկու սենյականոց բնակարան ենք գնել, բայց այն դեռ վերանորոգման կարիք ունի: Այդ իսկ պատճառով ամուսինս դեռ շարունակում է գնալ արտագնա աշխատանքի»:* Կին, 27 տ., Վանաձոր

Լավ ակնկալիքներ ունեցողների մեջ են նրանք, ովքեր ավելի վաղ էին գնացել և կորցրել էին Հայաստանի իրականության զգացումը:

*«Մտածում էի, թե փոխվել են Հայաստանի կյանքն ու բարքերը, բայց այդպես չէր: Բարձր վարձատրությամբ աշխատանք չկա, բայց մեծ թանկացումներ են լինում: Այստեղ ավելի դժվար է ապրելը կենցաղային առումով. աշխատածո գումարը չի բավարարում նույնիսկ ընտանիքի առօրյա ծախսերի համար»:* Կին, 29 տ., Երևան

Շատերը պարզապես ակնկալել են ազատվել արտերկրում ունեցած իրենց դժվարություններից: Հատկապես նրանք, ովքեր չէին հարմարվում օտար երկրի կյանքին, ուրախ էին, որ վերադարձել են իրենց հարազատ միջավայր:

*«Ակնկալիքների մասին չէի մտածում, կարևորը իմ տանը լինելի, իմ հողի վրա: Իմ միակ ցանկությունը այդ ժամանակ տուն հասնելն էր»:*  
Տղամարդ, 38 տ., Այգեստան

Շատերը պարզապես ակնկալել են այստեղ աշխատանք գտնել և շարունակել ապրել նույն կյանքով, ինչպես և ապրում էին արտերկրում: Նրանք չեն ակնկալել ո՛չ երկրի տնտեսական առաջընթաց, ո՛չ իրենց կյանքի սոցիալական կամ այլ պայմանների բարելավում:

*«Ես նախապես պայմանավորվածություններ էի ձեռք բերել: Մի քանի ծրագրի գաղափար կար: Հույս ունեի, որ կզբաղվեմ կինոյով, թատրոնով և մանկավարժությամբ: Սպասելիքներս իրականացան կիսով չափ: Մանկավարժության հարցը հեշտ և արագ լուծվեց. այժմ դասավանդում եմ Երևանի թատերական ինստիտուտում: Մի փոքր ֆիլմ եմ նկարահանել, որը շուտով պատրաստ կլինի: Բայց կան ծրագրեր, որոնք դեռևս չեն իրագործվել»:* Տղամարդ, 49 տ., Երևան

Այն եզակի դեպքերում, երբ հարցվողներն ակնկալել են Հայաստանը բարեփոխված գտնել, նրանց հույսերը, ըստ հարցման արդյունքների, չեն արդարացել:

#### ԷՄԻԳՐԱՑԻՈՆ ՓՈՐՁԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՎԵԼԻՄ

Հարցվողների կազմում բավականին քիչ են այն ընտանիքներն ու անհատները, ովքեր արտերկրում բնակվելու ընթացքում որոշակի կապիտալ են կուտակել: Շատերը, որպես կանոն, կարողացել են հոգալ իրենց առօրյա հոգսերը, և քչերին է հաջողվել խնայողություններ անել:

Այն միգրանտները, ովքեր իրենց հետ որոշակի գումար են բերել և ներդրել են բիզնեսի մեջ, նշել են, որ այդ գումարը գոյացել է արտերկրում իրենց տան կամ մեքենայի վաճառքից: Նշենք, որ հարցվողների մեջ այդպիսիք ընդամենը 2-ն են: Իսկ վերադարձողների մեծամասնությունն արտերկրում ունեցել է միայն կենցաղային տեխնիկա և այլ կենցաղային իրեր:

*«Չեմ էլ փոշմանել, որ գնացել եմ, թեև խնայողություններ չարեցիկնք, մեծ ունեցվածք չավելացրի՛նք: Իսկ սպասքը և մանր-մունր բաները բերել ենք»:* Կին, 27 տ., Վանաձոր

*«Իմ բերած ամբողջ գումարը գոյացել էր իմ բնակարանի վաճառքից: Այդ գումարի մի մասով տուն գնեցի Հայաստանում, մյուս մասն էլ որոշեցի գործի մեջ դնել. գեղեցկության սրահ բացեցի»:* Տղամարդ, 37 տ., Երևան

Այնուամենայնիվ, հարցվողների մեծամասնությունը ֆինանսական ապահովվածության տեսանկյունից ընդհանուր առմամբ գոհ է իր միգրացիոն փորձից:



Այլ հարց է միգրացիոն փորձի գնահատումը նոր գիտելիքների ու հմտությունների յուրացման, աշխատանքային փորձի, ինչպես նաև Հայաստանում մասնագիտական առաջխաղացմանը նպաստելու տեսանկյունից: Այստեղ հարկ է նշել, որ հարցվողների մեջ շատ փոքր է այն մարդկանց թիվը, ովքեր արտերկրում կատարել են լավ կրթություն և բարձր որակավորում պահանջող աշխատանք, ինչը կարող էր նպաստել նրանց մասնագիտական առաջխաղացմանը Հայաստանում: Հարցվողների մեծամասնությունը զբաղված է եղել շինարարությամբ, առևտրով և ոչ մասնագիտական ծառայությունների մատուցմամբ:

Այնուամենայնիվ, կան մարդիկ, ովքեր արտերկրում բնակվելու և աշխատելու ընթացքում ձեռք են բերել որոշակի հմտություններ (մասնագիտական, լեզվական, մարդկանց հետ հաղորդակցման, այլ) և աշխատանքային փորձ: Նրանցից ոմանք կարողանում են դրանք կիրառել Հայաստանում, իսկ ոմանք՝ ոչ, որովհետև այլ բնագավառում են աշխատում:

*«Բավականին լավ վարպետի փորձ եմ ձեռք բերել, բայց քանի որ այստեղ շինարարություն չեմ անում, փորձս չի կիրառվում»:* Տղամարդ, 50 տ., Արփի

*«Ձեռք եմ բերել արտադրության կազմակերպման, շինարարական ոլորտում սպասարկման փորձ, սակայն այդ հմտությունները հայրենիքում չեմ կիրառել, քանի որ Հայաստանում կարելի է ինչ-որ քանի հասնել լկտիության շնորհիվ»:* Տղամարդ, 37 տ., Երևան

Վերադարձողներից շատերն այստեղ աշխատանք փնտրելիս հիմնականում կողմնորոշվում են աշխատավարձի չափով: Նրանք հաճախ ստանձնում են ցանկացած աշխատանք, եթե կարծում են, որ առաջարկվող աշխատավարձը կբավարարի ընտանիքի հոգսերը հոգալու համար: Կան նաև մարդիկ, ովքեր կարճ ժամանակահատվածում մի քանի գործ են փոխում՝ իրենց փորձելով տարբեր բնագավառներում՝ տրանսպորտային ծառայությունների, առևտրի, արտադրության, շինարարության և այլն: Հիմնականում վերադարձածներն աշխատում են որպես ծառայողներ և միայն փոքրաթիվ մարդիկ են զբաղեցնում միջին և բարձր օղակի մենեջերների պաշտոններ:

Ասվածից արդեն իսկ կարելի է ենթադրել, որ Հայաստան վերադառնալիս միգրանտների մեծամասնությունը կոնկրետ աշխատանքային առաջարկ չի ունենում: Նրանք վերադառնում են տեղում աշխատանք փնտրելու մտադրությամբ և ինչ-որ գործ գտնելու հույսով: Մեր հարցվողների շրջանում միայն մեկ հոգի է վերադառնալիս նախապես իմացել, որ կոնկրետ աշխատանքի է անցնելու:

*«2005 թվականին եկել էի Հայաստան, աշխատանք փնտրեցի, չկարողացա գտնել, Հայաստանից հոգնեցի, թողեցի նորից գնացի»:*

*Գրանից հետո արդեն 2007թ.- ին զանգեցին, ասացին, որ կոնկրետ աշխատանք կա: Այլապես ես չէի գա»:* Տղամարդ, 47 տ., Երևան

Կան մարդիկ, ովքեր ընտանիքով վերադառնալուց հետո, հարմար աշխատանք չգտնելու պատճառով, ստիպված են եղել ընտանիքը թողնել Հայաստանում, իսկ իրենք, որպես աշխանքային միգրանտ, մեկնել արտերկիր:

*«Կարծում եմ ամուսինս միշտ էլ կգնա արտագնա աշխատանքի: Իսկ ես միշտ մենակ կմնամ Հայաստանում, այդ պատճառով էլ ուզում եմ գնալ նրա մոտ: Ուզում եմ ընտանիքս միասին ապրի»:* Կին, 27 տ., Վանաձոր

Այն անձինք, ովքեր վերադարձել են ծերության տարիներին և ունեն առողջական դժվարություններ, ինչ խոսք, աշխատանք չեն փնտրել: Նրանք վերադարձել են Հայաստան այն ակնկալիքով, որ արտերկրում բնակվող զավակներն իրենց ֆինանսական աջակցություն կցուցաբերեն:

Կանայք, կարելի է ասել, հիմնականում արտերկրում չեն աշխատել: Ինչպես և այստեղ, նրանք զբաղվել են տնային տնտեսություն վարելով և երեխաների խնամքով, ուստի նրանց ձեռքբերումները միգրացիոն փորձից առանձնապես մեծ չեն:

Երիտասարդները, ովքեր այնտեղ դպրոց են գնացել, բարձր են գնահատում իրենց ստացած գիտելիքները և այն, որ առիթ են ունեցել ապրելու այլ մշակույթ ունեցող երկրում, շփվել այլ կենսակերպ և աշխարհայացք ունեցող մարդկանց հետ: Նրանք գտնում են, որ դա դրականորեն է ազդել իրենց աշխարհընկալման և մարդկանց հետ փոխհարաբերություններ կառուցելու վրա:

**Հայաստանում վերահաստատվելու դժվարությունների** շարքում հարցվողները հիմնականում նշում են հարմար աշխատանք գտնելու և քիզնես հիմնելու հետ կապված բարդությունները:

**Աշխատանք գտնելու հետ կապված բարդությունը** պայմանավորված է ոչ այնքան աշխատատեղերի բացակայությամբ, որքան հարմար պայմաններով աշխատանքի պակասով. աշխատանք, որը կհամապատասխանի անհատի կրթությանը, մասնագիտությանը, ակնկալվող վարձատրությանը:

*«Գալուց հետո, անմիջապես սկսեցի աշխատանք փնտրել: Ինտենսիվ փնտրում էի: Բոլոր գեղեցկության սրահները մտնում, հարցնում էի, հետաքրքրվում էի: Մի անգամ էլ շատ պատահական մի տեղ մտա, պարզվեց, որ ազատ տեղ ունեն, գործս նայեցին, հավանեցին, ինձ կանչեցին աշխատանքի»:* Կին, 25 տ., Երևան

Մարդկանց մեջ տարածված է այն կարծիքը, որ հարմար պայմաններով աշխատանք գտնելու իրենց դժվարությունները պայմանավորված են նրանով, որ մնան աշխատանքը մատչելի է միայն նրանց, ովքեր ծանոթ ունեն, ով կարող է միջնոր-

դել այդ աշխատանքը ստանձնելու համար: Մյուս կողմից, հարցվողների մեջ կան մարդիկ, ովքեր նշում են, որ իրենց համար դժվար չի եղել աշխատանք գտնելը, քանի որ նրանք հարմար պահի, հարմար վայրում ծանոթ են ունեցել, ով միջնորդել է աշխատանքի տեղավորվելու գործում:

*«Ուզում էի ուսուցչուհու աշխատանք գտնել, մադարիչով խոստացել էին: Երկար ժամանակ էր սպասում էի, հետո պարզվեց, որ պիտի ինչ-որ մեկին հանեն, որ ինձ ընդունեն: Այդպես չուզեցի, համաձայնեցի գործավարուհի աշխատել չնչին աշխատավարձով»:* Կին, 23 տ., Վանաձոր

**Սեփական բիզնեսը հիմնելու և կառավարելու հարցում հարցվողների հիմնական դժվարությունը** կապված է եղել հարկային դաշտում հարաբերությունների կազմակերպման արդյունավետության, ինչպես նաև Հայաստանում ընդհանրապես բիզնես հարաբերությունների և բիզնես էթիկայի կայացման ցածր մակարդակի հետ: Նրանք նշում են, որ հաճախ հարաբերությունները ոչ ֆորմալ բնույթ են կրում, պայմանավորվածությունները բանավոր են լինում, ինչը մեծացնում է գործարքների ռիսկերը:

*«Մի քանի տարի առաջ տաքսի ծառայություն բացեցի: Հետո զգացի, որ ես չեմ կարող այստեղ հարկային դաշտում աշխատել: Ասացի ավելի լավ է գլուխս կախ ինչ-որ մեկի համար աշխատեմ, քան հարկատու լինեմ. բացի գլխացավանքից՝ ոչ մի օգուտ»:* Տղամարդ, 30 տ., Երևան

Մյուս կողմից, դժվարություն է առաջանում պետական բյուրոկրատական համակարգում ինչ-որ հարց լուծելիս: Հարցվողները նշում են, որ նույնիսկ մեկ փաստաթղթի համար ստիպված են լինում երկար ժամանակ կորցնել և քաշքշուկի մեջ ընկնել: Հայաստանում սեփական բիզնեսը զարգացնելու հարցում, ըստ հարցվողների, ոչ պակաս խոչընդոտ է սպառողների անվճարունակությունը:

Հայաստանում վերահաստատվելու հետ կապված այլ հիմնախնդիրների շարքում հարցվողները նշում են նաև **լեզվական խոչընդոտները**:

*«Երեխաներս ուզում են գնալ Ռուսաստան: Նրանք այնտեղ էին սովորում, նրանց շրջապատն այնտեղ է: Հայերեն գրեթե չգիտեն: Իրենց համար այստեղ շատ դժվար է մարդկանց հետ շփվել, այստեղ ձանձարանում են»:* Կին, 43 տ., Սպիտակ

Հատկապես նրանք, ովքեր վերադարձել են Հայաստանի գյուղական բնակավայրեր, դժգոհում են **ժամանցի ու հանգիստի կազմակերպման հնարավորությունների անհասանելիությունից**:

Կան մարդիկ, ում համար **դժվար է եղել հարմարվել հայաստանյան այնպիսի քաղաքներին**, ինչպիսիք են անձնական կամ ընտանեկան անկախ և ուրիշի աչքի համար անմատչելի կյանք վարելու անհնարիմությունը, հարազատների և համայնքի կարծիքի պարտադրումը և այլն:

*«Երբ ես եկա, այդ տարին պետք է 10-րդ դասարան գնայի: Գնացի ռուսական դպրոց, որովհետև հայերենին լավ չէի տիրապետում: Ռուսական դպրոցի երեխաների մեծ մասն էլ ապրել էին Ռուսաստանում. ինձ պես էին, ինձ նման էին մտածում: Ռուսաստանի ու Հայաստանի մեջ շատ տարբերություններ կան: Այնտեղ շատ չեն բամբասում, իրար կյանքի մեջ չեն մտնում, իսկ այստեղ շատ են սիրում խառնվել մարդկանց կյանքի մեջ»:* Կին, 18 տ., Երևան

Փոքրաթիվ չեն նրանք, ովքեր գտնում են, որ **Հայաստանում մեծ է սոցիալական անարդարությունը**, և նույնիսկ օրենքը որոշակի վերապահումներով է գործում՝ կախված անհատի սոցիալական կարգավիճակից:

#### ՌԵԵՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ինչ վերաբերում է այն հեռանկարներին, որ հարցվողները տեսնում են իրենց առջև, ապա պետք է ասել, որ այստեղ ևս մարդիկ առանձնապես լավատես չեն: Նրանք հիմնականում մտածում են պարզապես իրենց առօրյա հոգսերը հոգալու, ընտանիքը պահելու մասին և չեն ակնկալում, որ իրենց կյանքը ինչ-որ կերպ կբարեփոխվի:

*«Հեռանկարներ չեն տեսնում, բայց ինձ այստեղ ավելի լավ են զգում, քան օտար հողի վրա, թեև տղաս այնտեղ է: Ես իմ կյանքն արդեն ապրել եմ, հանգիստ եմ ուզում, այստեղ կա այդ հանգստությունը»:* Կին, 61 տ., Երևան

*«Հայաստանում հնարավոր է մենակ հազիվ յոլա գնալ: Դրանից ավել քան դեռ չեմ սպասում: Այստեղ շատ աշխատում ես, քիչ ստանում: Շարունակելու եմ աշխատել, հույս ունեմ մի օր ավելի լավ կլինի»:* Տղամարդ, 38 տ., Այգեստան

Լավատես են նրանք, ովքեր, ունենալով լավ կրթություն, որոշակի հաջողություններ ունեն իրենց աշխատանքում և մասնագիտական առաջխաղացում են ակնկալում:

Կան մարդիկ, ովքեր իրենց ապագան կապում են երեխաների հետ: Նրանք սպասում են, մինչև երեխաները մեծանան: Կախված նրանից, թե վերջինները

որտեղ կհաջողեն դասավորել իրենց կյանքը, նրանք այնտեղ էլ կապրեն իրենց զավակների հետ:

Այն երիտասարդները, ովքեր սովորում են, իրենց հեռանկարը կապում են ուսումն ավարտելու և աշխատանք գտնելու հետ: Նրանք հստակ պատկերացում չունեն, թե ինչ է իրենց սպասում, սակայն հուսով են, որ լավ աշխատանք կունենան և կմնան Հայաստանում:

Կան նաև մարդիկ, ովքեր սպասում են որոշակի պահի (երեխաների դպրոցն ավարտելուն կամ այլ), որպեսզի կրկին մեկնեն:

*«Եթե աշխատանք չգտնեմ, կմեկնեմ, քայց հաստատ ոչ Ռուսաստան, այլ Եվրոպա: Ռուսները այլ ազգերի հանդեպ վատ են տրամադրված ու վատ են վերաբերվում»:* Կին, 18 տ., Երևան

Ամփոփելով, նշենք, որ արտերկրից վերադարձած ընտանիքների անդամների հետ հարցումներն այնպիսի տպավորություն են ստեղծում, կարծես այս մարդիկ իրենց տեղը չեն կարողանում գտնել ոչ այն երկրում, որտեղից վերադարձել են, ոչ էլ Հայաստանում: Նրանցից շատերը կրկին մեկնելու ցանկություն (ոմանք նաև հստակ մտադրություն) ունեն, սակայն ոչ թե հետ Ռուսաստան (որտեղից վերադարձել է նրանց մեծամասնությունը), այլ ԱՄՆ կամ ԵՄ երկրներ:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐ

### ԿԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

Միգրանտների այս խումբը ներկայացնում են մարդիկ, ովքեր արտերկիր են մեկնել միայն աշխատելու նպատակով, քանի որ այստեղ կամ չեն կարողացել մշտական աշխատանք գտնել, կամ էլ կարիք են ունեցել ավելի լուրջ ընտանեկան խնդիրներ լուծելու՝ բնակարան գնել, վճարել երեխաների ուսման համար, մարել այս կամ այն պատճառով կուտակված խոշոր պարտքերը և այլն:

Միգրանտներից մի քանիսն էլ արտերկիր մեկնելիս ընդունող երկրում երկար ժամանակ անցկացնելու և աշխատանք գտնելու մտադրություն չեն ունեցել. նրանք պարզապես մեկնել են իրենց հարազատներին կամ ընկերներին այցելության: Սակայն այս կարճատև այցելության ընթացքում աշխատանքի առաջարկ են ստացել և որոշել են ընդունել այն:

*«Մեկնեցի քրոջս հրավերով: Հյուրընկալվելիս անսպասելիորեն ծանոթացա մի երիտասարդ հայ ընտանիքի հետ, որին դաշակ էր պետք: Առաջարկն ընդունեցի՝ մտածելով, որ կարճ ժամանակ կաշխատեմ ու*

*կվերադարձան Հայաստան: Բայց այնքան լավ մարդիկ էին, որ մնացի 5 տարի»:* Կին, 54 տ., Երևան

Մի քանի միգրանտներ էլ արտերկիր են մեկնել սովորելու նպատակով, բայց միաժամանակ նաև աշխատել են ընդունող երկրում, կամ էլ ուսումն ավարտելուց հետո որոշել են մի քանի տարի աշխատել այնտեղ՝ չուզենալով «դատարկածեռն» վերադառնալ:

Ինչպես արդեն նշվել է, աշխատանքային միգրանտների համար ամենագրավիչ երկիրը եղել և շարունակում է մնալ Ռուսաստանի Դաշնությունը: Աշխատանքային միգրանտների մեծամասնությունը գերադասել է մեկնել հենց ՌԴ, քանի որ նախ և առաջ այստեղ ունեցել է բարեկամներ և ընկերներ, ովքեր իրենց աջակցությունն են առաջարկել աշխատանք գտնելու և այլ հարցերում: Բացի այդ, միգրանտների մեծամասնությունը, որպես մեկնման երկրի ընտրությունը պայմանավորող գործոններ նշում է նաև ընդունող երկրի լեզվի իմացությունը, մուտքի արտոնագիր ստանալու անհրաժեշտության բացակայությունը, ինչպես նաև համեմատաբար փոքր ճանապարհածախսը: Երկրորդ տեղում Միացյալ Նահանգներն են, ուր ևս միգրանտները մեկնել են մեծամասամբ ծանոթների և ազգականների հրավերով:

Միգրանտների գերակշիռ մեծամասնությունն ինքնուրույն է կազմակերպել իր մեկնումը և լուծել փաստաթղթային խնդիրները ընդունող երկրում: Նրանցից ոմանք ստիպված են եղել վաճառել իրենց գույքը կամ գումար պարտք վերցնել՝ ճանապարհածախսը հոգալու համար: Աշխատանքային միգրանտներից շատ քչերն են, որ մեկնել են միջնորդ կազմակերպության կամ անհատի միջոցով: Նման դեպքերում միջնորդները հոգացել են ճանապարհածախսն ու լուծել փաստաթղթային և բնակարանային խնդիրները: Միգրանտների մեծամասնությունն ընդունող երկրում ապրել և աշխատել է օրինական փաստաթղթերով, թեպետ, ՌԴ մեկնած միգրանտներից շատերը դրանք ձեռք են բերել ոչ օրինական ճանապարհով՝ համապատասխան պաշտոնյաներին կաշառելով:

Աշխատանքային միգրանտների գերակշիռ մեծամասնությունը նշում է, որ իր **ակնկալիքները հիմնականում արդարացել են**, քանզի մեկնելուց առաջ գիտեին՝ ինչ աշխատանք են անելու և որքան են վաստակելու: Այն միգրանտները, ում **ակնկալիքները չեն արդարացել կամ արդարացել են մասամբ**, հիմնականում մեկնել են առանց աշխատանքի վերաբերյալ նախնական պայմանավորվածություն: Այս խմբի ներկայացուցիչներից շատերը հույս են ունեցել ընդունող երկրում մեծ գումարներ վաստակել Հայաստանում բնակարան գնելու համար՝ ինչը նրանց չի հաջողվել:

Աշխատանքային միգրանտների մեծամասնությունն ասում է, թե **ընդունող երկրում խնդիրներ** չի ունեցել և հարմարվել է շատ հեշտ ու արագ: Սա կարելի է բացատրել հիմնականում երկու հանգամանքներով. 1. միգրանտների մեծամաս-

նությունը մեկնել է ազգականների կամ ծանոթների մոտ, ովքեր նրանց օգնել են սկզբնական շրջանում, 2. միգրանտների մի ոչ փոքր խումբ էլ դեռևս ԽՍՀՄ շրջանում առիթ է ունեցել բավականին հաճախ լինելու ընդունող երկրում (Ռուսաստան, Ուկրաինա և այլն) և այժմ նրանց համար գրեթե ոչինչ նոր չի եղել:

Միգրանտներից ոմանք սկզբում իրենց ճնշված են զգացել ընդունող երկրի լեզուն չիմանալու և բարբերին անձանոթ լինելու պատճառով, սակայն շուտով սովորել և հարմարվել են: Ոմանք էլ լուրջ առողջական խնդիրներ են ունեցել՝ չկարողանալով հարմարվել ընդունող երկրի կլիմային, ջրին և սննդին: Այնուամենայնիվ, անկախ ընդունող երկրում խնդիրների առկայությունից կամ բացակայությունից, գրեթե բոլոր աշխատանքային միգրանտները նշում են, որ ամենամեծ խնդիրը եղել է հարազատներից հեռու լինելը և կարոտը:

**Դժվարությունների** մասին խոսելիս, միգրանտները հիմնականում նշում են աշխատանք և կացարան գտնելը: Նրանք, ովքեր մեկնել են ազգականների հրավերով, նախնական շրջանում ապրել են վերջիններիս հետ, իսկ այնուհետև, աշխատանք գտնելուց հետո, բնակարան են վարձել՝ մեծամասամբ աշխատանքային ընկերների հետ միասին: ՌԴ-ում շինարարության ոլորտում աշխատողների մեծամասնությունն ապրել է հենց շինհրապարակում հարմարեցված տնակներում, կամ կառուցվող շենքի մի սենյակում: Հատկանշական է, որ այս խմբի ներկայացուցիչները դա չեն նշում որպես խնդիր կամ անհարմարություն: Ընդհակառակը, նրանք գոհունակությամբ նշում են, որ բնակարանային խնդիրները լուծվել են գործատուի կողմից, կամ նրա հետ պայմանավորվածություն ձեռք բերելու արդյունքում:

Սեզոնային միգրանտների մեծամասնությունը նշում է նաև, որ աշխատանք և **կացարան գտնելու հետ կապված դժվարություններ** ունեցել է միայն առաջին տարում, այնուհետև արդեն նախօրոք է իմացել, թե ինչ աշխատանք է անելու և որտեղ է ապրելու: Նրանց ասելով, գլխավորն այստեղ հուսալի մարդկանց հետ աշխատելն է, ովքեր չեն խաբի և կվճարեն նախապես պայմանավորված գումարը:

Անհամեմատ ավելի լավ պայմաններում են եղել այն միգրանտները, ովքեր ապրել են հենց գործատուի ընտանիքում՝ աշխատելով որպես դայակ, աղախին և այլն:

ՌԴ մեկնած միգրանտները նշում են, որ մինչև 2003թ-ը իրենց համար շատ ավելի հեշտ է եղել ապրել և աշխատել այնտեղ, իսկ դրանից հետո արդեն, օրենքների խստացման պատճառով, խնդիրներ են ունեցել ոստիկանների հաճախակի ստուգումների և վատ վերաբերմունքի պատճառով:

*«Սարսափելի ճնշված եմ եղել, ստորացած էի զգում ոստիկանների մոտ: Նույնն էլ կինս: Մենք ոչ մի տեղ չենք գնացել, բացի աշխատանքի գնալուց: Տանից գրեթե դուրս չենք եկել»:* Տղամարդ, 60 տ., Վանաձոր

Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում ապրող և աշխատող միգրանտների համար քիչ խնդիրներ չեն ստեղծել նաև ազգայնականները կամ այսպես կոչված սափրագլուխները.

*«Մ. Պետերբուրգը սափրագլուխների որջ է, անընդհատ լարվածության մեջ էինք: Կարելի է ասել՝ դա է մեր վերադառնալու պատճառներից մեկը»:* Տղամարդ, 43 տ., Գնդեվազ

Միգրանտները նշում են, որ կենցաղային պայմանների, սննդի կամ կլիմայի հետ կապված խնդիրները ոչ թե լուծել են, այլ պարզապես համակերպվել ու վարժվել են դրանց: Ինչ վերաբերում է աշխատանքին, ապա այստեղ հիմնականում խնդիրները լուծվել են ընկերների և ծանոթների միջոցով: Այստեղ մեծ դեր է խաղացել նաև փորձառությունը. միգրանտները նշում են, որ ժամանակի ընթացքում նրանք սկսել են հասկանալ, թե ում մոտ կարելի է աշխատել, ում մոտ չարժե, ով կխաբի, կամ ինչպես է ավելի ճիշտ պայմանավորվել գործատուի հետ:

Փորձը շատ կարևոր է նաև **անձնական անվտանգության** հարցում: Հարցվողները նշում են, որ ժամանակի ընթացքում սովորել են ապրել այնպես, որ հանցագործների կամ ազգայնականների հանդիպելու կամ նրանց հետ ընդհարում ունենալու հավանականությունը նվազագույնի հասցվի:

*«Միշտ պետք է ուշադիր լինես քո անվտանգության համար. ուշ ժամերին դուրս չէի գալիս, եթե հանդիպում էի կասկածելի մարդկանց, աշխատում էի իրենց ուզածը տայի՝ գնային: Միշտ մի քանի ռուբլի առանձին պահում էի մոտս, որ մոտենում էին, հանում էի, ասում էի «սա է... կեսը ինձ, կեսը՝ քեզ», թե չէ կարող է հարձակվեն, եթե իմանան, որ մոտդ փող կա: Բայց եթե ինչ-որ տեղ մենակ ես, պետք է հարմարվես, այսպես թե այնպես ենթարկվողի դերում պետք է լինես»:* Տղամարդ, 53 տ., Գնդեվազ

Դե, իսկ **փաստաթղթային խնդիրների** լուծման համար ՌԴ մեկնող միգրանտներին քաջ հայտնի է երկու տարբերակ. վճարել ավելի շատ և ձեռք բերել օրինական գրանցում, կամ վճարել ավելի քիչ՝ ամեն անգամ ոստիկաններին կաշառելով: Վերջին տարիների ընթացքում միգրանտներն ավելի հաճախ նախընտրել են երկրորդ տարբերակը:

## ՎԵՐԱԴԱՐՁ ԵՎ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

Հայրենիք վերադառնալու պատճառների մասին խոսելիս միգրանտները բազմաթիվ փաստարկներ ու դրդապատճառներ են նշում, սակայն դրանք կարելի է հիմնականում բաժանել երեք խմբի. **1. առողջական խնդիրներ և տարիք, 2. արտագնա աշխատանքի անարդյունավետություն և 3. կարոտ կամ երեխաներին հայրենիքում մեծացնելու ցանկություն:**



Այն միգրանտները, ովքեր նշել են, թե Հայաստան են վերադարձել իրենց **առողջական խնդիրների պատճառով**, հիմնականում ավագ սերնդի ներկայացուցիչներ են: Նրանք ասում են, թե իրենց տարիքում արդեն դժվար է «անընդհատ գնալ ու գալ», ապրել ոչ նորմալ պայմաններում, նորմալ չսնվել և ծանր ֆիզիկական աշխատանք կատարել: Այս միգրանտներից մի քանիսն իրենց միգրացիոն գործընթացը դադարեցնելուց առաջ իրենց աշխատանքներում ընդգրկել են իրենց երեխաներին, ովքեր պետք է շարունակեին իրենց գործը:

Հայրենադարձ միգրանտների մեծամասնությունն ասում է, թե Հայաստան է վերադարձել, քանզի այլևս չէր կարողանում ապրել իր ընտանիքից հեռու: Միգրանտների այս խումբը կարելի է բաժանել երկու խմբի: **Առաջին խումբը** կազմում են այն միգրանտները, ովքեր, չկարողանալով կամ չցանակնալով այլ երկիր տեղափոխել իրենց ընտանիքը, տարիներ շարունակ տարվա մեծ մասն անցկացրել են հարազատներից հեռու: Նրանք վերադարձել են Հայաստան՝ գերադասելով վաստակել ավելի քիչ, բայց լինել իրենց ընտանիքների կողքին: **Երկրորդ խումբը** ավելի երիտասարդ սերնդի միգրանտներն են, ովքեր արտերկիր են մեկնել իրենց մանկահասակ երեխաների հետ: Այս միգրանտները նշում են, որ ոչ մի դեպքում չէին ցանկանա, որ իրենց երեխաները մեծանան այլ երկրում (մասնավորապես ՌԳ-ում), քանի որ այնտեղ նրանց համար անվտանգ չէ, և բացի այդ, օտար բարքերն անընդունելի են իրենց համար:

*«Երեխաներս մեծացան, դարձան դայրոցակահասակ, ու չէի ուզում, որ այնտեղ դայրոց գնան: Չէի ուզում, որ նրանց երեխաների հետ շփվեն: Ռուսաստանում 7-8 տարեկան երեխան խոսելիս արդեն հայտնանքներ է օգտագործում, ծխում է, խմում: Ուզում էի, որ երեխաներս Հայաստանում մեծանան՝ չնայած, որ լավ էի վաստակում»:* Տղամարդ, 42 տ., Ջովուրի

Քիչ չեն նաև այն միգրանտները, ովքեր վերադարձել են Հայաստան, քանի որ **վատացել են արտերկրում աշխատելու և ապրելու պայմանները**, կամ ծագել են փաստաթղթային դժվարություններ: Մրա հետևանքով նրանք ստիպված են եղել վաստակած գումարի մեծ մասը ծախսել տարբեր պաշտոնյաներին կաշառելու համար: Նման պայմաններում, մնացած գումարն արդեն բավարար չի եղել արտերկրում ապրելու և Հայաստանում բնակվող ընտանիքների հոգսերը հոգալու համար: Միգրանտների այս խումբը գրեթե ամբողջությամբ կազմված է ՌԳ-մեկնողներից:

Միգրանտների մի ոչ մեծ խումբ էլ նշում է, թե Հայաստան իրենց բերել է **հայրենիքի նկատմամբ ունեցած սերը**: Այս խմբի ներկայացուցիչների մեծամասնությունն ասում է, թե երբեք էլ օտար երկրներում հաստատվելու մտադրություն չի ունեցել: Այս միգրանտները հայրենիք վերադառնալու որոշումը կայացրել են, երբ արդեն բավականաչափ գումար են ունեցել Հայաստանում մի փոքր բիզնես

հիմնելու, հողակտոր գնելու համար և այլն, կամ էլ երբ լուծել են ընտանիքի ֆինանսական խոշոր խնդիրները, մարել են ունեցած պարտքերը և այլն:

*«Ահավոր մեծ կարոտ էի զգում, հոգեբանորեն էլ չէր ստացվում մնալ. զգում էի, որ դա իմը չէ, դրանք իմ կյանքից խլված տարիներ են: Ես միշտ սրտի ցավով եմ գնացել»:* Տղամարդ, 60 տ., Վանաձոր

Հարցված միգրանտներից մի քանիսն էլ Հայաստան են վերադարձել ընտանեկան հանգամանքներից դրդված. հարազատի մահ, և այլն:

**Վերադարձի գործընթացի կազմակերպման** հարցում աշխատանքային միգրանտների գերակշիռ մեծամասնությունը խնդիրներ չի ունեցել, քանզի նրանք, եթե նույնիսկ ինչ-որ գույք են ունեցել արտերկրում, ապա այն Հայաստան չեն տեղափոխել. թողել են այնտեղ մնացող հարազատներին, ընկերներին կամ էլ վաճառել են: Հայաստան նրանք բերել են միայն գումար:

Միգրանտներից ոմանց հաջողվել է հայրենիք վերադառնալ այդ որոշումը կայացնելուց մի քանի ամիս անց միայն. պատճառն անհրաժեշտ գումարի բացակայությունն է եղել, քանի որ նրանց համար վերջին ուղևորությունը կամ արտերկրում բնակության վերջին շրջանն անհաջող են եղել: Ոմանք էլ տոմս են գնել վերադառնալուց դեռևս չորս-հինգ ամիս առաջ, քանի որ այդ դեպքում տոմսը շատ ավելի է ծան է:

Հայրենիք վերադարձողներից ոմանք ոչ մեծ խնդիրներ են ունեցել օդանավակայանում՝ երկրում ապրելու թույլտվության և այլ անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության պատճառով: Այս դեպքում, ՌԳ-ից վերադարձող միգրանտները խնդիրը լուծել են ոչ մեծ կաշառքով, իսկ այլ երկրներից վերադարձողները (Եվրամիություն) ստիպված են եղել տուգանք վճարել: Եվ միգրանտներից միայն մեկն է, որ հայրենիք վերադառնալու համար ստիպված է եղել հանձնվել տեղի էմիգրացիոն գործակալությանը (Ճապոնիա):

Աշխատանքային միգրանտների՝ **նախքան Հայաստան վերադառնալն ունեցած ակնկալիքների** մասին խոսելիս, նրանց կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի. 1. միգրանտներ, ովքեր արտերկրում հետևել են Հայաստանում կատարվող իրադարձություններին և քաջատեղյակ էին տեղի ունեցող փոփոխություններին, և 2. միգրանտներ, ովքեր անտեղյակ են եղել:

Կարելի է ասել, որ առաջին խմբի ներկայացուցիչներն ավելի պատրաստված են վերադարձել Հայաստան, և նրանց ակնկալիքներն ավելի իրատեսական են եղել: Այս խմբի ներկայացուցիչների մի մասն ասում է, թե, լավատեղյակ լինելով Հայաստանի իրականությանը, աշխատանքային շուկայի պահանջներին, վստահ է եղել, որ որևէ աշխատանք կգտնի: Այս միգրանտների ինքնավստահությունը մեծամասամբ հիմնված է արտերկրում նրանց ունեցած աշխատանքային փորձի ու ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների վրա:

*«Ակնկալում էի, որ լավ աշխատանք կգտնեմ, քանի որ շատ նոր հնտու-  
թյուններ էի ձեռք բերել: Սպասելիքներս լիովին արդարացան. ես  
գիտակցում էի, որ աշխատավարձն այնքան բարձր չի լինելու, ինչպես  
ԱՄՆ-ում, սակայն ուզում էի վերադառնալ և աշխատել իմ մասնագի-  
տությամբ, ձեռք բերածս փորձն ու գիտելիքները կիրառել իմ  
հայրենիքում»:* Կին, 25 տ., Երևան

Միգրանտների այս խմբի ներկայացուցիչների մյուս մասն ասում է, որ հայրենիք է վերադարձել առանց որևէ ակնկալիքի՝ պարզապես ընտանեկան հանգամանք-ներից, առողջական խնդիրներից ելնելով, ստիպված է եղել վերադառնալ, կամ էլ օտար երկրում ապրելն արդեն մի շարք առումներով աննպատակահարմար է դարձել նրանց համար: Ինչևէ, կարելի է ասել, որ այս խմբի ներկայացուցիչներն ավելի լավատես են և ուրախ են վերջապես հայրենիքում լինել, քանի որ այստեղ իրենց ավելի ապահով ու հանգիստ են զգում, թեպետ նշում են, որ հեշտ չի եղել այստեղ վերահաստատվել և միանգամից չէ, որ նրանց հաջողվել է աշխատանք գտնել, կամ իրականացնել նախապես պլանավորած մյուս նախագծերը:

*«Եկա, որ արդեն հանգիստ կյանքով ապրեմ, իմ գյուղատնտեսությունը զարգացնեմ, ու այդպես էլ արեցի»:* Տղամարդ, 69 տ., Ուռուտ

*«Կարելի է ասել՝ ոչ մի անկնկալիք չունեի: Մտածում էի՝ կգամ,  
ընտանիքիս հետ կլինեմ, շնորքս էլ տեղն է. մի բան կանեմ՝ կապրենք»:*  
Տղամարդ, 53 տ., Գնդեվազ

Միգրանտների երկրորդ խմբի ներկայացուցիչներն ասում են, թե Հայաստան վերադառնալուց առաջ հայրենիքի մասին տեղեկություններ ստացել է այստեղ ապրող հարազատներից ու ընկերներից, ովքեր նրանց վստահեցրել են, թե Հայաստանում արդեն շատ բան է փոխվել, և որ այժմ այստեղ էլ կարելի է աշխատանք գտնել: Այս խմբի ներկայացուցիչների մեջ հիասթափվածներն ավելի շատ են: Նրանք նշում են, որ իրենց հույսերը չեն արդարացել. չեն կարողացել աշխատանք գտնել, վարձատրվում են շատ ցածր, իրենց հիմնած փոքր բիզնեսն անհաջողության է մատնվել և այլն:

*«Կարծում էի, թե Հայաստանում էլ գործ կունենամ: Այդպես էին ասում:  
Բայց գործի դիմաց ստացած վաստակն այնքան քիչ է, որ մեծ  
հիասթափություն եմ ապրել. 30000-40000 դրամով չեմ կարող տուն  
պահել»:* Տղամարդ, 35 տ., Արփի

Այս երկու հիմնական խմբերից բացի, կարելի է առանձնացնել մի քանի «հաջողակ» միգրանտների, ովքեր վերադարձել են ակամա. նրանք վերադառ-նալու մտադրություն չեն ունեցել, սակայն Հայաստան կատարած իրենց կարճատև այցի ժամանակ աշխատանքի առաջարկ են ստացել և ընդունել այն:

Այս մի քանի հաջողակներն այսօր բավականին գոհ են թե՛ իրենց աշխատանքից, և թե՛ վարձատրությունից:

## ԷՄԻԳՐԱՑԻՈՆ ՓՈՐՁԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՎԵԼԻՄ

Նախկին աշխատանքային միգրանտների գերակշիռ մեծամասնությունն իր **միգրացիոն փորձը դրական է գնահատում**, թեև գրեթե բոլորն էլ նշում են, որ բազմաթիվ դժվարություններ ու խնդիրներ են ունեցել արտերկրում: Միգրանտները մասնավորապես նշում են իրենց ձեռք բերած աշխատանքային փորձն ու հմտությունը (մասնավորապես շինարարության և առևտրի ոլորտում), ինչպես նաև ինքնուրույն ապրելու, տարբեր մարդկանց հետ շփվելու փորձը:

Միգրանտները գոհ են նաև, որ այդ տարիների ընթացքում, թեպետ չի հաջողվել մեծ գումարներ կուտակել, այնուամենայնիվ կարողացել են հոգալ իրենց ընտանիքների գոնե նվազագույն կարիքները, ինչն այդ տարիներին Հայաստանում անել չէին կարող: Միգրանտներից շատերը նշում են նաև իրենց՝ օտար լեզվի իմացության կատարելագործումը՝ հատկապես նրանք, ովքեր աշխատել են ԱՄՆ-ում կամ ԵՄ երկրներում:

Հարցվածների մեծամասնությունը նշում է, որ իրենց **արտագնա աշխատանքի ընթացքում ձեռքբերած հմտություններն** օգնել են իրենց աշխատանք գտնել նաև Հայաստանում: Հարկ է նշել սակայն, որ այս խմբի մեծամասնությունը ՌԴ-ում շինարարության, ավտոտեխնիկա-սարկյան կամ առևտրի ոլորտում աշխատած միգրանտներն են: Նրանցից շատերը նույնիսկ ասում են, որ թեև մինչ արտագնա աշխատանքի մեկնելը Հայաստանում աշխատել են նույն ոլորտում, այդուհանդերձ արտերկրում սովորել են ավելի որակյալ գործ անել, քանզի այլապես չէին վարձատրվի:

*«Ես հարուստ փորձ եմ ձեռք բերել. այնտեղ եթե ամեն ինչը տեղը տեղին չանես, չես վարձատրվի, այդ պատճառով ջանացի լավ վարպետ դառնալ, որակյալ աշխատանք կատարել սովորեցի»:* Տղամարդ, 52 տ., Արփի

*«Իմ միգրացիոն փորձը ես շատ դրական եմ համարում, քանի որ աշխատանքային փորձ եմ ձեռք բերել, կատարելագործել եմ անգլերենի իմացությունս, սովորել եմ ինքնուրույն ապրել, ինչը շատ է սպակասում մեր հայ երիտասարդությանը: Ես կայացել եմ որպես անհատ»:* Կին, 25 տ., Երևան

**Հայաստանում աշխատանք գտնելու** մասին խոսելիս, միգրանտներից շատերը նշում են, որ կցանկանային Հայաստանում իրենց սեփական փոքր բիզնեսը

հիմնել: Նրանցից ոմանք նույնիսկ փորձել են, սակայն՝ անհաջող: Այս անհաջողության մեջ նրանց մեծամասնությունը հակված է մեղադրել հարկային և այլ պետական մարմիններին: Մյուսները ցավով նշում են, որ արտագնա աշխատանքի տարիների ընթացքում իրենց չի հաջողվել բավականաչափ գումար խնայել սեփական բիզնեսը հիմնելու համար:

Հարցված միգրանտներից ոմանք վերադարձել են իրենց գյուղերը և զբաղվում են գյուղատնտեսությամբ, կամ աշխատում են մոտակա քաղաքում՝ շինարարության ոլորտում: Աշխատանք գտած միգրանտների մեծամասնությունը բողոքում է ցածր աշխատավարձերից, սակայն ուրախ է, որ իր ընտանիքի կողքին է:

Ինչևէ, հարցմանը մասնակցած մի քանի միգրանտներ այսօր զոջում են, որ երբևէ Հայաստանից մեկնելու որոշում են կայացրել և համարում են, որ եթե չմեկնեին, այստեղ էլ կկարողանային որևէ կերպ գումար վաստակել ու իրենց հարազատների կողքին լինել:

*«Հիմա գոջում եմ, որ ընդհանրապես գնացել եմ: Կարծում եմ իզուր վատնած տարիներ էին: Այստեղ գոնե ընտանիքիս հետ կլինեի, մի բան կկարողանայի անել, ոնց որ բոլորն են անում: Իմ տարիքում արդեն ուզում ես հանգիստ ապրես, իսկ այնտեղ շատ լարված էի. թե՛ աշխատանքի պատճառով, թե՛ կարոտի, և թե՛ իմ կարգավիճակի»:*  
Տղամարդ, 53 տ., Արփի

**Վերաինտեգրման դժվարությունների** մասին խոսելիս հարցվողների մեծամասնությունն ասում է, թե վերադառնալուց հետո ոչ մի հոգեբանական կամ մշակութային խնդիրներ չի ունեցել, քանի որ վերադարձել է այնտեղ, որտեղ ծնվել է, որտեղ իր հարազատներն են:

*«Ոչ մի խնդիր էլ չի եղել: Եկել եմ Հայաստան նոր սիրտս տեղն է ընկել: Մարդը մենակ իր հողի վրա է մարդ»:* Տղամարդ, 53 տ., Արփի

Սա մասամբ բացատրվում է նաև նրանով, որ այս միգրանտների գերակշիռ մեծամասնությունը մեկնել է սեզոնային աշխատանքների և տարվա ընթացքում մի քանի ամիս այնուամենայնիվ անցկացրել է հայրենիքում:

Համեմատաբար ավելի դժվար են համակերպվում այն միգրանտները, ովքեր մեկնել են ԱՄՆ կամ եվրոպական երկրներ, քանի որ Հայաստանի և այդ երկրների ապրելակերպի ու բարքերի միջև տարբերությունը շատ ավելի մեծ է, քան Հայաստանի և ՌԴ, նախկին ԽՍՀՄ այլ երկրների: Բացի այդ, այս միգրանտներն ընդունող երկրում անցկացրել են մի քանի տարի՝ այդ ընթացքում երբևէ հայրենիք չայցելելով:

*«Ուզում էի միայն իմ տան մեջ լինել: Ինձ շատ վատ էի զգում, երբ տանից դուրս էի գալիս: Մարդիկ մի տեսակ վայրենացած էին ինձ թվում, իրար նկատմամբ հարգանք չունեն, իրար չեն զիջում: Մինչև հիմա չեմ հարմարվում»:* Կին, 50 տ., Երևան

*«Սկզբում դժվար էր: Տխրում էի, մտածում էի՝ ինչու են Հայաստանում մարդիկ այսպիսին, ինչու է մեր երկրի վիճակն այսքան բարդ ու ժամանակից հետ ընկած: Հիմա արդեն համակերպվել եմ, անգամ չեմ էլ նկատում տարբերությունը, թեև ինքս շարունակում եմ պահպանել շատ սովորույթներ, որոնք ձեռք եմ բերել ԱՄՆ-ում (օրինակ՝ երբեք փողոցում աղբը գետնին չեմ զցում)»:* Տղամարդ, 25տ., Երևան

Վերաինտեգրման հարցում մեծ նշանակություն ունի զբաղվածության հանգամանքը. այն միգրանտները, ում հաջողվել է աշխատանք գտնել, ավելի հեշտ ու արագ են հարմարվել: Իսկ նրանք, ովքեր դեռ չեն կարողանում հիմնական աշխատանք գտնել, նշում են, որ իրենց անօգտակար են զգում:

#### ՌԵԷՄԻԳՐԱՑԻԱՅԻԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայրենադարձ միգրանտների՝ հայրենիքը դարձյալ լքելու մտադրությունը, բնականաբար, մեծապես կախված է Հայաստանում նրանց զբաղվածությունից. այն միգրանտները, ովքեր կարողացել են այնպիսի աշխատանք գտնել, որը նրանց հնարավորություն է տալիս ապահովել իրենց ընտանիքի գոնե նվազագույն կարիքները, ասում են, թե չեն ուզում հեռանալ այստեղից, քանի որ իրենց այստեղ ավելի լավ, ազատ ու ապահով են զգում:

Միգրանտներից ոմանք, թեպետ այստեղ աշխատանք չեն կարողանում գտնել, այնուամենայնիվ ասում են, որ իրենց տարիքը կամ առողջական վիճակը այլևս թույլ չեն տալիս արտագնա աշխատանքի մեկնել:

Իսկ ահա այն միգրանտները, ովքեր մեկնելու հնարավորություն ունեն և դեռ չեն կարողանում այստեղ լավ վարձատրվող կամ հիմնական աշխատանք գտնել, ասում են, որ հավանաբար դարձյալ կմեկնեն, եթե առաջիկա մի քանի ամիսների ընացքում չկարողանան լուծել իրենց զբաղվածության խնդիրը: Այս մարդիկ հիմնականում ցավով են նշում այդ մասին, քանի որ չեն ցանկանում դարձյալ իրենց ընտանիքներից ու հարազատներից հեռու ապրել:

# ՈՒՍԱՆՈՂ ՄԻԳՐԱՆՏԵՐ

## ԿԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

Հետազոտության այս բաղադրիչի նպատակը արտերկրում կրթություն ստացած ուսանողների՝ Հայաստանում վերահաստատման ընթացքում ծագած խնդիրների ուսումնասիրումն էր: Հետազոտությունն իրականացվել է 20 «ուսանող միգրանտների» շրջանում, ովքեր մասնակցել են տարբեր փոխանակման ծրագրերի և սովորել ամերիկյան ու եվրոպական համալսարանների բակալավրիատներում և մագիստրատուրաներում: Հարցվողներից միայն երկուսն են մեկնել անձնական նախաձեռնությամբ: Ուսման տևողությունը հիմնականում կազմել է 10 ամսից մինչև 2 տարի: Դեպքերի մեծ մասի պարագայում կրթական ծրագրերն ուսանողներին տրամադրել են կրթաթոշակներ՝ ուսման, ճանապարհածախսի, հաճախ նաև երկրում ապրելու, գրականություն ձեռք բերելու և այլ ծախսեր հոգալու համար:

Ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, հարցվողներից մի քանիսը մի ծրագրին մասնակցելուց հետո նորից դիմել են մեկ ուրիշ ծրագրի, օրինակ՝ ԱՄՆ-ում սովորելուց հետո դիմել և սովորել են եվրոպական համալսարաններում կամ հակառակը: Հարցվողները կրթական ծրագրերին դիմել են բուհում ուսման տարիների ընթացքում կամ ՀՀ-ում բարձրագույն կրթություն ստանալուց հետո: Հարցվողների ընտանիքի անդամները ընդգրկված չեն եղել միգրացիոն գործընթացներում:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս որ մեկնելիս հարցվողները հիմնականում ունեցել են արտերկրում սովորելու և Հայաստան վերադառնալու մտադրություն, ինչը նաև ծրագրերի նախապայմանն է՝ ուսանողներն ուսումնավարտելուց հետո պետք է վերադառնան իրենց ծագման երկիր:

Այնուամենայնիվ, հարցվողների մի մասը նախքան գնալը չեն բացառել նաև արտերկրում մնալու հնարավորությունը:

*«Ես նախևառաջ մեկնում էի սովորելու, բայց չէի բացառում մնալու տարբերակը: Ինչպես որ ստացվեք»:* Կին, 24տ., Երևան

Իսկ ահա Հունգարիայում ուսանած շրջանավարտները բացառել են մնալը, քանի որ այնտեղ հաստատվելու համար ունեին լեզվական (հունգարերենին չտիրապետելու) խնդիր: Ինչ վերաբերում է երկրի ընտրությանը, ապա հարցվողները նշել են, որ դա պայմանավորված է եղել կոնկրետ ծրագրի հարմար լինելու հանգամանքի հետ:

Մեկնելիս հարցվողներն ունեցել են նոր գիտելիքների, հմտությունների և արևմտյան կրթության ձեռքբերման, մեկ այլ մշակույթի հետ շփման, մտածելակերպի և աշխարհայացքի և փոփոխության, ինչպես նաև նոր կապեր ստղծելու

ակնկալիքներ: Նրանք համոզված էին, որ արևմտյան կրթությունը կարող էր նրանց մասնագիտական աճի և Հայաստանի աշխատաշուկայում մրցունակ լինելու հնարավորություն տալ:

*«Մեկնում էի միայն սովորելու և վերադառնալու: Ես մտածում էի, որ մեկնեմ իմ առջև Հայաստանում շատ դռներ կարող են բացվել և միայն դրա համար էի մեկնում, որ հետո Հայաստանում կյանքս ավելի ասպահով, ավելի հանգիստ լինի»:* Կին, 24 տ., Երևան

Հարցվողների պատասխաններին կարելի է եզրակացնել, որ նրանց արտերկրում կրթություն ստանալու հետ կապված ակնկալիքները հիմնականում արդրացել են:

Հարցվողները ուսման հատկապես սկզբնական շրջանում հանդիպած դժվարություններից նշում են կարոտը, օտար լեզվով հաղորդակցվելու բարդությունը, կրթական համակարգի տարբերությունը (*ինքնուրույն աշխատանք, ծանրաբեռնվածություն*), միջմշակութային հաղորդակցության խնդիրը և այլն:

*«...Այնտեղ դժվար է նաև, որովհետև դու իրենց համար «կենսագրություն» չունես, իրենք քո մասին ոչինչ չգիտեն և դու ամեն անգամ նորովի պետք է քեզ ներկայացնես: Իսկ Հայաստանում այլ է, դու ուր գնում ես՝ քո «այցեքարտը գնում է քո հետևից», որովհետև մարդիկ գիտեն, որ եթե դու ավարտել ես այսինչ տեղը, կամ աշխատել ես այստեղ, կամ ինչ-որ մեկի ծանոթն ես, ապա ինչ ես քեզնից ներկայացնում»:* Կին, 32տ., Երևան

Նոր պայմաններին հարմարվելուն նրանց օգնել է նախօրոք նույն ծրագրերով սովորած ծանոթներից տեղեկացված լինելը, ինչպես նաև որոշ ծրագրերի շրջանակներում կազմակերպված նախապատրաստական դասընթացները, որոնք ծանոթացրել են ծրագրի առանձնահատկություններին, տվյալ երկրին, մշակույթին և այլն: ԱՄՆ մեկնածուների շրջանում կարծիք կա նաև, որ երկրի հասարակական և կրթական համակարգերն են օգնում հարմարվել պայմաններին: Որոշ ուսանողներ էլ արդեն ունեցել էին արտերկրում ուսանելու փորձ, ինչը նրանց օգնել է ավելի հեշտ կազմակերպել իրենց կյանքը:

## ՎԵՐԱԴԱՐՁ ԵՎ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

Ինչպես արդեն նշվեց, ուսանող միգրանտների պարագայում վերադարձը պայմանավորված է եղել ծրագրի պահանջով: Թեև սովորելու ընթացքում այնտեղ մնալու մտադրություն ունեցողների թիվը ավելացել է, և որոշները նույնիսկ այդ ուղղությամբ փորձեր են կատարել, սակայն, հիմնականում ժամանակի սղության պատճառով չեն հասցրել գտնել աշխատանք և երկարացնել օրինական կեցության ժամկետը, իսկ օրինախախտ դառնալ, թե՛ արտերկրում (անօրինական



կարգավիճակում հայտնվելով) և թե Հայաստանում՝ (գինձառաջությունից խուսափելով) չեն ցանկացել:

*«..Ես այնտեղ մնալու մասին մտածել եմ, որովհետև այստեղ հեռանկարներն էին բացակայում: Այո, եթե ինձ այնտեղ լավ աշխատանք առաջարկեին, այնպես, որ ես կարողանայի օրինականացնել իմ այնտեղ երկար մնալը, ես կմնայի»: Կին, 32 տ., Երևան*

Եզակի ուսանողներ են, որոնք հստակ մտադրություն են ունեցել վերադառնալ և ապրել իրենց երկրում:

*«Այնտեղ սովորելը մի բան է, իսկ ապրելը մեկ այլ բան: Այդ երկիրն իմ քննադրության համար հարմար չէ: Այնտեղ ամեն ինչ ավտոմատացված է, դու դառնում ես ավտոմատ, բացի այդ այնտեղ կյանքը շատ լարված է: Այնտեղ ընկերությունն է ուրիշ: Ես այնտեղ ճիշտ է, ունեի շատ լավ ընկերներ, որոնք հայ ընկերներիս նման էին: Բայց ընդհանրապես այնտեղի ընկերությունն այլ է: Մարդիկ կարող են քեզ հետ շատ լավ լինել, բայց երբեք չես կարող վստահ լինել, որ նեղ օրդ քեզ կաջակցեն: Բացի այդ եթե ես երեխա ունենամ, չէի ուզենա, որ իմ երեխաներն այնտեղ մեծանային: Այնտեղի բարքերն ինձ դուր չեն գալիս. այնտեղ չկա հարգանք մեծի նկատմամբ, երեխաներն անում են այն, ինչ ուզում են»:*  
Կին, 23տ., Երևան

Հարցվողները նշում են, որ նախքան հայրենիք վերադարձն իրենք ունեցել են **մեծ ակնկալիքներ**: Հիմնականում նրանք ակնկալել են ունենալ լավ աշխատանք՝ բարձր աշխատավարձով, մասնագիտական աճ, և, որ ամենակարևորն է, ակնկալել են հայրենիքում գտնել իրենց գիտելիքների ու փորձի պահանջարկ:

*«...սկզբից շատ ոգևորված էի, մտածում էի, որ ինձ գրկաբաց պետք է ընդունեն»:* Կին, 29 տ., Երևան

Այստեղ պետք է նշել, որ հարցվողներն ընդհանուր առմամբ դրական են գնահատել արտերկրում ուսանելու իրենց փորձը, քանի որ ձեռք են բերել նոր մասնագիտություն կամ խորացրել են իրենց ունեցած մասնագիտական գիտելիքներն, ինչպես նաև ձեռք են բերել նոր փորձ և հմտություններ, ինչն էլ առաջին հերթին նպաստել է նրանց անձնային հատկանիշների փոփոխությանը (մտածելակերպի և աշխարհայացքի փոփոխություն, բարեխիղճ աշխատելու, ինքնավստահության, ինքնուրույնության, պատասխանատվության ձեռքբերում):

*«Ես շատ բարձր եմ գնահատում իմ այնտեղի կրթությունը մի քանի առումներով: Նախ, ես որպես անհատ փոխվեցի, որովհետև տարբեր մշակույթների տեղ մարդկանց հետ շփվելով՝ շատ աշխարհայացային փոփոխություններ եմ զգացել, միջմշակութային հաղորդակցության հմտություններ եմ ձեռք բերել: Բացի այդ, ես ավելի ինքնավստահ եմ դարձել»:* Կին, 21 տ., Երևան

Առավել հաճախ հարցվողները նշել են այնպիսի հմտությունների ձեռքբերումը, ինչպիսիք են՝ հետազոտություններ անցկացնելու մեթոդաբանությանը տիրապետելը, խնդրին վերլուծական մոտեցում ցուցաբերելը, տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելը, միջանձնային և միջմշակութային հաղորդակցության, բանակցելու, հաշվետվություններ, ռեֆերատներ, էսսեներ գրելու հմտությունները: Նշված հմտությունները նրանք կիրառում են իրենց առօրյա կյանքում՝ ինչպես միջանձնային հարաբերություններում, այնպես էլ աշխատանքի կազմակերպման ընթացքում:

Միևնույն ժամանակ, **ոչ բոլոր հարցվողների սպասումներն են արդարացել**, քանի որ վերադարձից անմիջապես հետո հանդիպել են տարբեր տեսակի խնդիրների, որոնցից առավել հաճախ նշում են սոցիալ-հոգեբանական բնույթի և աշխատանքի հետ կապված հիմնախնդիրները:

Սոցիալ-հոգեբանական բնույթի խնդիրներից են **կենցաղային պայմանների, սոցիալական հարաբերությունների, կրթական համակարգի, մտածելակերպի, մշակութային և այլ տարբերությունների առկայությունը:**

*«Գժվար էր, չէի հարմարվում այստեղի մարդկային հարաբերություններին, սպասարկման ոլորտում վերաբերմունքին, հարգանքի բացակայությանը: Երբ չես հարմարվում, ամեն ինչ ավելի սուր էս ընդունում, բայց հետո շատ բաների վրա աչք էս փակում կամ շրջանցում»:* Կին, 25տ., Երևան

**Կրթական համակարգի դժվարություններին** հանդիպել են այն ուսանողները, ովքեր վերադարձից հետո շարունակել են ուսումը Հայաստանի բուհերում, դրանք **պայմանավորված են եղել հիմնականում** հին կրթական համակարգով, պրակտիկ մասի բացակայությամբ և այլն:

*«Ինձ համար ամենադժվարը ինստիտուտում այդ 2 տարին սովորելն էր, որովհետև այստեղի կրթության ձևը շատ է տարբերվում այնտեղի ոճից, և էս չէի կարողանում հարմարվել: Դա ինձ այնքան անիմաստ էր թվում, երբ դու միայն գրում էս, հետո վերարտադրում այն, ինչ քեզ թելադրել են և ոչ ոքի չի հետաքրքրում քո կարծիքը, քո մոտեցումը: Բացի այդ, այստեղի գիտելիքը ոչ մի պրակտիկ մաս չունի և դու երբ ընդունվում էս աշխատանքի, պետք է նորից սովորես պրակտիկ գործը»:* Կին, 22տ., Երևան

Հարցվողներից ոմանք էլ նշել են, որ բարդություն են ունեցել ընտանիքի հետ փոխհարաբերություններում, ինչի պատճառ համարել են ուսման տարիներին **ինքնուրույն ապրելակերպին սովոր լինելը:**

*«Ընտանիքի հետ կապված դժվարություն են ունեցել: Ես սովորել էի ինքնուրույնության, բայց այստեղ ինձանից, օրինակ, պահանջում են, որ էս ժամը 12-ին տանը լինեն»:* Կին, 24 տ., Երևան

Մի մասը նշել են **մտածելակերպի և մշակութային տարբերությունների պատճառով իրենց ունեցած խնդիրների մասին**, որոնց բախվում են առօրյա կյանքում: Գրանք առնչվում են բյուրոկրատական քաշքշուկներին, սպասարկման ոլորտի անկատարությանը, կոռուպցիոն դրսևորումներին, ոչ բարեկիրք հարաբերություններին:

*«Արտերկիր մեկնելուց և վերադառնալուց հետո սկսել ենք շատ բաներ նկատել, որոնք մինչ այդ չէինք նկատում»:* Կին, 29տ., Երևան

*«Ես այդ 2.5 տարիների ընթացքում չէի եղել Հայաստանում և մի քիչ իրականությունից կտրվել էի, վարդագույն աչքերով էի նայում հատկապես, որ շատ էի կարոտել»:* Տղամարդ, 33 տ., Երևան

Սակայն որոշ դեպքերում, այն հարցվողները, ովքեր չեն կորցրել իրենց կապը հարազատների և հայաստանյան իրականության հետ, և ովքեր նախկինում ունեցել են արտերկրում ուսանելու փորձ, հետևապես նաև Հայաստանում վերահարմարվելու փորձ, ավելի հեշտ են վերահաստատվել կամ հեշտ են կարողացել հաղթահարել դժվարությունները:

*«Ես շատ լավ գիտեի Հայաստանում ինչ իրավիճակ է: Երբեք վարդագույն աչքերով չեմ նայել: Բացի այդ, հիմա կապն այնքան մատչելի է, որ շատ հեշտ կարելի է հաղորդակցվել. հեռախոսով հարազատների հետ, ինտերնետից լուրեր կարդալ և այլն: Այնտեղ ապրելու ընթացքում ես ինձ երբեք Հայաստանից կտրված չեմ զգացել: Բացի այդ, կրկին ինձ օգնեց իմ մեծ փորձը դրսում գտնվելու և Հայաստան վերադառնալու»:* Կին, 24տ., Երևան

Նշենք, որ հարցվողներից միայն մի քանիսը նախապես գիտեին, թե ինչով են զբաղվելու վերադարձից հետո (շարունակելու են կիսատ թողած ուսումը կամ աշխատանքը):

Ամենամեծ խնդիրը, որի հետ առնչվել են հարցվողները, **աշխատանքի տեղավորման** հարցն էր : Նշենք, որ ոչ բոլորին է հաջողվել անմիջապես վերադառնալուց հետո գտնել իրենց ցանկացած աշխատանքը: Շատերը նույնիսկ ամիսներ շարունակ անգործ են մնացել, քանի որ առաջարկված աշխատանքը հաճախ չի համընկել իրենց ստացած կրթությանը կամ իրենց պահանջներին (բարձր աշխատավարձ, ձեռնարկության ներսում մասնագիտական անձ):

*«Աշխատանք փնտրելը շատ երկար էր տևում: Աշխատանք կամ չկար կամ այնպիսի աշխատանքներ էին, որ չէի կարող ինձ ստիպել աշխատել: Ես այդքան տարի նրա համար չեմ սովորել, որ գնամ ցածր վարձատրվող, ոչ մասնագիտական աշխատանք անեմ: Շատ կան ինձ հետ ավարտածներ, որոնք լավ մասնագետներ են, բայց գործ չունեն, բարգմանություն են անում, որովհետև աշխատատեղ չկա: Բայց դա*

*ցավայի է, որովհետև նա կարևոր է մի երկու տարի էլ թարգմանություն անել, բայց հետո կգնա ու մենք կկորցնենք լավ մասնագետի»:* Կին, 27տ., Երևան

Հարցվողների մեծ մասը նշում է, որ արտերկրում իրենց ստացած **մասնագիտական կրթությամբ** չեն կարողացել աշխատանք գտնել Հայաստանում: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով. նախ՝ իրենց մասնագիտական փորձը բավականին ակադեմիական է և երկրորդ՝ չունեն համապատասխան աշխատանքային փորձ: Երրորդ՝ Հայաստանում սահմանափակ են իրենց մասնագիտությամբ աշխատելու և մասնագիտական առաջընթացի հնարավորությունները, և չորրորդ՝ իրենց ձեռք բերած մասնագիտությունը շատ առանձնահատուկ է և այստեղ պահանջարկ չի վայելում:

*«...այստեղ պորբլեմն այն է, որ աշխատանքային զարգացման, աճի հնարավորությունները քիչ են: Այստեղ դու կախված ես քո աշխատանքից: Եթե աշխատանքիդ մեջ քեզ ինչ-որ բան դուր չեկավ, դու չես կարող հանգիստ փոխել գործը, որովհետև աշխատանքի շատ հնարավորություններ չկան, դու պետք է շատ ժամանակ կորցնես դրա վրա: Հատկապես, եթե աշխատանքդ լավն է և բարձր վարձատրությամբ է, ավելի ես կախված լինում: Դա է պորբլեմը և դրա համար են մարդիկ գնում»:* Կին, 24 տ., Երևան

*«Կարելի է ասել, որ օգտագործել եմ իմ ստացած գիտելիքների 15-20 տոկոսը, քանի որ իմ մասնագիտությամբ չեմ աշխատում: Իմ ներկայիս աշխատանքը քաղաքագիտության հետ կապ չունի: Բայց ես օգտագործում եմ իմ այն հմտությունները, որ սովորել եմ և որոնք անհրաժեշտ են ցանկացած գործ անելիս: Ես օգտագործում եմ իմ լեզվական գիտելիքները»:* Կին, 24 տ., Երևան

Հարցվողներից քչերն են նշել այն մասին, որ իրենք ձեռք են բերել այնպիսի մասնագիտություններ, որոնք իրենց հնարավորություն են տվել գտնել համապատասխան աշխատանք:

*«Ինձ զանգեցին, որովհետև ես SPSS գիտեի և աշխատանք առաջարկեցին... Դրսի դիպլոմը միշտ առավելություն է, հենց դիմեցի՝ անմիջապես անցա: Ես 12 հոգի ունեի իմ դեկավարության տակ: Հետո շարունակեցի աշխատել նույն կազմակերպության այլ պրոյեկտում: Ես տվյալների բազայից օգտվելու հմտություն ունեի, որը պարբերաբար օգտագործում էի: Դրսի դիպլոմն ու լեզուն շատ մրցունակ են դարձնում: Հիմա սոցիոլոգների պահանջարկը բարձր է, իսկ CEU-ն այն ժամանակ միակն էր, որ Հայաստանին տալիս էր դրսի կրթությամբ սոցիոլոգներ»:* Կին, 29տ., Երևան

*«Ես իմ թեզը Հայաստանի և Սփյուռքի մասին էի գրել: Այնտեղ շատ եմ ուսումնասիրել զարգացման տեսություններ՝ տարբեր երկրների օրինակով: Հիմա իմ աշխատանքը համայնքների զարգացմանն է առնչվում և ես կարողանում եմ իմ գիտելիքները ծառայեցնել իմ գործին»:* Կին, 24 տ., Երևան

Մյուս կողմից, կարծիք կա, որ անկախ մասնագիտությունից, միայն լեզվի իմացությունը (անգլերենի) և «դրսի» դիպլոմի առկայությունը իրենց շատ մեծ հնարավորություն են տալիս Հայաստանում աշխատանք գտնել:

*«... այն, որ դու դրսում սովորել ես, շատ բան է փոխում: Ես ինձ վրա զգացել եմ. թե գիտելիքի, թե աշխատանքի կազմակերպման առումով առավելություն ունեմ: Ինձ իմ ներկայիս գործին առանց իմ գիտելիքները ստուգելու են ընդունել, որովհետև ես MBA էի ստացել ԱՄՆ-ում»:* Կին, 32տ., Երևան

Հարցվողները հիմնականում ներգրավված են միջազգային կազմակերպությունների տարբեր ծրագրերում կամ բանկային ոլորտում: Միևնույն ժամանակ նրանք նշել են, որ դժվար է տարբեր ծրագրերում աշխատելը, քանի որ դրանք հաճախ տարբեր ոլորտներում են լինում և հնարավորություն չեն տալիս կենտրոնանալու և հմտանալու մեկ մասնագիտական ուղղվածությամբ: Բացի այդ, նման ծրագրերը, ժամանակավոր բնույթ կրելով, ստիպում են մասնագետին պարբերաբար նոր աշխատանք փնտրել: Այդ պատճառով էլ արդեն միտում է նկատվում տեղավորվել միջազգային կազմակերպությունների համակարգից դեպի մասնավոր սեկտոր, որտեղ մրցակցությունը, կայունությունը և աճի հնարավորությունն ավելի մեծ են:

Նրանք նշում են նաև աշխատանքի տեղավորման հարցում **սոցիալական անարդարության** մասին, որը արտահայտվում է նրանում, որ հաճախ հաշվի է առնվում ոչ թե անձի ստացած կրթությունը, հմտությունները և ունեցած փորձը, **այլ ուրիշ հանգամանքներ:**

*«Այստեղ թքած ունեն քո դիպլոմի վրա. քեզ կարող են առաջարկել քարտուղարի գործ: Կարող ես դիմել որևէ նախարարություն, բայց դժվար թե անցնես առանց ծանոթի: Եթե նույնիսկ առանց ծանոթի անցնես, չես կարող առաջ գնալ: Չեն գնահատում կրթության արժեքը: Այստեղ չեն առաջարկում այնպիսի հեռանկար, որ դու կայանաս Հայաստանում: Կարող ես միայն միջազգային կազմակերպություններում աշխատել: Այստեղ չկան այն հարմար պաշտոնները, որոնց կդիմես: Ես դիմել եմ մեկ-երկու տեղ, թեև բոլորովին չէի ցանկանում այնտեղ աշխատել, բայց արդեն հոգնել էի անգործ լինելուց, դիմել եմ նաև մի կազմակերպություն, որտեղ ինձ առաջարկեցին ընդամենը 200 դոլար աշխատավարձ»:* Կին, 24 տ., Երևան

Վերադարձողների մեծ մասը նշում է, որ հիասթափություն են ապրել՝ հայրենիքում **գնահատված չլինելու և առավել ևս պահանջված չլինելու** հանգամանքից, ինչպես նաև **հեռանկարների** բացակայությունից: Դա արտահայտվում է նրանում, որ նրանք ակնկալում էին իրենց կրթության համապատասխան գնահատում և իրենց ստացած գիտելիքների համապատասխան կիրառում:

*«Եթե աճելու տեղ լինի... Ես հաճույքով կաշխատեի որևէ նախարարությունում, եթե չլիներ այդ միջավայրը: Ես կզբաղվեի թե քաղաքականության մշակմամբ, և թե իրագործմամբ: Ուրիշ երկրներում անընդհատ աճելու միակ տեղը պետական համակարգն է, բայց մեզ մոտ դա բոլորովին այդպես չէ»:* Կին, 24 տ., Երևան

Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ պետական համակարգում նրանց ներգրավված չլինելն է չգնահատված լինելու դրսևորումներից մեկը:

Արտերկրում կրթություն ստացածների մեծ մասն արդեն չի ցանկանում ցածր աշխատավարձով (*օրինակ 1500 դոլարից ցածր աշխատավարձ*) աշխատել, իսկ նման պահանջը Հայաստանի պայմաններում այնքան էլ հեշտությամբ չէ իրականացվում:

*«Թվում էր, որ այն ներդրումը, որ դու արել ես՝ կրթությունը, արդարացված չէ, դու պահանջված չես: Ես դժվարությամբ աշխատանք գտա, որովհետև հարմար աշխատանք չէի գտնում: Ինձ առաջարկում էին աշխատավարձ, որը չարժեր իմ այդ կրթությանը»:* Կին, 24 տ., Երևան

Բնական է, որ նրանք ճանապարհներ են փնտրում հաղթահարելու նշված դժվարությունները և ամենից հաճախ հանդիպող սցենարներից են ուսանող միգրանտների ձգտումը՝ շփվել նմանատիպ կրթական ծրագրերի շրջանավարտների հետ, մասնակցել հանդիպումների և իրականացնել համատեղ միջոցառումներ: Բացի այդ, դրան օգնում է նաև աշխատանքը միջազգային կազմակերպություններում, որտեղ միջավայրը համընկնում է արտերկրում իրենց տեսածի հետ:

*«Միջազգային կազմակերպությունում տարբերությունը քո նախկինում տեսածի հետ այդքան էլ մեծ չէ, և դա օգնում է հարմարվել, դու առանձնապես մեծ շոկ չես ապրում»:* Կին, 27 տ., Երևան

## ՌԵԷՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հետազոտության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ հարցվողների մեծ մասը չի բացառել ապագայում իրենց արտերկիր մեկնելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ, նրանք չեն պատրաստվում մեկնել պարզապես մեկնած լինելու համար, այլ դա դիտվում է նպատակային՝ ուսումը մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում շարունակելու կամ աշխատելու համար:

*«Ես մեկնելու եմ: Ես այստեղ չեմ ցանկացել մնալ: Գնալու երկու տարբերակ ունեմ. կամ աշխատանք գտնել, կամ սովորելու մեկնել, երրորդ տարբերակը՝ Գլենդեյլում անօրինական ապրելու և աման լվանալու հեռանկարն ինձ չի հետաքրքրում»:* Կին, 24 տ., Երևան

*«Իմ աշխատանքային ոլորտում իմ գիտելիքների ավելացում չեմ տեսնում: Իմ աշխատանքն ավելին տալ հաստատ չի կարող: Երևի սա է պատճառը, որ ես փորձում եմ փախչել: Ինձ համար այստեղ փակ չեն դռները, ես կարող եմ դառնալ ավագ դասախոս, և այլն, բայց ես դրա արդյունավետությունը չեմ տեսնում»:* Կին, 25 տ., Երևան

Ապագայում մեկնելու հնարավորությունը չեն բացառել նաև նրանք, ովքեր ներկայումս բավարարված են իրենց աշխատանքով և այն ուսանողները, ովքեր վերջերս են վերադարձել և ունեն Հայաստանում 2 տարի մնալու պարտավորություն: Պետք է նշել նաև այն փաստը, որ մի մասը կրկին սովորելու (կրթական ծրագրերին դիմելու) առիթը փորձում է օգտագործել որպես Հայաստանից մեկնելու միջոց:

*«Ես մտադիր եմ մագիստրատուրա ընդունվել արտերկրում: Դա այնքան իմ սովորելու ձգտումը չէ, որքան այն, որ ուզում եմ մի քիչ կտրվել Հայաստանից»:* Կին, 21 տ., Երևան

Իսկ հարցվողներից երկուսը ոչ միայն մեկնելու մտադրություններ ունեն, այլ նաև որոշակի քայլեր են ձեռնարկում և արդեն դիմել են HSMP (High skilled migration program) կանադական ծրագրին, որը, նրանք համարում են «քաղաքակիրթ միգրացիայի» տարբերակներից մեկը:

Ամփոփելով նշենք, որ նախ և առաջ ստեղծվում է այն տպավորությունը, որ եթե չլիներ սովորելուց հետո վերադարձի և իրենց երկրում որոշակի ժամանակ մնալու ծրագրային պահանջը, ապա «ուսանող միգրանտների» մեծ մասը կօգտագործեին դրսում հաստատվելու իրենց ընձեռնված հնարավորությունը: Միևնույն ժամանակ, վերադառնալուց հետո էլ նրանց մոտ մնում է կրկին մեկնելու ցանկությունը:

Մի մասի դեպքում Հայաստանից կրկին մեկնելու ցանկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ի սկզբանե նրանք իրենց համար մասնագիտություն ընտրելիս հաշվի չեն առել հայաստանյան աշխատաշուկայի պահանջները, այդ պատճառով էլ նրանք չեն կարողանում իրենց ստացած մասնագիտությամբ աշխատանք գտնել հայրենիքում, այլ աշխատանք են ստանում միայն արտերկրում իրենց ստացած դիպլոմի կամ հմտությունների շնորհիվ:

Մյուս մասի դեպքում էլ հայրենիքից մեկնելու մտադրության համար հիմք է ծառայում այն, որ, թեև աշխատում են իրենց ստացած մասնագիտությանը համապատասխան, սակայն ունեն հայրենիքում գնահատված չլինելու ինչպես նաև մասնագիտական աճի հնարավորությունների սահմանափակության և

հեռանկարների բացակայության զգացողություն: Այսպիսով կարելի է փաստել, որ արտերկրում ուսանած երիտասարդների մեծ մասը հեռանկարում ունի Հայաստանից մեկնելու մտադրություններ և փորձում է տարբեր ծրագրերն օգտագործելով՝ կրկին մեկնել արտերկիր:



# ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

---

## ՄԻԳՐԱՑԻԱՑԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերադարձողների հետազոտությամբ ստացված տվյալները հաստատեցին, որ **2002-2007 թթ. ժամանակահատվածում Հայաստանի արտաքին միգրացիոն հոսքերում գերակշռել են աշխատանքային միգրանտները:** Դա նշանակում է, որ իրավիճակն էականորեն փոխվել է 1990-ականների սկզբի համեմատ, երբ 800,000-1,000,000 մարդ մշտապես արտագաղթեց Հայաստանից և համալրեց Ռուսաստանում, Ուկրաինայում, ԱՄՆ-ում և Արևմտյան ու Արևելյան Եվրոպայի պետություններում բնակվող հայկական սփյուռքի մեծաթիվ շարքերը:

- Հետազոտության շնորհիվ հնարավոր եղավ հաշվարկել, որ 2002-2007 թթ. ժամանակահատվածում արտաքին միգրացիոն գործընթացներին մասնակցած անձանց ընդհանուր թիվը կազմել է 230,000 ± 15,000, որոնցից 175,000 ± 13,000-ը մեկնել են Հայաստանից՝ արտերկրում աշխատանք գտնելու նպատակով: Միգրանտների մեծամասնությունն աշխատանքային միգրացիային մասնակցել է ավելի քան մեկ անգամ: 2002 թ. հունվարի 1-ից սկսած յուրաքանչյուր աշխատանքային միգրանտ ունեցել է միջին հաշվով 2.5 ուղևորություն արտերկիր: Աշխատանքային միգրացիային մասնակցել է ՀՀ յուրաքանչյուր հինգերորդ տնային տնտեսությունը: Դեպքերի երկու երրորդում արտերկիր աշխատելու է մեկնել ընտանիքի անդամներից միայն մեկը:
- Հարցման արդյունքների համաձայն, արտերկրում մշտական բնակություն հաստատելու նպատակով Հայաստանից մեկնած անձանց թիվը չի գերազանցել 37,000-ը: Մշտական միգրացիային մասնակցել է ՀՀ տնային տնտեսությունների 2-3%-ը: Ի տարբերություն աշխատանքային միգրացիայի, մշտական միգրացիային սովորաբար մասնակցում է ընտանիքի՝ մեկից ավելի անդամ: Ուսանողների միգրացիային մասնակցել է ՀՀ տնային տնտեսությունների 1%-ից պակասը: Ուսանող միգրանտների բացարձակ թիվը, ըստ հաշվարկների, կազմել է 7,000 ± 3,000:

**Ուղևորության երկրների իմաստով միգրացիոն հոսքերի բազմազանությունը զգալիորեն նվազել է:** Տարբեր պատճառներով հայ միգրանտների հիմնական նպատակակետը դարձել է Ռուսաստանի Դաշնությունը:

- Միգրանտների բոլոր խմբերի հիմնական նպատակակետ է հանդիսացել Ռուսաստանի Դաշնությունը: Ռուսաստան է ուղևորվել աշխատանքային միգրանտների 96%-ը: Մշտական միգրանտների հիմնական մասը նույնպես ուղևորվել է Ռուսաստան. նրանց 71%-ը բնակություն է հաստատել Ռուսաստանում: Իրավիճակը նույնչափ միանշանակ չէ միայն ուսանողների միգրացիայի պարագայում. ուսանող միգրանտների կեսից ավելին (56%) մեկնել են Ռուսաստան՝ սովորելու, սակայն 26%-ը մեկնել է Եվրոպական միության երկրներ:

## **ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Վերջին տասնամյակում **Հայաստանից միգրացիան** տնտեսական և սոցիալական համակարգի խարխիլման ծանր հետևանքներից փախչելու՝ ընտանիքների հուսահատ փորձից **վերածվել է** Հայաստանում մնացող ընտանիքների ապրուստի պայմանները բարելավելու համար ավելի մեծ գումար վաստակելու նպատակով **հայրերի՝ անհատապես արտերկիր մեկնելու գործընթացի:** Միջին տարիքի տղամարդկանց միգրացիոն բարձր ակտիվությունը որոշակիորեն ազդում է Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի վրա և կարող է երկարատև հատվածում հանգեցնել աշխատուժի պակասորդի:

- Հետազոտության արդյունքում պարզվեց, որ բոլոր միգրանտների 79%-ը, աշխատանքային միգրանտների 90%-ը և մշտական միգրանտների 51%-ը տղամարդիկ են: Կանայք գերակշռում են ուսանող միգրանտների թվում: Այդ հոսքը, սակայն, չափազանց փոքր է և չի կարող ազդել ընդհանուր համամասնությունների վրա: 2001 թվականի մարդահամարի տվյալներով, տղամարդիկ կազմել են Հայաստանի մշտական բնակչության (16 տարեկան և բարձր) 47%-ը: Մեր հետազոտությամբ հաստատվեց, որ այդ համամասնությունը պահպանվել է 2008 թվականի սկզբի դրությամբ, միաժամանակ նաև բացահայտվեց, որ գենդերային առումով ոչ հավասարակշիռ

արտագաղթի պատճառով Հայաստանի առկա բնակչության թվում տղամարդկանց մասնաբաժինը նվազել է մինչև 42-44%:

- Միջին տարիքի բնակչության (25-54 տարեկաններ) բարձր միգրացիոն ակտիվությունն անդրադառնում է Հայաստանի բնակչության տարիքային կառուցվածքի վրա: Միգրանտների թվում այս տարիքային խմբի մասնաբաժինը կազմել է 79%, մինչդեռ մնացած բնակչության կազմում նույն ցուցանիշն ընդամենը 51% է: Միգրանտների միջին տարիքը 38 տարեկան է, իսկ 2002-2007 թթ. արտաքին միգրացիոն գործընթացներին չմասնակցած անձանց միջին տարիքը՝ 44:

Թեև կրթության ավելի բարձր մակարդակ ունեցող մարդկանց համար Հայաստանի աշխատուժի շուկան ավելի հասանելի է, ինչի շնորհիվ նրանց միգրացիոն ակտիվությունը, որպես կանոն, ավելի ցածր է, 2002-2007 թթ. ժամանակահատվածում **Հայաստանի հմուտ աշխատուժի մոտ 10%-ը մեկնել է Հայաստանից՝ արտերկրում ավելի լավ հնարավորություններ գտնելու նպատակով:** Բացառությամբ շինարարության ոլորտի, հմուտ աշխատողների բացակայությունը Հայաստանում, ըստ երևույթին, ներկայումս չի հանգեցնում արտադրանքի որակի վատթարացմանը և/կամ քանակի նվազմանը: Այնուհանդերձ, իրավիճակը ժամանակի ընթացքում կարող է փոխվել և հետազոտության եզրակացությունները պետք է քաղաքականություն մշակողների համար հնչեն որպես ահազանգ՝ հմուտ աշխատուժի արտագաղթի հնարավոր բացասական հետևանքների մասին:

- Արտաքին միգրացիոն գործընթացներին ներգրավվել է միջնակարգ կրթություն ունեցողների 11%-ը, մասնագիտական կրթություն ունեցողների 10%-ը և բարձրագույն կրթություն ունեցողների 9%-ը:
- Հաշվարկվել է, որ Հայաստանի մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող չափահաս բնակիչների ընդհանուր թիվը կազմում է 900,000 ± 25,000: Հետազոտության արդյունքում պարզվեց, որ 2002-2007 թթ. ժամանակահատվածում հմուտ աշխատուժի մոտ 10%-ը, կամ 90,000 հոգի, Հայաստանից մեկնել են՝ արտերկրում ավելի լավ հնարավորություններ գտնելու նպատակով:

**Միգրացիոն ակտիվությունը կախված չէ բացառապես աշխատուժի ներքին շուկայում որոշակի մասնագիտական խմբերի մրցունակությունից:** Հայաստանում մնալու և արտագաղթելու միջև ընտրությունն առավել հաճախ պայմանավորված է արտերկրի աշխատուժի շուկաներից ստացվող ազդակներով և/կամ մասնագիտական տարբեր խմբերի գեոդերային կառուցվածքով:

- Ճարտարապետության և շինարարության, տարբեր ինժեներական մասնագիտությունների և տրանսպորտի բնագավառի մասնագետները ցուցաբերել են ամենաբարձր միգրացիոն ակտիվությունը: Նրանց 12-19%-ը վերջին վեց տարիների ընթացքում առնվազը մեկ անգամ մեկնել է Հայաստանից՝ արտերկրում աշխատանք փնտրելու նպատակով: Այս մասնագետների բարձր միգրացիոն ակտիվությունը պայմանավորված է մեկնման երկրներում, հատկապես Ռուսաստանում, հմուտ աշխատուժի նկատմամբ պահանջարկի առանձնահատկություններով: Թեև այդ մասնագետների մեծ մասի նկատմամբ պահանջարկը Հայաստանի աշխատաշուկայում վերջերս մեծացել է, նրանց՝ արտերկիր մեկնելու որոշումը հիմնականում պայմանավորվել է արտերկրում աշխատանքի ավելի բարվոք պայմաններով (հատկապես աշխատավարձերի ավելի բարձր մակարդակով):
- Արտերկրի աշխատուժի շուկաներից ստացվող ազդակները, կարծես, ավելի թույլ են ազդում Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) մասնագետների վրա: SS մասնագետների ցածր միգրացիոն ակտիվության պատճառներից մեկն այն է, որ SS ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետների համար առկա է մրցունակ տեղական պահանջարկ: SS մասնագետները նախընտրում են մնալ Հայաստանում նաև այն պատճառով, որ, ի տարբերություն այլ ոլորտների, ինչպիսիք են շինարարությունը և խնամքի ծառայությունները, SS ծառայությունները տեղայնացված չեն, այսինքն՝ կարող են կատարվել դրսից ստացվող պատվերներով, և հայաստանյան SS ընկերություններից շատերն աշխատում են արտերկրի հաճախորդների համար:
- Տնտեսագետների, բժիշկների, մանկավարժների, հումանիտար և հասարակական գիտությունների մասնագետների (հիմնականում՝ իրավաբանների) միգրացիոն չափավոր ակտիվության (6-9%) պատճառներն այլ են: Այդ չորս խմբերին բաժին է ընկնում Հայաստանի հմուտ աշխատուժի 52%-ը, և Հայաստանի աշխատաշուկան ակնհայտորեն չի կարող կլանել առկա ողջ

աշխատուժը, որի արտացոլումը Հայաստանում այդ մասնագետների շրջանում գործազրկության բարձր մակարդակն է: Այնուհանդերձ, մեկնման հիմնական երկրների աշխատաշուկաները նույնպես պատրաստ չեն ընդունել նրանցից շատերին: Հետևաբար, այդ մասնագետներից ոմանք որոշում են կատարել պակաս հմտություններ պահանջող աշխատատանք արտերկրի շուկաներում:

- Մննդի տեխնոլոգիաների, տեքստիլի և թեթև արդյունաբերության մասնագետների ցածր միգրացիոն ակտիվության (5-6%) հիմնական պատճառն այդ մասնագիտական խմբերի սեռային կազմն է. այդ մասնագետների ճնշող մեծամասնությունը կանայք են: Թեև նրանց ավելի քան 40%-ը Հայաստանում գործազուրկ են, արտերկրում աշխատանք գտնելու հնարավորությունները նրանց համար խիստ սահմանափակ են:

Հիմնականում պայմանավորվելով աշխատուժի տեղական շուկա մուտքի հնարավորությունների բացակայությամբ և ցածր աշխատավարձերով, **միգրացիոն գործընթացը շարունակում է ներգրավել մարզային քաղաքների և գյուղերի բնակիչներին՝ ամենաքիչն ազդելով Երևանի վրա:**

- Աշխատանքային միգրացիայի հոսքի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցրել Հայաստանի գյուղական բնակչությունը (44%): Աշխատանքային միգրանտների 23%-ը՝ Երևանի, իսկ մեկ երրորդը՝ այլ քաղաքային բնակավայրերի բնակիչներ էին: Մշտական միգրանտների 45%-ը եղել են մարզային քաղաքներից, 28%-ը՝ Երևանից, իսկ 27%-ը՝ գյուղական բնակավայրերից: Ուսանող միգրանտների մեծ մասը (58%) Երևանի բնակիչներ էին, և միայն 8%-ն էին գյուղական բնակավայրերից:
- Աշխատանքային միգրացիայի տեմպն ամենաբարձրն էր Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնում, Վայոց Ձորում և Տավուշում: Մշտական միգրացիայի մեջ առավել ակտիվ էին Գեղարքունիքը և Տավուշը, մինչդեռ Երևանից և Կոտայքից էր ուսանող միգրանտների մեծ մասը: Ընդամուր առմամբ, միգրացիոն ակտիվության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Գեղարքունիքում. 2002-2007 թթ. ընթացքում արտաքին միգրացիոն գործընթացներին մասնակցել է այս մարզի բնակչության 15%-ը:

## ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԿԱՄՈՒՏԸ ՄԵԿՆՄԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հետազոտությամբ պարզվեց, որ միգրանտների ճնշող մեծամասնությանը (90%) հաջողվել է արտերկրում աշխատանք գտնել: Հայաստանի բնակչության զբաղվածության վերաբերյալ վիճակագրական տվյալների հիման վրա կարելի է պնդել, որ նրանց առնվազն **30%-ը գործազուրկ կլինեն, եթե նախընտրեն մնալ Հայաստանում:** Բացի այդ, հետազոտությամբ պարզվեց, որ **արտերկրում աշխատող միգրանտների աշխատավարձերի մակարդակն առնվազն երեք անգամ ավելի բարձր է, քան նրանք կկարողանային վաստակել Հայաստանում:**

- 2002-2007 թթ. ժամանակահատվածում արձանագրվել է Հայաստանից արտագաղթի մոտ 460,000 դեպք: Ղեկավարի 90%-ի պարագայում միգրանտներն արտերկրում գտել են աշխատանք: Զբաղվածության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է աշխատանքային միգրանտների շրջանում. նրանց միայն 4%-ը չի կարողացել աշխատանք գտնել ժամանման երկրում: Թեև մշտական միգրանտների միգրացիայի հիմնական պատճառն աշխատանք գտնելը չի եղել, նրանց մեծ մասը (60%) կարողացել է նաև աշխատանք գտնել: Զբաղվածության ցուցանիշը բավական ցածր է ուսանող միգրանտների շրջանում (28%): Սա քիչ թե շատ հասկանալի է, հաշվի առնելով ուսումը և աշխատանքը համադրելու կամ ավարտելուց հետո ընդունող երկրում կացությունը երկարաձգելու հետ կապված դժվարությունները:
- 2002-2007 թթ. արտերկրում աշխատանքով ապահովված միգրանտները վաստակել են ամսական միջինը 660 ԱՄՆ դոլար: Համեմատության համար նշենք, որ հետազոտության արդյունքներով, 2008 թ. սկզբի դրությամբ Հայաստանի զբաղված բնակիչը վաստակել է ամսական միջինը 66,000 դրամ (մոտ 220 ԱՄՆ դոլար): Թեև երկու դեպքերում էլ եկամուտների մակարդակը, ամենայն հավանականությամբ, թերհայտարարագրվել է, այդ տվյալները կարելի է օգտագործել համեմատություններ անելու համար:

Հաջորդ հարցը վերաբերում է զբաղվածության տեսակին և ոլորտին: **Միգրանտների ճնշող մեծամասնությունը, անկախ մասնագիտացումից, կատարել է կապույտ օձիքավորի աշխատանք շինարարության ոլորտում:** Փաստորեն, հմուտ միգրանտների մեծամասնությունը,

բացառությամբ ճարտարագետների, շինարարության և տրանսպորտի մասնագետների, չի կարողացել իրենց մասնագիտացմանը համապատասխանող աշխատանք գտնել: Դրա պատճառով սահմանափակվում է Հայաստան տեղափոխվող գիտելիքների, հմտությունների և տեխնոլոգիաների հնարավոր շրջանակը, որի պատճառով կարող է սահմանափակվել նաև միգրացիայի դրական ազդեցությունը երկրի զարգացման վրա: Այնուհանդերձ, միանգամայն հասկանալի է, որ միգրանտների մեծ մասն ընտանիքի համար ապրուստ վաստակելու նպատակով պատրաստ է եղել կատարել առկա ցանկացած աշխատանք, և չպետք է թերագնահատել նրանց լուրման Հայաստանում աղքատության կրճատման գործում:

- Միգրանտների ճնշող մեծամասնությունը (80%) ստանձնել է որակավորված կամ չորակավորված կապույտ օձիքավորի աշխատանք (համապատասխանաբար 57% և 24%): Միգրանտների 70%-ն աշխատել է շինարարության ոլորտում: Շատ ավելի սակավաթիվ են եղել այն միգրանտները, ովքեր աշխատանքի են անցել առևտրի (10%), տրանսպորտի (6%) կամ արտադրության (5%) ոլորտներում, կամ մատուցել են մասնավոր ծառայություններ, օրինակ՝ խնամել են երեխաների կամ տարեցների (4%):

## ՄՇՏԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԵՏԴԱՐՁԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հետազոտությամբ հաստատվեց, որ 2002-2007 թթ. ժամանակահատվածում **միգրանտների ճնշող մեծամասնությունը վերադարձել է Հայաստան առնվազն մեկ անգամ, և միգրացիայի տարեկան բացասական սալդոն մեծ չի եղել:** Հետազոտությամբ պարզվեց, որ հետդարձի ցուցանիշը մի փոքր ավելի ցածր է եղել նրանց շրջանում, ովքեր Հայաստանից մեկնել էին նախքան 2002 թվականը: **Երկու դեպքերում էլ, սակայն, հետդարձը դեպի Հայաստան ունեցել է ավելի շատ ժամանակավոր, քան մշտական բնույթ:**

- 2002-2007 թթ. ժամանակահատվածում միգրանտների 80%-ից ավելին վերադարձել է Հայաստան առնվազն մեկ անգամ: Հետդարձի ցուցանիշը մի փոքր ավելի ցածր է եղել նրանց շրջանում, ովքեր

Հայաստանից մեկնել են նախքան 2002 թվականը. նրանց 64%-ն է վերադարձել Հայաստան 2002-2007 թթ.:

- Միգրանտների 24%-ը կամ մոտավորապես 55,000 մարդ 2002-2007 թթ. ընթացքում վերադարձել է Հայաստան և մոտ ապագայում չի պատրաստվում կրկին մեկնել հանրապետությունից: Այլ կերպ ասած, Հայաստանից մեկնած յուրաքանչյուր չորրորդ միգրանտը կարող է տեղավորվել «մշտապես վերադարձողների» խմբի մեջ, եթե ենթադրենք, որ մշտական հետդարձի ցուցանիշը հաշվարկվել է այն միգրանտների թվի հիման վրա, ովքեր չեն պլանավորում մեկնել Հայաստանից առնվազն 2008 թվականին: Ավելի երկարաժամկետ կանխատեսումներ, կարծես, անհրաժեշտ չեն, քանի որ հարցվողները դժվար թե հստակ իմանան ավելի հեռավոր ապագայում Հայաստանից մեկնելու իրենց մտադրությունները: Միգրանտների ևս մեկ քարրորդը (25%) [դեռ] չի վերադարձել Հայաստան և կարող է համարվել մշտական միգրանտ:
- Հետազոտությունն արձանագրեց միգրացիայի փոքր բացասական սալդո 2002 և 2006 թվականներին (համապատասխանաբար 3,000 և 7,000 մարդ), և փոքր դրական սալդո 2003 և 2004 թվականներին (համապատասխանաբար 1,000 և 3,000 մարդ): 2005 թ.-ին մեկնումների և ժամանումների քանակը գրեթե հավասար էր: Թեև 2008 թ. տարեկազբի դրությամբ արտերկրում էին գտնվում մոտ 91,000 միգրանտներ, տվյալները թույլ են տալիս ենթադրել, որ նրանցից քչերն են այնտեղ մշտական բնակություն հաստատելու:

### **Ժամանակավոր հետդարձի ցուցանիշներն ամենաբարձրն են**

**Ռուսաստանից:** Մի կողմից, դա պայմանավորված է դեպի Ռուսաստան ժամանակավոր միգրացիայի շատ բարձր տեմպերով: Մյուս կողմից, տրանսպորտային համեմատաբար ցածր ծախսերի և Ռուսաստանի Դաշնության հետ վիզային ռեժիմի բացակայության շնորհիվ միգրանտները կարողանում են հարաբերականորեն ավելի հեշտ վերադառնալ Հայաստան և այցելել հարազատներին: Հետդարձի ցուցանիշների հարաբերակցությունն էապես փոխվում է, երբ դիտարկվում են միայն մշտական վերադարձի ցուցանիշները: Թեև Ռուսաստանը վերադարձողների բացարձակ թվի իմաստով շարունակում է «զլիսավորել» պետությունների ցուցակը, **Հայաստանում մշտական բնակություն հաստատելու նպատակով Ռուսաստանից**



## **վերադարձողների տոկոսաբաժինն ընդհանուրի մեջ ակնհայտորեն ամենացածրն է մեկնման բոլոր երկրների շարքում:**

- Ռուսաստան մեկնած միգրանտների 82%-ը 2002-2007 թթ. ընթացքում առնվազը մեկ անգամ վերադարձել է Հայաստան: Վերադարձի ցուցանիշը բարձր է եղել նաև Ուկրաինա և ԱՊՀ այլ երկրներ մեկնած միգրանտների պարագայում (73-76%): Եվրոպա և ԱՄՆ մեկնած միգրանտների մեջ վերադարձողները կազմել են ընդամենը 55% և 47%:
- Թեև ժամանակավոր վերադարձի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Ռուսաստան մեկնած միգրանտների շարքում, մշտական վերադարձի դեպքերն ավելի հաճախ դիտարկվել են այլ երկրներ մեկնածների շարքերում: Ռուսաստան մեկնած միգրանտների ընդամենը 11%-ն է վերադարձել Հայաստան՝ մշտապես բնակվելու նպատակով: Մեկնման այլ երկրների պարագայում մշտական վերադարձի ցուցանիշը տատանվում է 14%-ից (Եվրոպա) մինչև 26%-ը (ԱՊՀ երկրներ, բացառությամբ Ուկրաինան): Մշտական վերադարձի ցուցանիշը բավականին բարձր է եղել ԱՄՆ մեկնած միգրանտների դեպքում (20%):

## **ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Հետազոտության արդյունքների հիման վրա հնարավոր եղավ եզրակացնել, որ մշտապես արտագաղթողների և մշտապես վերադարձողների գենդերային կառուցվածքը նույնն է: Այնուհանդերձ, այն **միգրանտները, ովքեր որոշել են մշտական բնակություն հաստատել արտերկրում, ավելի երիտասարդ են, քան նրանք, ովքեր որոշել են վերադառնալ Հայաստան:** Դա նշանակում է, որ միգրանտների մեծ մասը մշտապես արտագաղթելու մասին որոշումը կայացնում է ավելի երիտասարդ տարիքում, մինչդեռ Հայաստան վերադառնալու որոշումը սովորաբար կայացվում է ավելի ուշ, թերևս՝ ժամանակավոր աշխատանքային միգրացիայի մի քանի տարիներից հետո:

- Թե՛ մշտական միգրանտների, և թե՛ մշտապես վերադարձողների 72%-ը տղամարդիկ են, 28%-ը՝ կանայք: Ժամանակավոր վերադարձողների մեջ կանայք կազմում են 15%-ը: Մշտական միգրանտների միջին

տարիքը 35 է, ժամանակավոր վերադարձողներինը՝ 38, իսկ մշտապես վերադարձողներինը՝ 41:

Թեև պարզվել է, որ կրթության մակարդակը որևէ ազդեցություն չունի միգրացիայի և հետդարձի ցուցանիշների վրա, միաժամանակ պարզվել է կարևոր մի հանգամանք. **մշտական միգրանտների, ժամանակավոր և մշտապես վերադարձողների միջև էական տարբերություններ կան մասնագիտացման առումով:** Դա մեծապես պայմանավորված է Հայաստանում և արտերկրում աշխատուժի առաջարկի և պահանջարկի առանձնահատկություններով, ինչպես նաև տարբեր մասնագիտական խմբերի միգրացիոն օրինաչափություններով:

- Մասնագիտական կրթություն ունեցողները գրեթե հավասար մասնաբաժին ունեն մշտական միգրանտների, ժամանակավոր և մշտապես վերադարձողների խմբերում (39-40%): Դա նշանակում է, որ կրթության մակարդակը, ըստ երևույթին, չի ազդում միգրանտների՝ վերադառնալու որոշումների վրա, ինչպես նաև, որ կրթության ավելի բարձր մակարդակ ունեցողների շրջանում արտահայտված միտում չկա՝ Հայաստանից արտագաղթելու մշտապես:
- Մշտական միգրանտների և ժամանակավոր վերադարձողների խմբերում ամենամեծ տոկոսային կշիռն ունեն տարբեր ուղղվածության տնտեսագետները, սակայն նրանցից շատ քչերն էին դիտարկել մշտապես Հայաստան վերադառնալու հնարավորությունը: Ի հակադրություն, առողջապահության և կրթության ոլորտի մասնագետները բավական ակտիվ էին մշտական միգրացիայի և մշտական հետդարձի հոսքերում, սակայն շատ ցածր էր նրանց ժամանակավոր հետդարձի ցուցանիշը:

## ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հետազոտությամբ հնարավոր եղավ մի քանի կարևոր եզրակացությունների հանգել Հայաստանում վերադարձողների տնտեսական ակտիվության վերաբերյալ: Առաջին, **մշտապես վերադարձողների մեծ մասը փորձում և կարողանում է հետդարձից հետո աշխատանք գտնել Հայաստանում:** Դա կարող է մեծացնել կրկին արտագաղթելու փոխարեն

Հայաստանում մնալու՝ նրանց շահագրգռվածությունը: Երկրորդ, **Ժամանակավորապես վերադարձողների համեմատաբար բարձր տնտեսական ակտիվությունը վկայում է, որ նրանց մեծ մասը փաստացի փնտրում է զբաղվածության հնարավորություններ Հայաստանում:**

Նրանց մեծ մասին դա առայժմ չի հաջողվել: Այնուհանդերձ, կարծում ենք, թե սխալ չի լինի ենթադրել, որ Հայաստանում աշխատանք գտնելը կարող է լուրջ խթան լինել ժամանակավորապես վերադարձողների համար, որպեսզի նրանք որոշեն այլևս չարտագաղթել և մշտապես բնակություն հաստատել Հայաստանում: Երրորդ, մշտապես վերադարձողների և միգրացիոն գործընթացներին չմասնակցածների զբաղվածության մակարդակների միջև տարբերությունը կարող է հանգեցնել եզրակացության, որ **միգրացիոն փորձը մեծացնում է աշխատանք որոնողների շանսերը Հայաստանի աշխատաշուկայում:**

- Վերադարձողների՝ Հայաստանում ունեցած զբաղվածության մասին տվյալները վկայում են, որ մշտապես վերադարձողների մոտ 60%-ը 2008 թ. տարեսկզբի դրությամբ Հայաստանում ունեին աշխատանք: Բնակչության մնացած մասի շրջանում (այսինքն՝ նրանց, ովքեր չեն մասնակցել արտաքին միգրացիոն գործընթացին) զբաղվածության ցուցանիշը կազմել է 43%:
- Հարցման պահին Հայաստանում գտնվող ժամանակավորապես վերադարձողների մոտ 70%-ը կամ աշխատում էր (46%), կամ աշխատանք էր փնտրում (54%):
- Խորին հարցազրույցների ընթացքում մշտապես վերադարձածների մեծ մասը հավաստել է, որ միգրացիայի փորձն իրենց օգնել է բարելավել աշխատանքային հմտությունները, կատարելագործել կարողությունները՝ բարձրացնելով իրենց մրցունակությունը հայաստանյան աշխատաշուկայում:

Հետազոտությամբ հաստատվեց նաև, որ **վերադարձողների աշխատավարձի մակարդակը որոշ չափով ավելի բարձր է, քան ընդհանուր բնակչության աշխատավարձը:** Վերադարձողների եկամուտների ավելի բարձր մակարդակը կարող է պայմանավորված լինել նրանց հմտությունների ավելի բարձր մակարդակով: Հաջորդ հնարավոր բացատրությունն այն է, որ վերադարձողների մեծ մասն

աշխատում է մասնավոր հատվածում, որտեղ աշխատավարձերը շատ ավելի մրցունակ են, քան պետական հատվածում: Ավելին, վերադարձողներից շատերն աշխատանք գտել են Հայաստանի շինարարության ոլորտում, որում վերջերս զգացվում է աշխատուժի պակաս, որի հետևանքով շինարարության ոլորտում հմուտ աշխատուժ ներգրավելու համար ստիպված են եղել բարձրացնել աշխատավարձերի մակարդակը:

- Ժամանակավոր և մշտապես վերադարձածների ամսական միջին եկամուտը հաշվարկվել է մոտ 72,500 դրամ (մոտ 242 ԱՄՆ դոլար), որը մոտ 10%-ով ավելի բարձր է, քան ոչ միգրանտների եկամուտը (66,000 դրամ կամ 220 ԱՄՆ դոլար):
- 2002-2007 թթ. արտաքին միգրացիոն գործընթացներին չմասնակցած անձանց 47%-ը զբաղված է պետական հատվածում: Ի հակադրություն, մշտապես վերադարձողների 58%-ը և ժամանակավոր վերադարձողների 73%-ը աշխատում են մասնավոր հատվածում:
- Հետազոտության արդյունքում զգալի տարբերություններ արձանագրվեցին վերադարձողների և ընդհանուր բնակչության զբաղվածության ոլորտների միջև: Դ-ա հիմնականում վերաբերում է վերադարձողների և ոչ միգրանտների՝ շինարարության ոլորտում զբաղվածության մակարդակին: Սինչդեռ մշտապես վերադարձողների 17%-ը և ժամանակավոր վերադարձողների 22%-ը աշխատանք են գտել շինարարության ոլորտում, միգրացիոն գործընթացներին չմասնակցածների շրջանում շինարարության մեջ ներգրավվածների տոկոսը կազմում է ընդամենը 7%:

## ՎԵՐԱԴԱՐՁԻ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերադարձողների հետ անցկացված խորացված հարցազրույցները հիմք են տալիս պնդելու, որ **հետդարձը Հայաստան մեծ մասամբ պայմանավորված է եղել մեկնման երկրում առկա «վանող» գործոններով, այլ ոչ՝ Հայաստան «ձգող» գործոններով:**

- Վերադարձողների մեծ մասի հետդարձի որոշումը, ըստ երևույթին, պայմանավորված է եղել այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են

աշխատանքը կորցնելը (կամ, ուսանող միգրանտների դեպքում, ծրագրի ավարտը), օտարատյացության աճը և/կամ սոցիալական արժեքների անընդունելիությունը (հատկապես Ռ-ուսաստանում):

- Իհարկե, եղել է նաև մեկ կարևոր ձգող գործոն, այն է՝ կարոտը, ինչպես նաև արտերկրում գտնվող ընտանիքի հետ վերամիավորվելու անկարողությունը կամ նման ցանկություն չունենալը: Այնուհանդերձ, մշտական հետդարձը հազվադեպ է պայմանավորվել միայն այդ պատճառով: Միգրանտների թվում ավելի շատ են նրանք, ովքեր որոշել են շարունակել միգրացիան՝ հարազատներին այցելելու նպատակով 9-10 ամիսը մեկ վերադառնալով Հայաստան:

Որակական հետազոտության արդյունքները հիմք ընձեռեցին կրկին պնդելու, որ վերջին տարիներին **Հայաստանից մեկնածների որոշումը կայացվել է ռացիոնալ և հիմնականում տնտեսական պատճառների, այլ ոչ՝ երկրից հեռանալու ցանկության հիման վրա:**

- Միգրանտների ճնշող մեծամասնությունը երբևէ մտադրություն չի ունեցել մշտապես հեռանալ Հայաստանից: Նրանց մեծ մասը շարունակում է զբաղվածության լավ հնարավորություններ փնտրել Հայաստանում, իսկ նրանք, ովքեր գտնում են այդպիսի հնարավորություններ, վերադառնում են՝ գրեթե առանց վարանելու:

Հայաստանում վերադարձողների վերաինտեգրման հետ կապված խնդիրների մեծ մասը, ըստ երևույթին, պայմանավորված է **նրանց ակնկալիքների և Հայաստանում նրանց սպասող իրականության միջև անհամապատասխանությամբ:** Վերջինս հաճախ դառնում է կրկին արտագաղթելու պատճառ: Հետդարձը խրախուսելու համար, անկասկած, կարևոր է միգրանտներին թարմ տեղեկություններ տրամադրել երկրում առաջացող նոր հնարավորությունների մասին: Այնուհանդերձ, պակաս կարևոր չէ նրանց օբյեկտիվորեն տեղեկացնել երկրի առջև, հատկապես աշխատաշուկայում, ծառայած խնդիրների մասին: **Վերադարձը խրախուսելու և կրկնակի արտագաղթը կանխելու ջանքերը հավասարակշռելը, որքան էլ դա դժվար լինի, պետք է գերակայություն դառնա քաղաքականություն մշակողների համար:**

- Վերադարձողների հետ անցկացված խորին հարցազրույցները ցույց տվեցին, որ տարիներ շարունակ արտերկրում գտնվածներից շատերն

ակնկալում էին, որ Հայաստանը բարեփոխված և զարգացած կլինի: Վերադառնալով Հայաստան՝ նրանք, անշուշտ, նկատել են դրական տեղաշարժ, սակայն ոչ այն մասշտաբի, ինչ իրենք էին ակնկալում:

- Հայաստանում վերադարձողների առջև ծառայող լրջագույն խնդիրներից է նրանց հմտություններին համապատասխանող աշխատատեղերի բացակայությունը, աշխատավարձի ակնկալվածից ավելի ցածր մակարդակը և մասնագիտական աճի հնարավորությունների բացակայությունը: Դա ամենաշատը վերաբերում է ավելի երիտասարդ միգրանտներին, մասնավորապես՝ ուսումնական ծրագրերի ավարտից հետո Հայաստան վերադարձող ուսանող միգրանտներին: Նրանց մեծ մասը պնդում է, թե հայաստանյան գործատուները այնքան էլ չեն արժևորում իրենց ունեցած գիտելիքներն ու հմտությունները, և որ առկա «զավ» աշխատատեղերը խիստ սակավաթիվ են: